շակ: Նա նա եւս նոցայ զգաւառն Ծարօնոյ
իշխանութեամբ՝ զոր ինքեանք շինեցին, կո-
չեալ զանուն նորա Վիշապ: Ուրք եկին
յԱշիշատ, և կանգնեցին զկուռսն զայ-
նոսիկ՝ յանուն կռոցն, զոր 'ի Հնդիկս պաշ-
տէին: Նա յետ ժե ամաց սպան Թագաւորն
զերկոսին եղբարսն՝ ոչ գիտեմ վասն էր.
և եւս զիշխանութիւնն երից որդւոց նոցա՝
Կուառայ, Վեղտեայ, և Հուենայ: Կո-
ւառս շինեաց զաւանն Կուառայ՝ յանուն
իւր: Նա Վեղտես շինեաց 'ի դաշտի անդ-
զաւան, և կոչեաց զանուն նորա Վեղտի:
Նոքա Հոռեան շինեաց իւր զաւան 'ի գաւա-

ռին Պալատնեաց, և կոչեաց զանուն նորա Հռոմանոս։ Եւ յետ ժամանակի զխորհուրդ ի մէջ առեալ երիցն՝ ելին ի լեառն Արքեայ, և գտին զայն տեղին բարեբախտ և գեղեցիկ. որոյ ընդարձակութիւն էր, և հովասուն, խոտով և փայտի առատաձեռն. և շինեցին անդ պատակերատ, և կանգնեցին զերկուս կուռս. զմին յանուն Վիսանէ, և զմիւսն յանուն Վեմոտեայ. և եւ տուն նոցա՝ի սպասաւորութիւն զազգն իւրեանց։ Վիսանէ զի գիսաւոր էր, վասն այնորիկ սպաշտօնեայք նորա զգեաս էին թողեալք. զոր հրամայեաց իշխանն կտրել։ Եւ ազգն այն՝ յորժամ յետոյ դարձան՝ի Վրիստոս, էին կատարեալք՝ի հաւատն. և գհարցն իւրեանց չիշխէին յայտնի ունել. վասն որոյ խաբէութեամբ զայս հնարեցան, զծամ միայն թողուլ՝ի գլուխս իւրեանց. զի զայն տեսեալք՝ յիշեսցեն զպաշտօն պըղծութեան իւրեանց։ Պատմ.

ԲՈՒԶԱՆԴ, BYSANTIUS.

in the fourth Century.

Իբրև չոքան տարան յերկիրն Պարթից զաւինայն գերութիւնն Նայոց. և զՕրմիզդ Նրէց Պատաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի Թագաւորին Պարթից Շապհոյ։ Եւ նայէր Թագաւորն Շապուհ, և տեսանէր զերկեցն Օրմիզդ՝ այր բարձր և անձնեայ, և՝ի տիոց մանուկ. և հերք գլխոյն ալեւոր

րեալ եին. այլ մորուքն դեռ տակաւին սեաւ
և՛ կային։ Ապա յորժամ զառաջինն խօսել
սկսաւ, ասէ. Ցեսանէք զառնդ զայդր զյա-
րուքիւնն. քանզի՛ ի հերաց այսր երևի,
թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են,
և մորուքն սեաւ։ Ասէ Այրէց տուեալ պա-
տասխանի՝ ասէ, թէ քեզ պէտ իցէ՝ այլ
զինչ կամիս խօսել և առնել, խօսեաց. այլ
վասն այդորիկ գիտեա՛, զի յիրաւունս սպի-
տակացեալ են նախ հերքս. զի բազում ա-
ւուրբք երից են՝ գոնեայ Հնգետասան ամօք
քան զմորուսն նախաթոյս են։ Պատմ. երէս.
264.

ԵՋՆԻԿ, ESNACIUS.

in the fifth Century.

Հայեցեալ (Պարսից քեշակարկատքն)
յազգն Այրիական՝ թէ իգասեր էր, ըստ
նմին նորին մեղկ բարուցն նմա օրէնս (կոկը-
ցեցին). զի յորժամ զԱստուածոցն իւրեանց
լսիցեն, թէ յանարժան խառնակութիւնս
մտաբերեցին, և նոքա նոցին նմանեալք՝
զնոյն անառակութիւնս անխտիր գործես-
ցեն։ Այրեա. 109.

Հեթանոսութեան սկիզբն՝ ի Վերուքայ
ժամանակաց անտի եղև. զի որ լաւ ոք ե-
կեալ յաշխարհ մեռանէր, վասն յիշատակի
քաջութեանն՝ զպատկերն երանգօք՝ ի նկա-
րու հանէին. և անտի ուսեալ ախմարաց՝
տակաւ՝ ի պաշտօն առնուին։ Այս կռոց դրօ-

չելոց հանդամանք առ Մատթայիւ Տարբ Ա-
բահամու։ Եւ անտի իւրաքանչիւր ոք իւ-
րով արուեստիւ զնոյն դրօշիր. դարբինն
դարբնութեամբ, և հիւանն հիւանութեամբ,
արծաթագործն և պղնձագործ, և քարակուռ
և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ։ Եւ
անտի կարգեալ հասանէր յԵգիպտացիս, և
՚ի Հաբեղնացիս, և ՚ի Վռիւգացիս, և ՚ի
Վիճնիկեցիս գործ դրօշագործութեան և
խորհուրդք նորին։ Եւ ապա ՚ի Հելլենս՝
առ Կրոպեաւն. և ևս յետոյ առաւել աս-
տիք առ Կրոնաւն, և Մեսս, և Վիսս, և
Ասպողնիս, և առ այլովք բազմօք՝ զորս մի
ըստ միոջէ Աստուածս անուանէին։ Եւ
Հելլենք կոչին Յոյնք յառնել միոջէ՝ որում
Հելլենոս անուն էր յԱշտադացւոց աշխար-
հին։ Ասացեալ սյլք ասեն, եթէ ՚ի Հիթեն
ոմն՝ որ յԱթենս բուսաւ իւրովի. վասն զի
Հիթենի Յունարիկն Աչէա կոչի։ Ասացեալ
Յոյնք ՚ի Յաւանայ՝ որ էր մի յառաջնորդաց
աշտարակագործութեանն. վասն որոյ Ա-
թոռս սմենեքեան կոչին՝ յաղագս բարբառոյն
բաժանելոյ. քանզի բաժանումն Յունարիկն
Ասերիսմոս կոչի։ Ար» 188-189.

ԿՈՐԻՒՆ, CORION.

in the fifth Century.

Յետ այսորիկ ուշ եդեալ երկոցունց երա-
նելեացն (Ահակայ և Մեսրովպայ) զիւր-
եանց ազգին զդպրութիւնն առաւել յար-

դել և դիւրացուցանել՝ ձեռն ’ի գործ արկանէր ’ի թարգմանել և ’ի գրել Աստծն ի սահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն։ Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յԱշակերտացն յուղարկել ’ի կողմանս Սորուոց ’ի քաղաքն Դեսպացուց, զՅովսէփ՝ զոր ’ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Հնչիկ անուն՝ յԱրարատեան գաւառէն ’ի Կողբ գեղջէ. զի յԱսորական բարբառոյն զնոցին Հարցն սրբոց զաւանդութիւնս Հայերէն դրեալս դարձուսցեն։ Իսկ Մարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, և կատարեալ զՀրամանսն, և առ սպատուական Հարսն առաքեալ՝ անցեալ գնային ’ի կողմանս Յունաց։ Որ և ուսեալք և տեղեկացեալք թարգմանիչս կարգէին ըստ Հելլենական լեզուին։ Այս յետ ժամանակի ինչ ընդմէջ սնեցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ’ի Հայաստան աշխարհէս դիմել ի Կոստանդնուպաւլիս Յունաց, որ և Կոստանդնուպաւլիս անուն էր, և երկրորդն Կորիւնս. և մնալ ուսեալ յարէին յՀնչիկն իբրև առ ընտիր լեզուին մնդակից ’ի Կոստանդիական քաղաքին. և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն զնդիրն վճարէին։ Որոց յետ այնորիկ՝ հաստատուն օրինակօք Աստուածատուր գրոցն, և բազում ընդհատիր Հարց յետ այնր ուսանդութեամբք, և Եկեղեցական, և Քրեստոսական կանոնօք գայլն երեւելով յաշխարհին Հայոց. և առաջի դնեին Հարցն զբերեալ Կոտակարանն Հեղեցւոյ սրբոյ։ Իսկ երանելոյն Սահակայ զՀե-

ղեցական գրոց գումարութիւնն կանխաւ Յունական բարբառոյն ի Հայերէն դարձուցեալ, և բազում և զՀայրապետական սըրբոց զՀմարիտ վիմաստութիւնն, դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ կցնակաւ կյատաջագոյն զյանկարծագիւտ գիւթա-նակի զԹարգմանութիւնս՝ հաստատեր ճըշմարիտ օրինակօք բերեալք. և շատ և մեկնութիւն գրոց Թարգմանեին. և այնպէս զամենացն ժամանակս իւրեանց յԱԹերոյաւածս գրոց ծախէին Հարքն զտիւ և զգիշեր. և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընԹերակայից լինէին: Պապ.

ԵՂԻՇԷ, ELISEUS.

in the fifth Century.

Անիմք զանսուտ յիշատակարանն զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զՀրտպել՝ անցին և տիրեցին և Հսխացոյց կողմանցն, ի սահմանացն Հսաերայ մինչև ի կողմանս Պադերոնի. և ոչ ոք գտաւ ատամբակեալ, և ելանել ըստ ձեռն նոցա: Հս յայնչափ մեծ իշխանութեան դաստակերտէ՝ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանեին: Ասն որոյ և նախնին մեր Ցրդատոխոս՝ յիշեալ զառաջինն սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի Հայրապետական մարդախողխող Հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ մնաւ ի յերկիրդ Յունաց. և ի ձկնջ Թա-

դաւորեցուցեալ՝ տիրեր հայրենի աշխարհ։ Նոյնպէս և զՀաւատան որ ի Վրիստոս՝ ընկալեալ ի սուրբ Պախկոսապետէն ի Հռոմէ՝ լուսաւորեաց զնաւարային կողմանս Իւսխոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել և հանել խաւարասէր որդիքն Լևեվայ ... Ըստ իրաւի յանդիմանն եղեն մեծի Թագաւորին, և ընթերցան զգիր պատուանաց աշխարհին Հայոց, և զիշատուա կարանս նախնեացն, քաղում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան. որ զնոյն ուխտ գըտանէին հաստատութեամբ .... Ըստ մինչդեռ երանելին Գրիգորս ... հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ ... ի նմին ժամանակի անդրէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա ... Ըստ Թագաւորէր փոխանակ նորա Արշակիանոս կոյսր ... Ընդ նմին այս՝ լաւ համարէր զուխտն Հեթանոսաց պահել վանն մարմնական խաղաղութեան՝ քան պատերազմակից լինել Հուխտին Վրիստոնէութեան։ Պապ. էրէս 70-72։

Ի սա առաջին կարգի օրինացն արքունի արքանիներ (Ի ասակ իշխան) զպատուական հանդերձն՝ զոր ունէր ի Թագաւորէն. կապէր զպատուրսն, և զնոյրն ոսկեղէն դնէր ի վերայ. և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք՝ ընդ մէջ իւր ածէր. զգինդս յականջս, և զգումարտակն ի պարանոցի, և զամոյրսն զթիկամբքն. և զամենայն օրէնն պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր Ի Հրքունիս։ Պապ. էրէս. 136։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, MOSES CHORENENSIS

in the fifth Century.

Մովսէսի Խորենացւոյ յաղագս մերոյս ակզբան յայսմ բանիւ՝ Ահակայ Հատրուտունւոյ խնդալ։ Օ անսպառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ գլխորհայն, և զանդուլ ոգւոյն ի վերայ քո իմացուածոյդ շարժմունս՝ ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն. որ և սիրելի իմոց իսկ ախորժակաց է, առաւել և՝ սովորութեանցս։ Ասն որոյ՝ և ոչ միայն դովել արժան է զքեզ, այլև ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի։ Օ՛ի եթէ վասն բանին մեք՝ որպէս ասի՝ պատկեր Աստուծոյ. և զարձեալ՝ առաքինութիւն. քանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բարբառ պահելով զկայծակն, զարդարեաս զբանն. որով մնաս առ ի լինելն պատկեր. ի ձեռն որոյ և զայսորիկ զակզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ և չափաւոր մտածութեամբ յայսոսիկ մտելալ և զակատեալ Աստուծոյ. որով տեսանեմք և զայս. զի եթէ որք յառաջ քան զմեզ, և կամ առ մեօք եղեն Հարուստք և Իշխանք աշխարհիս Հայոց՝ ոչ ընդ ձեռամբ անկելոյ իւրեանց արդեօք գտեալոց իմասա-

նոց զայսպիսեացս հրամայեցին կարդել զլիշատակս քանից, և ոչ արտաքուստ ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից. և քեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք. ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախագունից Հանապէս վէհագոյն, և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսիս պատկանաւոր դնել յարձանագրութիւնս քանից։ Պաղատս որոյ հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն, անմահ ի լիշատակ թողուլ զայս քեզ, և որ վկնի քոյինքն են գալոց ազգք։ Օ և ազգի ևս նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն ի քանս, և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և ի մեծամեծ և ի բազում գործս արժանաւորս. զոր յիշատակեսցուք ի կարդի պատմութեանս՝ յորժամ զորդի ի հօրէ ծննդաբար ներով ազգաբանիցեմք զբովանդակն։ Նակ զՀայաստանեայցս Նախարարութիւնս զաքմենեցուն զուստն և զդիարդն յայտնելով հաստատօտ, որպէս հաւաստի ի Յունականս ոմանս կայ ի պատմութիւնս։ Յոսեփեան. Պոմպ։

Նա այս յայտնի է ամենեցուն՝ զի դժուարահաւաք և տաժանելի է՝ որպէս գիւտ ժամանակացն ի սկզբանէ մինչև առ մեզ, ասել և գիւտ որդեծնութեան Նախարատ ըսկանացն ծննդոց յերից անտի որդւոցն Նոյի, ցորքան կամք էցեն խուզել ումեք ըստ իւրաքանչիւր դարուց. մանաւանդ զի

Աստուածայնոյն գրոց զիւրմն ի բաց հատեալ յինքն սեփհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեաց, և իւրոցն անարժան կարգելոց բանից։ Որոց մեք սկսեալ ձառեսցուք՝ սրբան ե կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենևիմբ անսուտ։

Գլխ. ա. եւ. կ.

Այս՝ ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստատազուկ։ Ա՛ ի մէջ Հկայիցն քաջ և երևելի լեալ՝ ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն միապետել ի վերայ աստնային Հկայիցն, և Գիւցազանց։ Ա՛ խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեան Բէլայ, ի տարածանելն ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ Հսկայիցն անհոգս խօլաց և ուժաւորաց։ Վանդի անդ մնեգ նեալ այր իւրաքանչիւր սուր ի գոգ ընկերի իւրոյ ձգելով, զանայնն տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բէլայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր։ Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բէլայ՝ կեաս ծնանելոյ զորդի իւր զԱրամենակ ի Բաբելոնի, չուս արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ ե ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դրաստերօք, և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրև երեք հարիւր, և այլովք ընդոծնովք և եկօք յարեցեալովք ի նա, և բոլոր աղխիւ։ Նրթեալ բնակէ ի

լեռնոտին մուտ ՚ի դաշտավայրն, յորում սակաւք ՚ի մնդկականէ յառաջագոյն ցրուեալոցն դադարեալ քնակէին։ Օրս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ չինէ անդ տուն քնակութեան կալուածոց, և տայ ՚ի ժառանգութիւն Կադմեայ՝ որդւոյ Լամեխա կայ։ Գեր։ ՟ա։ գլ։ 9։

Հաւաստի պատմեալ զարդար և զբուն և զառաջին Տիգրանն, և որ չինչ ՚ի նմանէ գործք, սիրելի՝ որպէս լինձ պատմողիս ՚ի մէջ խոց քանից՝ որ լինչ յաղագս Լրուանդեանս Տիգրանայ քանք, եղիցի և քեզ Լնթերցողիդ՝ որպէս այրն և գործք, այսպէս և զնմանէ քանք։ Ա՝ան որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Լրամ, Տիգրան. քանզի ըստ իմ քաջաց ազգք քաջքն, իսկ միջոցք որպէս դէպ ումեք թուիցի կոչել. բայց ըստ դիւցազնութեանց կարծեաց Ճշմարիտ է և ասել մեր, ոչ Լրամազդ ոք, այլ ՚ի կամեցողսն լինել Լրամազդ, չորից և այլոց անուանեցելոց Լրամազդ. յորոց մի է և Արտաշէս ոմն Լրամազդ։ Լյսպէս բազումք անուանեալ Տիգրան՝ մի է, և միայնակ ասի Հայկազանցս, որ զԼժդահակ սպան, և զտուն նորա ՚ի գերութիւն վարեաց, և զՆոյէ մայրն Ա՝ իշապաց. օժանդակ կամաք և յօժարութեամբ զԱՒրբոս ունելով, զիշխանութիւնն Ա՝արայ և Պարսից յինքն յափշտակեաց։ Ա՝որա որդի(ք) Բաբ, Տիրան (և) Ա՝ահագն. զորմէ ասեն Լռասպելք աշխարհս. » Լրկինէր երկին, երկինէր և երկիր, երկինէր և ծիրանի ծով. երկին ՚ի

ծովուն ունէր և գկարմիր եղեգնիկ. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր. և ընդ բոցոյն վազէր պատանեկիկ. նա հուր հերս ունէր, ապա թէ՝ բոց ունէր մուրուս, և աչքունքն էին արեգակունք ։ Եւ զայս երգելով բամբռամբ՝ լուաք իսկ մերովք ականջօք ։ Յետ որոյ և ընդ Ալիշապաց ասէին յերգին՝ կռուեալ նմա, և յաղթեալ. և կարի լինն նմանագոյնս զԱրտակսեայ նահատակութեանցն նմա երգէին ։ Եւ ասէին զսա և աստուածացուցեալ, և անդ՝ ի Ալբաց աշխարհին զտորա չափ հասակին կանգնեալ՝ պատուէին զոհիւք ։ Գիրք. ա. գլ. 30 ։

Այլ զինչ արդեօք տարփանք քեզ և Խուրասպի Ժդահակայ փծուն և անձուն առասպելքն իցեն. և կամ էր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մնաւանդ թէ՝ առաւել վասն անբանութեան առնես աշխատ... Օ զինչ քեզ առայսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք. կամ զինչ պէտք անմիտ և անհանճար բանից յարմարանս. մի արդեօք Յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն, հանդերձ պատճառաւ՝ որք զՀմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեան ունին թագուցեալ ։ Եւ սակս մեզ՝ պատճառս տալ անբանութեան նոցա, և զարդարել զանզարդն ։ Եւ տացուք զայսոսիկ մանգականի քոյ տիոց, և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք. վասն որոյ եղիցի և աստանօր ընտրեալ մեզ զիաւիաղ կամաց քոց ։ Օ պղատոնա-

կանն. Համարձակագոյն այժմ քարքառեմ» Նոկ արդ արդեօք իցէ սիրելոյ այլ ոք ես. քանզի և չէ իսկ ոք «: Վանզի և ի վերայ այլոց անհնարիցն հնարաւոր վասն քո արարեալոց մեր՝ կատարեմք և զայս. զի զորոց ատեմք զբանս և զդործս, և այնոցիկ մանաւանդ թէ լուծն զլսելիս մեր տաղտկացուցանէր, այսօր ձեռամբ իմով շարագրեմ զայնոսիկ՝ միտս անմոռուքեան նոցա տալով. և զկարի վաղուց նոցա իրս, և նոցա անհասանելիս աւասիկ յայտնեմ: Ինչպէս թէ և քեզ յայսոցիկ ուրախութիւն, կամ շահ օգտութեան: Պէտ. ա. յաւելուած:

Պատուալ (Ընտաշխ. ա.) Յիսիա պղընձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԴատեմիդայ, և զՀերակլայ, և զՊողոնի՝ տայ քերել յաշխարհս մեր, զի կանգնեցին Յոմանէիր: Օր առեալ Վոմանպետացն, որ էին յազգէ Ի ահունեաց, զՊողոնին և զԴատեմիդային կանգնեցին Յոմանէիր. իսկ զՀերակլեան զառնապատկերն՝ զոր արարեալ էր Ի Կիւլեայ և Ի Պիսինոսէ Կրետացւոյ՝ զԻ ահագն իւրեանց վարկանելով նախնի, կանգնեցին Ի Տարօն, յիւրեանց սեպհական գեօղն ՅՇուիշատ, յետ մահուանն Ընտաշխի... Նայց և ՅԼլադայ առեալ պատկերս զՊոսէի, զԴատեմիդայ, զԹեհնայ, զՓեստու, զՎրոդիտայ՝ տայ քերել Ի Հայս: Պէտ. Է. կլ. 11:

Ի երստին շինեաց (Անաստուկ զԾբլին զխախտեալն Ի շարժմանէ) պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով և պատուա-

բաւ. և զինքն անդրի ՚ի միջին հաստատեաց, դրամ մի ՚ի ձեռին ունելով. որ նշանակէ այսպիսի ինչ, եթէ՝ ՚ի չինել քաղաքիս ամենայն գանձք ծախեցան, և այս միայն մնաց: Այլ թէ ընդէր Անաստուածն կոչեցաւ՝ աստղն է. քանզի յաւուրս ձմերայնոյ Ճանապարհորդեալ՚ի Նայս քոյր Աբգարու Օդէ, պատահէ բքոց ՚ի լերինն Կորդուաց. ցրուեաց զամենեսեան մերկին, մինչ ոչ գիտել այր զընկեր իւր՝ ընդ ո՛ր վարեցաւ: Իսկ դայեկին նորա Անաստաչ՝ քեռ Խնբրատայ Հազրատունւոյ, կնոջ Խոսրովայ Աբծրունւոյ, առեալ զմանուկն՝ քանզի տղայ էր, եդ ՚ի մէջ ստեանցն իւրոց, ծնալով՚ի ներքոյ ձեռանն զերիս տիւս և զերիս գիշերս. զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի ոմն նորահրաշ սպիտակ Աստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն: Նայց որչափ մեք եղաք հասու ՚ի վերայ, այսպէս է. Շուն սպիտակ ընդ խնդրական լեալ՝ պատահեաց մանկանն և դայեկին. արդ՝ զի կոչեցաւ Անաստրուկ, ՚ի դայեկին զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ՝ Տուրք Անոտաց... Ոչ երուքեան որդի Աշտադարայ դպրի գրեաց զամենայն գործս որ ինչ յաւուրս Աբգարու և Անաստրկոյ, և եդ ՚ի Պհլաւանին Յդեսիա: Պրդ. է. գլ. 33:

Վանզի բազում ինչ գործք յաւուրս Աբգարայ գործեցան, վասն այնորիկ ՚ի բազում ձառս կոտորեցաք՝ զի մի երկայնութիւն բանիցն տալոյ թուղթ ընթերցողացն լինիցի. որ է վերջին ձառս այսպիսի

ինչ. յիշատակեալ և զայլսն ևս որ ինչ ի ժամանակս Աբրահամ։ Օ ի Թէսպէտ և այլն ամենայն՝ զոր յիշատակեցաք յառաջագոյնս ձառիցն, կարգք և առաքինութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Հաղարշակայ և յայլոց առաջնոց Հայոց, այլ ի մեծամեծ արուեստից և գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և առաւատակաց պարապեալք. և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալ, և կամ ոչ հաւանեալք. զի աքաղեաց ասեմ և զԱմոց և զՀարեաց բոլորմանց. քանզի ոչ այսպիսի ինչ Հանաչելոր առ նոսա, այլոց սղգայց վարեալ. և ոչ ի ծուլակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց Հանապարհորդութիւնք, այսինքն՝ կամուրջք, և ոչ գոլմիք ճկանց որոց, այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւն, բայց դոյզն ուրեք. այլ՝ ըստ օրինակի Հիւսիսականաց կողմանց՝ շաղղակերութեամբ, և այլովք այսպիսեօք կեցեալ։ Աս այս ամենայն յօրինի յաւուրս Աբրահամ։ Պէրո. Ը. գլ. 56։

Պրկ (Աբիատոն Փեղեշացի) եթէ ոչբաւ ամբոխութիւնք մեռան ի մահուան նորա (Աբրահամ) սիրեալ կանայք, և հարճք, և մեերիմ ծառայք. և ոչ պակաս շուք քաղմնդիմիս արարին առ ի պատիւ դիոյն քաղաքական կարգօք, և ոչ որպէս զբարբարոսս. դագաղքն էին՝ ասէ, ոսկեղէն, գահոյք և անկողինք քեհեզեայ. և պատմեն Հանն որ զմարմնոյն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէն ոսկւով առաջի

դներ. և զգահոյիւքն շուրջ որդիքն և բազմութիւն ազգականացն. և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և Այահապետքն և Այախարարութեանցն գունդք, և միանգամայն զօրականացն վաշտք. ամենեքեան կազմեալ զինու հանդերձ՝ իբր թէ ի պատերազմ ձակատիցին. և առաջի պղծին ձիս հարկանելով փողս. և զկնիսն ձայնարկու գուսանս սևազգեստ և աշխարող կանայք. և զՀետ բազմութիւն ռամկին: Այս այսպէս տարեալ թաղեցին. և շուրջ զգերեզմանատն լինէին կամաւոր մնհունք, որպէս վերագոյնն ասացաք: Այս սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ: Պ.էր. Ե. գլ. 57:

Ո՞ր ուրեք մեզ զայս Խարդաճան որ Այդեսիայ. քանզի նա յաւուրս վերջնոյ Այնտոնիանոսի երևեցաւ Պատմագրող. որ յառաջն աշակերտեալ էր աղանդին Ագաղեսիանոսի. զոր յետոյ անարգեալ՝ յանդիմանեաց, ոչ գալով ի ձմարտութիւն, այլ՝ միայն ի նմանեն զատուցեալ՝ այլ հերձուած յարդաբեաց յինքեանէ: Ասկայն զպատմութիւնս ոչ ստէ, զի էր այր կորովի բանիւք. որ և առ Այնտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ, և բազում ասացուած արար ընդդեմ աղանդին Մարկիոնացւոց, և Խաշխից, և Ռոդոյ պաշտամանն՝ որ ի մերում աշխարհիս: Այսան զի եկն նա այսր՝ որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ և մուտ նա յամուրն Այնի, և ընթերցաւ զմե-

հենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն՝ յաւելուլ իւր, և որ ինչ առիւրեաւն էին. և փոխեաց զամենայն՝ ի լեզու Ասորի. և ասպա անտի յեղաւ՝ ի Յոյն բան։ Յորում պատմէ՝ ի Աեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման, եղեօրն իւրոյ Աահաժանայ Վրմապետի՝ ի Բագնացն աւանի, որ՝ ի Բագրեւանդ գաւառ։ Բագին՝ ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի՝ ի զոհիցն առնային անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք։ Յորում՝ և զկնի Աաղարշ տօն աշխարհախումբ կարգեաց յսկզբան Ասին նորոյ, ՝ի մուտս Ասասարդի։ Յայսմ պատմութենէ առեալ մեր՝ երկրորդեցաք քեզ՝ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովայ Վերջ։ Ե. գլ. 63։

Աէ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, ուրպէս անքաւք՝ ի մարդկանէ յերկիր անկեալ՝ դի թաւալգլոր խաղային. օրինակ լինի դեղեցիկ ցանցորդի լի ձկամբք յերկիր թափեալ ցանցոյն՝ կայտառին յերեսս երկրին։ Որ տեսեալ թագաւորին Աասլաց՝ մնա հասանէ յարքայն Հայոց, և հանեալ յասպազինէն զնեղդեայ քէմիտասպատ պարանն՝ և կորովութեամբ ձգէ յետուստ կողմանէն ձախ, դիպեցուցանէ յուս ձախոյ կողմանն, և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռն՝ ածել ումիք սուսերաւ. և ինքն վառեալ վերստ պահպանակաւք՝ ուր ուր գծէին նետք. և քանզի ուր կարաց ձեռամբ

չարժել զհսկայն, զլանջիւք երիվարին աւեալ և ոչ այնչափ ինչ շուքաւիեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աձապարեալ հսկային, և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ ի ձահ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն, և զոյդ ընդ պարանոցին զգլուխ երիվարին։ Կուէր։ Ե։ գլ։ 82։

Յեօթն և ի տասներորդ ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ Հայոց սրբոյ Հռաքելոյն Թադէի զՀայրն մեր, և ըստ Հետարանին ծնօղ։ Յետ լուսաւորելոյն զամենայն Հայս լուսով Աստուածգիտութեանն, և ջնջելոյ զխաւար կռապաշտութեանն, և ընկոյց զամենայն կողմանս Արիսկոպոսաց, և Արդասեւոց՝ սիրեաց զերինս, և զամայութիւն, և զհանդարտութեամբ մտաց յինքեան կալ, որպէս զի խաւսեցցի ընդ Աստուծոյ անզգաստապէս..... Ի ծածկեալ (գերեզմանն նորա) ամն քառասն՝ Աստուածային ինն գոգցես տեսչութեամբ՝ որպէս զի Հովիւն զայն ի հնուէն, զի մի ի պաշտօն դեռահասաց Արբարսացս առցի ազգաց։ Իսկ յորժամ սերտեալք հինեցան Հաւատոք կողմանցս այսոցիկ զինի, յետ բազումժամանակաց յայտնեցաւ Աշխատորի ուխտին Կատնիկ անուն կոչեցեալ, և քերեալ եգաւ ի գիւղն Մորդան նշխարքն սրբոյն Կրիգորի։ Այ՝ որպէս ամենեցուն յայտնի է՝ աշխարհաւ Պարթև, գաւառաւ Պահլաւ, յազգէ Թագաւորեալ զատուցելոյ Արշակունի, ի ցեղէ Մուրխնական, ի հօ-

ըն Աստուած կոչեցեալ, յարևելից կողմանէ Աշխարհիս մերոյ Արևելք մեզ ծագեալ, և իմանալի Աստուածային հոգևոր ճառագայթ, ի խորին չարութենէ հաւատացելոցն ելք։ Պետ. Ե. գլ. 88։

Այլ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, և ոչ ընդ ամենայն Յունականն անցանել առակեալ սակս կարճութեան ժամանակին. նաև ոչ մատենագրութիւնք Պիտոդորու հուպ էին առ մեզ, զի ի նմա պահելոյ զակն՝ անմուռաց ընդ քնաւն անցաւնեաք. զի մի ինչ ի միջի մնասցէ ի գլխաւորացն և ի պիտանեաց, և արժանի յիշատակի մերոց Ճ արագրութեանց։ Այլ որչափ ջան և յիշողութիւնք քաւեցին, պատմեցաք ստուգապէս ի Ա Ճծէն Աղեքսանդրի մինչև ի վախճան սրբոյն Տրդատայ՝ յոյժ կանուխ և հեռի ժամանակօք։ Ապա որոյ մի զմեզ այպանեալ պարսաւիցես, զի ահա որ ինչ առ մերովք ժամանակօքս եղեալ, կամ դոյզն ինչ հեռի՝ զրուցեցեալ քեզ անսխալ. Այրդոյդ առնելով գիրս՝ որ ինչ յետ սրբոյն Տրդատայ մինչև ի սպառ Աշխարհաշնեաց ազգին ի Քաղաւորութենէն, և զաւակի սրբոյն Գրիգորի ի Պահանայապետութենէ. հասարակաց խօսիք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի մի երբեմն ոք ի պերճաբանութիւնս գրաւեալ առ փափագ, այլ ճշմարտութեան բանիցս մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ, և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց Հայրենեացս։ Պետ. Գ. գլ. 1։

Ինքնակալ Յուլիանոս ծնունդ՝ ի Կաքայ Ք. ամանզդայ որդի, և յանմահութիւն ձա-
կատագրեալ՝ Տիրանայ մերում Վործակա-
լի խնդալ։ Օրս՝ զոր արձակեցեր ընդ
մեզ՝ առեալ զօրագլխի նոցին՝ դարձաւ. և
մեք բաւական էաք յանթիւ գնդաց մերոց
զՀետ առաքել ունել զնա. այլ թոյլ տուաք
վասն երկուց պատճառաց. առաջինն՝ զի մի՛
ասիցեն զմեզ Պարսիկք՝ եթէ բռնու-
թեամբ, և ոչ կամօք ածեր զզօրսն. երկ-
րորդ՝ փորձել զքո միամտութիւն։ Ընդ
եթէ ոչ՝ ի քումմէ կամաց արար նա զայն,
սատակեացես զնա ազգովիմբ, առ՝ ի չինա-
լոյ նմա մնացորդ. ապա թէ ոչ՝ երդուեալ
՝ի Քրիստոս՝ որ զթածասւորութիւնս չնորհեաց
մեզ, և յԱթենաս՝ որ զյաղթութիւնն, զի
՝ի դառնալն մերում անպարտելի զօրու-
թեանս՝ վանեացուք զքեզ, և զաշխարհդ։
Կէր. Գ. գլ. 15։

Ազդեզանց քաջ և բարձակից Աբեգա-
կան՝ Ճ ապուհ արքայից արքայ՝ ՝ի բարւոք
մերում յիշեալ եղբայր սիրելի Տիրան՝ Նայոց
արքայ, ողջոյն։ Կաք Ձշմարտիս ՝ի վերայ
հասաք, եթէ զսէրն մեր հաստատուն պա-
հեցեր, ոչ գալով ընդ Պարսեր յաշխարհս
Պարսից. այլ և զգունդն զոր հաս ՝ի քէն՝
զՀետ յղեալ կոչեցեր ՝ի բաց։ Եւ զառա-
ջինն զոր արարեր՝ գիտեմք, զի մի ընդ աշ-
խարհ քո անցցէ՝ արարեր, զոր ինքն իակ առ-
նելոյ էր. ուստի և մեր պահապանք գնդին
վաստատեալ՝ ՝ի բաց եկին, զքեզ պատ-
ճառելով. վասն որոյ մեր ցաստուցեալ սալա-

րի նոցա՝ ցլսւս արբուցաք արիւն. և քոմ
թագաւորութեանդ ոչինչ ինասեցուք, եր-
դուեալ ի Տիկր մեծ Աստուած. միայն
մուծա տեսանել զմեզ՝ զի խորհել լինչ մար-
թասցուք վասն հասարակաց օգտի: Գնէ՛
Ճ. գլ. 17:

Այս դարձաւ ի Խուզանդիոյ ի Սեսարիա
(Կեծն Կերսես), և եկեալ ի Հայս՝ զա-
մենայն կարգս ուղղութեանց իւրոց Հարցն
նորոգեաց. այլ և առաքել ևս. քանզի զբա-
րեկարգութիւն Յունաց աշխարհին՝ մանա-
ւանդ ի Կապադովկիա, ի սմա
կարգէ: Գողով արարեալ Եպիսկոպոսաց
և համօրէն Աշխարհականաք՝ Կանոնական
Սահմանադրութեամբ հաստատեաց զողոր-
մածութիւն, խնդրով զանգթութեանն ար-
մատ՝ որ քնաբար սովորութեամբ էր յաշ-
խարհիս մերում: Կանգն գորոտաք հալա-
ծեալ լինէին, իբր պիղծ յօրինացն համա-
րեալ. զուրուկս փախստեայս առնէին, զի
մի ի նոցանէ յայլս փոխեսցի ախտն. որոց
դաշտալըք՝ անապատք և ամայիք, և ծած-
կոյթ՝ վէմք և մացառք. ոչ յումեքէ գտա-
նելով մխիթարութիւն թշուառութեանցն:
Ու այսոքիւք և հաշմք անդամովք՝ ոչ խր-
նամեալ լինէին. և հիւրք անծանօթք՝ ոչ
ընդունէին. և օտարք ոչ ժողովէին: Կա-
ռնորս հրամայեաց ըստ գաւառաց գաւառաց
լինել աղքատանոցս ի խորշ և ի վերծ տե-
ղիս. զի փոխանակ հիւանդանոցացն Յու-
նաց՝ լցցին մխիթարութիւն մարմնոց վշտա-
ցեալցն. բաժանեալ ի նոսա զաւանս և զա-

գարակս՝ պտղաբերել յարդեանց անդաս-
ատանաց, և ՚ի կթելոց արօտականաց և ՚ի
գեղմանց, զի պաշտեսցեն զնոսա հարկաւ
բացեայ ՚ի քաց, և նոքա մի՛ եղցեն ըստ իւ-
րեանցն քնակութիւն։ Այլ յանձն արար Կա-
դայ՝ որ էր ՚ի Աարադաց Կարնոյ, սարկա-
ւագ իւր։ Հրամայեաց յամենայն գիւղս
վանս շինել, զի լինիցի Հատրանոցք, և
տեղի սննդեան որբոց, և ծերոց, և անու-
նոզաց տածումն։ Շինեն և յանապատ և
յանմարդ տեղիս Նղբայրանոցս, և Ա՛ե-
նաստանս, և առանձնակեաց խրճիթս։ Այլ
հայր և տեսուչ նոցա կացոյց զՇ աղխատա և
զԱպիփան, և զԱփրեմ, և զԱինդ՝ որ յաղ-
գէն Աղկունեաց, և զայլս բազումս։ Այլ
զերկուս զայսոսիկ ՚ի Ախարարութեանցն
բառնայ աղգաց. մի՝ զմերձաւորաց խնամու-
թիւն՝ զոր վասն ազահելոյ սեպհականն ա-
զատութեան առնէին. և միւս՝ որ ՚ի վերայ
մեռելոց գործէին օձիրս ըստ Հեթանոսա-
կան սովորութեանց։ Այլ էր այնուհետև
տեսանել զաշխարհս մեր ո՛չ որպէս զբազ-
բաթոսս այլանդակեալս, այլ խրթև զքաղա-
քացիս համեստացեալս։ Պէտ. Գ. կ. 20։

Այր երբեմն զՀետ երամակաց ցուցց
յանդգնագոյնս արշաւել ընդ խորտաբոտոս,
և գտնդ վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ
(Շ ապուհ արքայորդին Պարսից.) իսկ Ա-
տոմայ Ա՛ոկացոյ եպերեալ զնա՝ ասէ. Պնա՛
գնա՛ Ա՛ստուածորդիդ Պարսից, եթէ այր ի-
ցես։ Այս նա ասէ. Պու՛ երթիցես, զի ՚ի քա-
րինս Պիւաց կ շահատակել։ Պտձեալ յայ-

լուա՛ ժամու դիպեցաւ՝ի շամբս կինձս որսալ հրով։ և Հ՝ասկոյ ոչ համարձակեալ՝ի թաւ ւուն քաջարշաւ լինել՝ մինչև շրջապատեալ հրոյն։ և նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երիվարսն։ Ի՝նասանգամ ասէ Ա՛տոմ Ա՛ստուածորդիդ Պարսից՝ ահա՛ Հայր քո, և Ա՛ստուած, ընդ՚ը զանգիտես։ Ի՝սկ Հ՝ասկոյ ասէ։ Ի՝ողեալ՝ի բաց զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձի զքեզ՝ որ և ես զինի քո։ քանզի յառաջելն ձիս իմ խրտչի։ Ո՛յն ժամ այպանեաց զնա Ա՛տոմ՝ ասելով. Ի՝՛ի թէ և այդ քարի՛նք իցեն, զի ես յառաջեցից։ Ա՛ւ արդ եթէ դու զի՝՛ոկացիս կոչես զիւազգիս, ես զի՝՛ասանոդ կոչեմ կինամարդիս։ և մորակեալ զերիվարն՝ խթև ընդ հովիտ ծաղկանց անցանէր ընդ հուրն, զերդ ծուցանելով զՀ՝ասկոյ։ Ա՛ւ յետ այսր զի՛ տացեալ՝ թէ նմա լուռ ոչ լինի, անցեալ՝ի Ի՝՛ոկացն գնայր աշխարհ։ Ա՛յլ երբեմն՝ի մանկանական խաղուն երկիթս պատահեաց Հ՝աւասպայ Ա՛ծծրունեայ զգնդակն հանեալ՝ի Հ՝ասկոյ։ և նորա ածեալ նմա մակաւնաւն՝ ասէ։ Ո՛նանիր զքեզ։ Ի՝սկ նորա պատասխանեալ՝ թէ այո՛ ձանաչեմ ես զիս Ա՛զքայորդի՛ն՝ի սերմանէ Ի՝աահայ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո՝ զբարձն Ա՛զքայի համբուրել, որպէս և անուանակոչեալս եմ։ Ա՛ւ զայս ասացեալ քամահաբար՝՛ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր։ Ո՛արձեալ՝ուրեմն՝՛ի խնձոյս ուրախութեան Ի՝ոտրով Ո՛արդմանացի՛ն զինուոջ զեղեալ

առաջի Տ ապհոյ զօրէն սիղեխի տուփեցե-
լոյ՝ զհետ ջնարհալր քաջամատան կնոջ կըր-
թեր : Ընդ որ ցասուցեալ Տ ապհոյ՝ հրա-
մայէ ունել զնա , և ՚ի դահլճին պահել :
Այլ նա ՚ի վաղահասուրն հաստատեալ զայն՝
պես պունակ Տրդատայ Բագրատունւոյ՝ յիւր
տունն անցեալ գնայր , ո՛չ ուրուք ՚ի սպա-
սաւորացն Աղբունի համարձակեալ արկա-
նել ՚ի նա ձեռն , յառաջագոյն գիտեալով
զփորձ առնն : Այս զայս պատմել քեզ՝ քոյդ
հարկաւորեաց ընդ վայր խնդիր : Կոչ . Ճ .
գլ . 55 :

Յարահեռաղք Աղասաստասիրացն , և վե-
րահայեցողք չափաբերապես մակադրու-
թեանց՝ զաստեղս ՚ի լուսոյ ասեն ընծուիլ ,
և զլուսինն արեգակամբ ուռճացեալ , և
զբոլոր արեգակն յարփայինն երկնէ . և հի-
կէն՝ արփւոյն հեղեալ զծագումն յերկաքան-
չիւր գօտիսն , և զանցնիւր գօտիսն ՚ի ձեռն
արեգականն ընծուիլ ըստ դասի , ըստ քեր-
մանն , ըստ օրինակի : Օրինակ իմն այսպէս
և մեք յաւէտախաղաց ընորհիւ ցոլացեալ յի-
մանալի Ճառագայթից Հոգևորոյ՝ ըստ հա-
րաւային մասանցն պարագծեալք՝ Աղեք-
սացւոց հասանեաք քաղաք . Թեթևակի ընդ
խորս Ղևանին նաւեալ՝ անցաք ՚ի սուրբ
Տեղիսն երկրպագել , և ինալ վայրկեան ՚ի
Պաղեստինացւոց հրահանգս , և այնպիսով
սաղապաձեմիս մնաք Աղեքսիոս յաշխարհն
համբաւասնեալ՝ յանչափից հրաժարեալ ՚ի
ցրտոյ , և ՚ի տօթոյ , ՚ի հեղեղաց և յերաշ-
տից՝ ՚ի գեղեցկում մասին երկրի զդերն ու-

նեղով, ամենապան պտղովք առլցեալ, և անձեռագործ պարսպեալ Ա[ստ]ղոսիւ. որ ոչ պահպանութիւն միայն, այլ և կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց յինքենէ, և ոտոգմամբ տէր գոլ պատահեաց չորութեան և խոնաւուց՝ առ երկրին գոլ. ծաւորութիւն, և զանեղսն ի նմա դիւրաժնել. և գետոյն բերիւք հանգիստակ կղզւոյ առաստագիւտս առնէ շուրջ պարունակելով, և ընդ ամենայն հոսելով՝ տրօհմամբ երկրատասանից վտակաց: Յորում քարեյարմար մեծն Ա[ստ]ղեքսանդրիա է շինեալ քաղաք, քաւթեժամանակ ի մէջ ծովուն, և ձեռագործ լճի կառուցեալ: Յորոց օդոցն քաղցրախառնութիւն փչեցեալ՝ որ ի լճէն բերանք արձակին ի ծովն, և որք ի ծովէն մծոի եղոյ, որ ելանեն ստէպ ստէպ սղոխք օդոյ, անօսրունք այն որ ի ծովէն, և թանձունք այն որ ի լճէն, որոց խառնուածն առողջագոյն ջհաստատութիւն կենաց գործէ: Որպա ա[ստ]ղի այժմ ոչ անցեալ նստի Պղտոմեխոս հնգակատար գագաթամբն զանսպառ աշխարհ պատելով, այլ Արկտս աւետարանական քարոզութեամբն. և ոչ Արեգական դիւցազնացս գերեզմանն, այլ Արեգոյն վայելչական վկայարանք. և ոչ ի քսանևհինգն Տուբիղ ածնի աղջատանք՝ զբեռնաթարձս պարսակելով գրաստս, և սպաշտօն տանել Որտուաց, և աթեերաց առնել քաշխուն, այլ ի մետասան նորին Տուբիղ Յայտնութեանն Տեառն կատարի տօն: Ցաղթօղ նահատակս գովել, և օտարաց առնել ընդունե-

լութիւն, և տուրս յաղքատս. և ոչ զոհել
չար դիւին Յարապետ, այլ՝ զՔրիստոսի
արիւնն մատուցանել պատարագ. և ոչ խնդ-
րել հրաման պատասխանւոյ ՚ի Յանդարա-
մետապետէն Վրոդիխադայ, այլ ուսանել
զօրութիւնս պէսպէս խմաստից ՚ի նորն Վը-
ղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ. որում
ոչ գոյայ արժան աշակերտ, և ոչ անկատար
վարժմամբ ՚ի յանգ հասեալ արուեստից՝ ինք-
նացայ: Կատեր Յունդա կամելով Յոտա
լիա քառնութեամբ հողմոյ անկաք. և ող-
ջունեալ ՚ի հանգիստ սրբոյն Պետրոսի և
Պաւղոսի, և ոչ քաղցմ ՚ի Հռոմայեցւոցն
կացաք քաղաքի. անցանելով ընդ Յունդա
Յոտիկէ՝ սակաւ ինչ մնացաք ՅԹէնս:
Յոր ՚ի կատարել Ձմերայնոյն՝ դէմ եղեալ
՚ի Քուզանդիոն հասանել, փութաքեալ մերոց
Հայրենեաց: Ոնդ. Գ. գլ. 62:

Յոր է սահմանն՝ զոր կարձառօտ՝ յայտնիչ
քնութեան ստորակայ երոզութեան, այս-
ինքն՝ որ զևւրն ՚ի ներքս փակէ, և զայլոցն
՚ի բաց որոշէ, և չափէ զՊ՝ատն: Յոր է Պ՝ատն
հինգ հարիւր Պ՝սպարէս: Յոր Պ՝սպարէսն է
հեռակացութիւն, այսինքն՝ Պ՝տաւասն մի:
Յոր է Պ՝սպարէսն ըստ օդաչափութեան՝
Ռ՝այլս հարիւր լիսուն: Յոր Ռ՝այլն է վեց
Պատ: Յոր Պատ՝ վեց Պ՝ատան: Յոր Պ՝ղոնն՝
եօթն Պ՝սպարէզ է. որպէս զի լինել դեա-
նաչափութեամբ Պ՝ղոնն՝ հազար Ռ՝այլ: Յոր
Լստասանն է երեք Պ՝ղոն: Ոայց է օդաչա-
փութեամբ երկրաչափութեան Պ՝ատն՝ հինգ-
հարիւր Պ՝սպարէս ՚ի լայնն, և նոյնչափ յեր-

կայնն չորեքկուսի . որպէս զի լինել Աասլին եօթանասուն և հինգ մղոն , չորս եօթն , քսան և ութ : Ընդ՝ այս չափովս չափեցին զերկիրը և զծովն : Ընդհատ. եր. 6 :

Եւ Նայք յելից կալով Աատադովկիոյ , և փոքր Նայոց առ Նփրատ գետով մերձ'ի Տօրոս լեառն , որ քաժանէ զնա 'ի Միջագետաց : Ըստ 'ի Նարաւոյ սահմանի Ասորեստանիւ , և դառնայ առ Նտրպատական ընդ Աարս՝ մինչև 'ի մուտս Նրասխայ 'ի Աասլից ծով : Նսկ ըստ հիւսիսոյ՝ առ երի կալով Նդուանից , և Աղբ ըայ՝ մինչև ցնոյն դարձուածն Նփրատայ 'ի հարաւ կոյս : Ընդհին Նայք լերինս անուա նիս , և գետս մեծամեծս , և մանուսս , և ծո վակս երեք : Նս ունի Եւ Նայք փոքր աշխարհս հնգետասան , որք են այսոքիկ . Նարձր Նայք , այսինքն՝ Կարնոյ կողմն , Որ ոորդ Նայք , Նզնիք , Տարուբերան , Աոկք , Կորձէք , Պարսկահայք , Ա ասպուրականք , Աիւնիք , Նբցախ , Փայտակարան , Ուտէա ցիք , Կուգարք , Տայք , Նլբարատ : Ընդհատ. եր. 32-33 :

Նլբարատ 'ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ . և գաւառք են 'ի նմա՝ Նա սեն , Կաբեղեանք , Նբեղեանք , Նաւու նիք , Նըշարունիք , Բագրեւանդ , Ծաղկատուն , Շ երակ , Ա անանդ , Նրագածոտն , Ղ ակաւոք , Ա ասեաց ոտն , Կոգովիտ , Նշոց , Նփ , Կոտայս , Ա աղաղ , Ա արաժնունիք , Աստանն Կնշեայ քաղաք մինչև ցդաշտն Շ ա րուր : Ընդհին Նլբարատ լերինս , և դաշտս ,

և գեհոս սիտանիս, էրեն և հաւս, և զա-
մենայն պարարտութիւն. և զծովակն Կայ-
լախոտոյ. և որդն արմատոյ առ՝ի զարդ
կարմրութեան գունոյ: Ղևկաբկ. էր. 37-38:

ՄԱՄԲՐԷ, MAMBRE.

in the fifth Century.

Յերգիոնն արուեստապետն ընդ մի քե-
րան փչէ, և բազմութիւն փողոցն հասա
րակ գոչեն, ոմն սոսկ, ոմն թաւ, և ոմն
ևս թանձրագոյն, և այլքն ըստ իւրաքանչ
չիւր կարգի. թէպէտև բազումք են թուով,
մի ձայն ասէ, և ոչ բազում. ըստ ձեւին
շարժողին ընտրութիւն ձայնիցն երևին, և
գործին մի է, և նոյն բաւական առ ամենե-
սեան: Կ՝ ճառն յարութեան Կ՝ սպարտս:

ԴԱՒԻԹ ԱՆՑԱՂԹ, DAVID PHILOSOPHOR.

in the fifth Century.

Պարտ է գիտել, եթէ զՀուսականն
Վիճնիկեցիք գոն՝ որպէս վաճառականք
գոլով, և թուականութեան սէտս ունելով
առ՝ի համարել: Ուստ զՀրաժշտականն Վրա-
կացիք. վասն զի անտի էր Արիևս, զորմէ
ասեն նախ գտանել զերաժշտականն: Ուստ
զՍտեղաբաչխականն Վրաղէացիք. վասն
զի անամպ, և հանապազ ջինջ ունելով օ-
դոյն՝ դիւրաւ կարացին ըմբռնել զշարժմունս

աստեղաց : Ասէ զՀրկրաչափականն Հիպ-
տոսիքն գտին ՚ի Հարկէ . քանզի Հելոս գե-
տոյ ՚ի ծովանալ ՚ի վերայ Հիպատոսի , և
խառնակել զսահմանս արտավարացն՝ կռիւք
և սպանմունք լինէին Հիպատացւոցն ՚ի վե-
րայ իւրաքանչիւր սահմանի . մինչև իմացան
չարի մի՝ որում անուն էր Պատանակ . զայն
գնեցուի՝ գտանէին զսահմանս իւրաքանչիւր
արտավարացն . ուստի ապա և Հրկրաչա-
փուԹիւն գտաւ : Վէրջ Պահմանաց . էջեա .
170-171.

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, JOHN MANDACUNENSIS.

in the fifth Century.

Ասէ Հրամանն Քրիստոնէից զՀերս փե-
տել , և ոչ զայոս ցտել , և ոչ ՚ի կոծս մտա-
նել , ոչ ուսումն մերկանալ , ոչ զՀակառակն
Հարկանել , ոչ Թուխ Համակ զգեցուցանել , ոչ
ագանիլ , և ոչ մուխիր ցանել . զի այս ամե-
նայն՝ սատանայական է , և ՀեԹանոսական
օրէն . զոր անսիտ կանայք բարբառեն ՚ի ցոյց
կեղծաւորուԹեան . և զԱռաքելոցէ գործս
գործեն ՚ի վերայ Քրիստոնէից . զողջս ող-
ջալով , և զՀակառակս քանալով , և զՀիւն
աշխարանաց բարձրացուցանելով , անյուսա-
բար և չարաչար զմարմինս կոծելով ՚ի վե-
րայ Քրիստոնէին՝ որ վախճանեցաւ : Օ՜ որ
պարտ էր սաղմոսիւք և օրհնուԹեամբք , և
պատուական երգովք Հոգևորօք յուղարկել
՚ի կեանս յաւիտենական : Ընդէր խայտա-

ռականօք և անարդաւնօք սպոյ թշնամանեք զմարմինս հոգևկիրս և աստուածազգեաց ։ Ա՛ՈՒՄ Է ։

Ուրք վաշխ և տոկոսիս առնուն՝ դիմա. դարձ լինին պատուիրանացն Աստուծոյ, և Տիզուցն սրբոյ հակառակ ։ Այլ այնչափ ա. նօրինութիւն է փոխոյն ընծրհքն, որպէս յամուլ արգանդէ խնդրեն որդիս բառնու. թեամբ, և կամ յապառաժ վիմէ պտուղ որոնեն, և ՚ի յարուաց ծնունդ պահանջեն, ՚ի քարէ կաթն կթել, և ՚ի վիմաց բուրդ առանալ ։ Ա՛ՈՒՄ. ԺԷ ։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, LAZARUS BARPENSIS.

in the sixth Century.

Լքեալ մերժեալ Թողոյը (Ասըշակ Թ. Թա. գաւորն) զաւրն և զգնիկ ժառանգութիւն Պահնեաց իւրոց՝ զգաւառն Այրարատու, զՀոյակասն, և զՀաշտեաւրն, և զականաւորն, զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալիւն, զամենագիւտն ՚ի շահս և ՚ի դարմանս մարդ. կային պիտոյից կենաց, և վայելչութեան, և սքանչելեաց, զգաշտս մեծատարածս և որսալեցս, զլերինս շուրջանակի գեղեց. կանիստս և պարարտաբուսս, զհոծեալս էրկուքն կձգակաթաժնիւք, և որոճայնովքն, և այլովք ևս բազմօք ընդ նոսին. յորոց ՚ի վերուստ ՚ի կատարածն ջրոյ հոսմունք անդ կաթեալ ոռոգման՝ արբուցանելով զդաշտս՝ մատակարարել անբաւ բազմութիւն յա.

տանն կանամբք, արամբք, և ընտանեօք՝ զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն, և զզանազանութիւն իւղաբուղխ սերմանցն։ Ահա՛ ի լանջակողմանան, կամ՛ ի սարահարթ տեղիս՝ յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ, և ոչ ծաղկաթոյս գոյնս կարծեցուցանեն սիրեալքս՝ պարարտաթոյնք, և պարարտաբոյնք, պարարտահամք։ որոց Թանձրախիտ աձմունք խոտոցն զանթիւ արօտականս ընդանի իշանց, և զանհամբոյր բոյսս վայրենի երեսոյն յագեցուցեալ՝ Թանձրաթաղանթս, առոգագաւակս, սանքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն։ Ահա՛ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն՝ որ զարանցն քաջաց որսասէր նետողացն, և զՀօտարած քացօթեգացն ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզգայութիւն խելացն, և նորոգեն։ Ընդ գտանին և աղբի աղբի արմատք բուսոց՝ ի սկսս օգտակարութեան դեղոց ըստ Ճարտարապետ Ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոց՝ երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբմամբ յերկարելոցն ի ցաւս՝ պատահացուցանեն առողջութիւն։ Ահա՛ դաշտացն ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կորզելով յինքեանց իբրև բանիւ, և ստեղծեալ որ զինչ և է բարով և առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանդամայն։ որք ոչ միայն երեւելութեամբն ցուցանեն վերաբերեալ զշա

հաւորութիւն օգտից մարդկան, այլ և առաւել յորդորախոյզ աշխատողացն զառ ընդերկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն՝ դանձել անձանց զշահս, և զվայելս այսր աշխարհիս՝ ի մեծութիւն թագաւորաց, և ի հաստատութիւն հարկահանաց՝ զոսկի, և զարծաղինձ, և զերկաթ, և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն, յօրինուածովքն՝ զոր ի խոյրան, և ի թագսն, և ի հանդերձեան ոսկեհուռս պատուճէնալս ընդելուզանեն։ Այլ և մածմամբ ջրոց՝ հալմածին անուշութիւնս մատուցանեն վխորտկացն որոշութիւնս։ Այսու զարմատս եղէգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ։ Այլ և ի նմանէ ծնեալ որդունս՝ ի զարդ կարմրատեսիլ գունոց՝ ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս։ Այս և գեւտոցն գընացք բազմակերպ ձկամբք մեծամեծովք և փոքրումբք, զանազանեալ համովք, և այլևայլ տեսովք՝ ուրախացեալ լցուցանէ զշընորհս ընչից, և յարգուրդ որովայնից ժրաջեւցն, և անվեհեր չանաչողացն։ Այնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զաւաւելութիւն հաւուցն, յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն, ըզկրկջաձայն, քաղցրաձայն, առապարասէր, վխմասոյզ, սորամուտ երասն կաքաւացն, և սալամբացն, և կամ զեղջկանաբնակ, թփամուտ, մացառաղօղ, սպարատամարմնին, զանուշահամ աղդ սքարացն վայրենեաց. այլև

զԼրաստուզակ , մամլոխնդիր , խոզակեր , մեծանձունք և յաղթամարմինք հաւքն՝ փոլն, և թանձրն , և սապն . և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն , և ջրայնոցն ջոկք թռչնոցն : Ոսկ Թակարդացն շրջափակու-թեամբք՝ երագագլուքն և գահոլովքն ելեալ ՚ի յորս գունդք ՚Ասխարարացն որդւովքն Ղազատացն : Ուր ոմանք զՀետ յըռուցն և այծեմանցն արշաւելով՝ զխիզախականն և զաղեղնայինն և եթ բարբառեցին . և այլք զՀետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովաձիգ արանցն ցուցանէին . և կէսք սուսերօք՝ իբրև զմենամարտիկս , զասատկանդամ երամն վարազացն գլորեցուցեալ սպանանեն : Ոչ շատք ՚ի մանր մանկանց ՚Ասխարարաց որդւոցն՝ դասատիարակօք և ծառայիւք զայլևայլ սերս ՚ի Թռչնոցն որսացեալ բազայիւք՝ բարձեալ բերին ՚ի յաձուսն ընծերեացն ուրախութեան . և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք : Որոց դէտսակն կալեալ ըստ հանապազօրեայ սովորութեանն ջրայոյզ ջրասծուփ ձկնորսացն մանկունք՝ ընծացեալք ՚ի յառաջ նախարարադունդ Որոցն՝ ձկունս ՚ի յորսոյ , և բազմազան վայրենի հաւուց ձագս , և ձուս ՚ի կղզեաց գետոյն բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն . յորոց ընկալեալ մասն ինչ ՚Ասխարացն ըստ կամի՝ պարգևեն և նոցա ՚ի յիւրեանց բերոյն ըստ առաւելագոյն բաւականի ընծայաւորացն . և հասեալք լի ամենայն բարութեամբ յիւրաքանչիւր յատարանս՝ շր-

նորհէն և անպարապիցն մնացեալոցն ի տան՝ զամբիծան, առաւելապէս և առ օտարան։ Եւ տեսանել ի յամենեցուն ընթրիս՝ որպէս և շեղջակոյտս լինէ ի վերայ միմեանց զեղբէօցն բազմութիւն, և զնոցուն գլխոց կարգմանց զառաջադրութիւնն. յորոց ուրախացեալ բերկրին ձկնակերացն և մսակերացն անձինք, առաւել քան զխորտկաց անուշութեամբ՝ հոգևոր ճաշակօք, սաղմոսիւք և մարգարէական երգօք օրհնելով զպարգևատուն Քրիստոս, և զտուիչ և զցուցիչ ամենայն բարութեանց։ Պաւղ. Եբէա. 18-22։

Հրուշայի տեսեալ զայն, և ընկալեալ ի թագաւորէն զմեծն պարգև, յարուցեալ ի խորանին՝ առաջի ամենեցուն յերկիր հոլովեր այսր և անդր, և ապա հարկանէր ըզգլուխ ի գետինն. այսպէս կատարէր զերկրպագութիւնն։ Եւ տեսեալ զայս թագաւորին, և ամենեցուն՝ որ ի խորանին էին, և զարմացեալք մեծապէս՝ Թէ զինչ արար այրն, հարցանէր ցնա Թագաւորն, Թէ՝ Ասա՛ ինձ զինչ է այդ նոր ինն գործ՝ զոր ցուցեր դու մեզ այսօր։ Եւ պատասխանի տուեալ Հրուշայի՝ ասաց, Թէ՝ բարեբար Հրքայ, դուք լինիմ նոր պարգև ընծայեցէք, զոր այլ ինն ընկերաց ծառայի ի մինչ չէր գտեալ. և լինիմ արժան ես նոր երկրպագութեամբ երկիրպագանել ձեզ, զոր ձեր յայլ ծառայէ զայնպիսի երկրպագութիւն երբեք չէր տեսեալ։ Եւ լուեալ զայսպիսի բանս Թագաւորին Հրուշայէ, և ամենայն բազմութեան աւազանոյն՝ գոլեցին

զայրն, և մեծապէս զարմացան։ Ագր. 186։

Ճ ապհոյ տարեալ զկանայս Ամնարակա-նացն յամուր բերդն Խասեոյ՝ զոր Խոզբերդն կոչեն, անդ Թողոյը. և յանձն արարեալ Ջղտաւչնասպայ բերդակալն զկանայս Ամնարականացն՝ պատուիրեր նմա բազում զգուշութեամբ՝ պահել ըստ օրինացն Քրիստոնէից զնոսա սրբութեամբ։ Ուանզի կանայքն իսկ Ամնարականացն զնոյն ասէին բազում անգամ համարձակապէս բողոքով, թէ զարմն մեր արդարև կամիք նուաճել, զայդ ևեթ տուք լսել նոցա՝ թէ մեք խաղաղութեամբ եմք. ապա զոր ինչ հրամայէք նոցա՝ լսեն և կատարեն։ Ուանզի ամենայն Հայոց գիտէին սակաւք զայս, և վկայեն՝ որ աստ առ ձեզ Հայ մարդիկ են. զի քան զմեզ զայլ կին նոքա ոչ գիտեն. ապա թէ այլ ինչ լսեն վասն մեր՝ ի նախատանաց խակ և յամօթոց՝ թող՝ ի մեղաց և ի գարշութեանց ըստ մերոց օրինացն, առաւել դնեն զանձինս ի մահ։ Ագրէ. 255-256։

Ուլև յատենի ևս այսպանելով՝ ամենայն վատաց, և ի կռուոյ յետնելոց զՀայս ասծկիք օրինակ. նախ Ասորոց, ապա լքելոց, ապա լուծելոց, ապա անդամալուծաց. և բայց թէ ապա և որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող հացկատակաց ջոկն էր, և ոչ կորացեալ մտանէր ընդ գետին, վասն նոցա և խնդութիւն ևս թուէր այնպիսի լուրն. այլ որ մարդ էր, և ամօթ կայր՝ ի սրտի, և զայնպիսի բանս Ագրեաց Տեառնէն լսէր՝ ոչ միայն միանգամ և երկիցս և

եթե ՚ի դէպ էր մեռանել, այլ թէ և տասն անգամ կեայր, և հանապազ զնոյն լսէր՝ տասն անգամ արժանի էր մեռանել։ Լրե՛։ 292։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, ANANIA SIRACUNENSIS.

in the seventh Century.

Վրանքարն 138 լիտր է։ Այս մանր քաշ ժանեալ զքանքարն՝ լինի դահեկան 9936, սիմէա 19872, տրամ 29808, դրամատ 39744, սինգ 59616, կերատ 238464, փշիտ 317952, դանգ 476928, և դարեհատ 953856։ Յա՛ղագս Յափոյ և Կղոյ։

Օ կաթին ծիր որ անուանեցին՝ ոչ այնպէս ոչ (կամ որպէս) էար փիլիսոփայքն առասպելաբանեցին բազում բանիւք։ զի ոմանք ասացին, Ճանապարհ է դա՝ հին արեգականն հետք։ իսկ այլք տգիտագոյնք քան զնոսա՝ ասեն, թէ աւազաստ է պեռսուհոնայ։ զոր սպիտակ սուգն կոչեցին Թենեսցիք։ Այլք ՚ի նոցանէ ասեն, թէ Հերակլէս զանգէն Վերոնեայ ընդ այդ շաւիղ վարեաց։ նաև այլ և լսա նոցին արուեստի ասեն, թէ տարածումն է սահմանցն Երեայ հնոյն Յրամազդայ։ Արձեալ՝ ոմանք յառաջնոցն Հայոց ասացին, թէ ՚ի խիստ ձմերան Ա տահգն նախկին Հայոց գոզացաւ գյարդ Նարշամայ Սորեստանեայց նախնոյ։ զոր մեք սովորեցաք քննախօսութեամբ Յարդոցն հետ անուանել։ Ուր

փիլիսոփայքն բարիք ասացին զդիմանէ, թէ խիտ աստեղք են բաղումք նուաղք, և յոյժ ընդ աղօտ երևմանէն միաւոր լոյսն տեսա նի: Ա՛պոլիոնիան:

Զօնեալ իսկ է Ներսեհ Հեթանոսաց զաւուրս Տ՛աբաթու՝ Ա՛րեգական, և Ո՛ւրանի, և Հնդկից Ա՛ղօրակացդ, զոր Հարկաւորիմ նոյն անուամբ յորջորջել: Ա՛ւուրք Տ՛աբաթու Հայոց: Ա՛ռաջաբաթ՝ Ա՛րեգական, Երկուշաբաթ՝ Ո՛ւրանի. Երեքշաբաթ՝ Հրատն, մծտ՛ի Սեղգեսին. Օրեքշաբաթ՝ Փայլածուն, Հետ Ո՛ւրանին. Հինգշաբաթ՝ Ո՛ւրանի Թագն, Պ՛իշերաւար. Ա՛ռ Եղշաբաթ՝ Ո՛ւրաբաթն, Ա՛յգաստղ. Տ՛աբաթ՝ Երևակն, Կարմիր աստղ: Յունարէն. Հլիոս, Սելենէ, Ա՛րէս, Երմէս, Օ՛ւս, Ա՛փրոդիտէ, Կռոնոս: Պարսկերէն. Տ՛ամն, Մ՛ամարդ, Ա՛ռեհ, Տարիտ, Ա՛ուշնարի, Օ՛հրայ, Ա՛նահիտ, Օ՛հաղ, Օ՛րուան: Ա՛պոլիոնիան:

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ, GREGORY ARSARUNENSIS.

in the seventh Century.

Օ՛հարկ բանիս՝ զոր պահանջեցեր յինէն փութապէս յաղագս Ա՛ստուածային Ընթերցուածոցն՝ ուղ կամարականդ Ա՛ահն Պատրիկ, հատուցի քեզ յամրապէս. ո՛չ՛ի հարուստ մտաց ուրուք ժողովեալ, և ո՛չ՛ի բարձրագոյն քանից յառաջնոց ուսեալ, այլ յաշխատութենէ աղքատ ումոյ խորհրդոյս

դառեալ նուաստ իմացուածովք ։ Եւ վասն այսորիկ հեղգ առ այսպիսի փոյթս դտայ յառաջագոյն , զի մի նուաղ զպայծառ ջահ իմաստութեան եկեղեցւոյ երևեցուցից . և կամ տխուր՝ զվայելուչ զգեղեցկութիւն խորհրդոյս . վասն զի ուժաւորաց ոմանց և հոգևորաց յառաքինութիւնն պատշաճ վարկայ զգործս զայս ։ Այլ վասն զի այր եմ մեծ , և ողջախոհ մտօք , պսակեալ ծերութեամբ և իմաստութեամբ՝ իբրև Թագաւոր Յ՚ստուածոյ ՚ի ժամանակիս ՚ի միջի մերում , և յորդորական հրամանն Տէրութեանդ քո միշտ մտրակեաց զնրաւացի հեղգ երկչոտութիւն մտաց իմոց . որ իբրև ահագին ինն խորոց հանդիպեաւ իմաստութեան ընթերցուա ծոյն՝ ցնորեցայ ՚ի խորհուրդս , և պակուցեալ ՚ի փախուստ դարձայ բազում անգամ ՚ի հնազանդութենէ այսպիսի հրամանաց ։ Այժմ վերստին հասեալ հրամանիս քո ոչ կարացեալ ՚ի դիմի հարկանիլ՝ ուստի խուսափիչին յառաջագոյն իբրև յալեաց ծուլոյ , այժմ ՚ի նոյն գարձեալ դիմեցի՝ վստահանալով ՚ի չնորհս Յոգւոյն սրբոյ . ոչ գիտեմ , հնազանդութեամբ, թէ յանդգնութեամբ։ Սակայն դիմեցի իբրև ՚ի դրախտ ինչ գեղեցկատեսակ Յստուածոյ տեսչութեամբն առ մարդն , լի զանազան պտղովք՝ Վրիստոսի փրկութեան խորհրդովք . ընդ որոյ անքաւութիւն մարդասիրութեանն շուրջ գալով՝ ՚ի խորհուրդս՝ քաղեցի ըստ իւրաքանչիւր Յարդարեական գրոց զՎրիստոսի փրկութեանն պտուղս՝ զոր կարգեցի

սկսեղ պատմութեան բանիս՝ ընծայելով ի սեղան քաջախորհուրդ իմաստութեանդ քո։ Որ ընկալեալ՝ զհնազանդութիւն յօժարութեանս իմոյ՝ ըստ կարի զոր ինչ ընծայեցից՝ վայելեսցես. և իբրև խոհեմ անձն, և զօրաւոր մտօք՝ տկարութեանս իմոյ, և կամ յանդգնութեանս ներեսցես։ Ի Աէին. Ի Նևերյոաածոյ։

ԹԷՕԴՈՐՈՍ ՔՈԹԵՆԱՒՈՐ,

THEODORE CHRTHENAVOR.

in the seventh Century.

Ով դու յօդաբան և զգուշահուր՝ իբր գերաճուեալ մտացածիւ հանձարով քան զերկնագուշակ Յակոբայրան, որք հիմունք եկեղեցւոյ, և խարիսխք ճշմարտութեան անուանեցան. որոց պահապանք՝ Հրեշտակք, և զօրավար՝ ինքն Տէրն. որք վկայեալք յաղագս Արիաոսի նահատակեալք՝ գլխատփառեցան յառաքելական աստիճանին։ Կամ՝ գրեթէ եօթն հարիւր (Է. յօրինակին Ջ.) ամ լեալ յետ չարչարանաց որդւոյն Աստուծոյ, և յայնքան ժամանակս յանգիտութեանն մնացին գոլոր մանկունք Եկեղեցւոյ. և միայն արդ ևս ի վախձան ժամանակաց՝ նորուսք դուք, և նորածան գտանիք ճշմարտութեանն, երկրորդ Պողկնարիտք՝ որ նորածայն աւանդութեամբն նորածին քուսուցէք արմատոյ դառնութեան փուշս

հրաձարակ անշէջատոչորը քաջոյն : Ն՛աա ընդ-
դէմ Ա՛այրագոհեցաոյն :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՄԱՍՏԱՍԷՐ, JOHN PHILOSOPHOR

in the eighth Century.

Արժապետ վեհագոյն ունէի՝ Ա՛ստու-
ծոյ պարգեւեալ ինձ հայր, միանգամայն և
հրահանգող հոգեկան վարժութեանց՝ զիմն
Ծովհաննէս Ոսկեբերան՝ ըստ մերում Ա՛ստուածաշնորհ
պատշաճեալ լեզուի. որ ոչ զատ՛ի յինքենէն
եւեթ բաւականանայր շտեմարանել յիմումն
ոգւոյ զբարին, այլ և՛ի յոլովից զպայծառա-
գոյնսն ծաղկաքաղ առնելով զընտրհայ՝ լիա-
ցուցանել զագահութեանն իւրոյ ինձ ջա-
նայր զուսումնասիրութիւն : Յաւելեաւ :

Այլ էն առաքինութիւնք՝ որք առ հա-
սարակ հոգւոյ և մարմնոյ զփառացն՛ի գը-
լուխ յօրինեալ կապեն զպսակ : Վանզի այլք
՛ի տրամադրութեանցն ժամանակաւ տրա-
մակայեալ՝ լուծանեն զվիմեանս, իսկ առա-
քինութիւնն հանապազորդ՛ի մեզ ինդրէ բը-
նականալ. քանզի յայս իսկ և գոյացուցիչն
զմերս հաստատեաց բնութիւն՝ զի բարե-
գործք և աստուածասիրք եղիցուք. և ինքն
իշխանութեանն կառոյք իբր՛ի տեսարանի
ումեք՛ ի սուա նահատակել հանդիսասցուք,
կինքելով որպէս Թագաւորական մատանեաւ՝
Ա՛ստուածայինն երկիւղիւ՝ զսիրտս և զձեռս,
ընդ որս յարմարեալ պատկանի խորհուրդ
և գործ. զի նորոգութիւք իրօք՝ որով աւ մահն

սողոսկեալ անկաք, առ կեանան դատնալ վերստին գիտից եմք: Ա՛ստ:

Ա՛ր առ պատուիրանադրեալն ոչ ձգտի հաստանել կանոն, նա յահեկակողմանն դանդաչէ խոտորեալ ճանապարհի. իսկ որ յառաջելալանցն նկրտի հրամայեցելոցն հասանել, զաջակողմանն այնպիսին տենչացաւ գըտանել զխոտորումնն: Ա՛յնոյն յանդգնաբար յապաշխարութեանն հոսելով վտանգս՝ յառաւել սնդուքենկն յանյուսութեան ընկղմի խորս. և միւսն անչափաբար ընդարձակեալ թողութեանն յուսով՝ զբռնականդակ ղերկիւղն ի բաց լուծանէ զկապ: Ա՛սկ որ յերկաքանչիւրոցն զանգիտեալ հրաժարիցէ ծայրագեղ խոտորմանց՝ միջնի ինն արդարակ, և անստեբիւրող ճանապարհաւ քերիցին. յորմէ ոչ փոփոխեացի Ա՛պահարցն հաստատեալ սահմանք. այսինքն՝ ոչ Տէրունականն աւուր զապաշխարութեանն ի վերայ ածել զնսիր, և ոչ նմանօրէն սմա՝ զծոմականան դատարկացուցանել, և փափկացուցանել զաւուրս. և ոչ դարձեալ՝ յառգերազանցապոյնն սոցա ումեք վերանալ եկանել, որպէս թէ՝ ընդ անգործութիւն և ընդ քերանալուծութիւն խառնել և զքընոյն խորութիւն, և զդինեձանութեանն որովայնամոլութիւն. իսկ ի տրտմականան՝ ծանրաբեռնութեանն ի ներքոյ դնանիլ տըկար բնութեանս. մնրմնասպան լինելով յաւէտ՝ քան թէ ախտասպան. և ի կքել մնրմնոյն՝ գտանել հոգւոյն զվհատութեանն տարակուսանս: Ա՛ստ:

Այն ոմանք ի նոցանէ, որք զաչացն զհետ
երթեալ՝ խաբեցան. որ ինչ միանգամ ի
տարերդ յերկինէ և յերկրէ գեղեցիկ ինչ
առ երեսս հանդիպաւ՝ Աստուածս անուա-
նեցին, զաստեղս, զլերինս, զլուրս, ըղ-
ծառս, զքարինս: Այլ են դարձեալ՝ որք
յուժգնութենէ կենդանեացդ, կամ ի դըժ-
նէութենէն երկուցեալք և ահաբեկեալք՝
ի պաշտօն նոցին դարձան, և Աստուածս ան-
ուանեցին. որպէս առ Աբեղոնացիսն Ա-
շտարթն պատուեցաւ. առ Եգիպտացիսն Ապո-
կողիլոսքն: Ոմանք որք անչափաբար գիմաստ
ախտին հոգ տարան, զարուեստն և զիմաստն
անդամն նոյնաձևաբար ստեղծեալ՝ պաշտե-
ցին: Աովաբացիքն և Ամոնացիքն զԱ-
մովսն, և զԱստարտոն: Այլք դարձեալ՝
զօգտակարս և զպիտանիս ի տարերաց այ-
սոքիկ առ կենցաղական պէտս ընտրեալ՝ աստ-
ուածացուցին. որպէս Պարսիկք և Արքն՝
զՀուր, և զջուր, և զերկիր. մինչ Թէ՝ հա-
ճոյ Թուեցաւ նոցա՝ ի մեռանելն զմարմինս
իւրեանց գազանաց և Թռչնոց ծախել տալ,
քան Թէ ընդ երկրաւ ծածկել, և նեխու-
Թեամբն անպատուել զիմաստաբար պատ-
ուեալն: Այն ոմանք ի նոցանէ՝ որոց տե-
սեալ զարիւնարբուս, և զԹարախածուծս ի
կենդանեացդ՝ իբրև զախտաբոյժս և զցա-
ւահալածս մեծարեալ զնոսա՝ Աստուածս
անուանեցին. որպէս Ագազիքն և Ակա-
րոնացիք զտզրուկս, և զՀանձս, և զմժեխս:
Ոմանք ի նոցանէ՝ զընդդիմամարտս այլոց
կենդանեաց զկենդանիս ի պատիւ առեալ՝

պաշտեցին. որոց յաղթահարեցին զմիմեանս՝ օգնականութեան սպասաւորութիւն առնել ի իւրեանց սուացողաց. որպէս Հիւսիսայինք՝ զձի, և զեզն. զմին վասն երագաշարժութեան՝ ոտիւքն որպէս թևովք թռչել հնծելոյն զկնի որոյ հասանելն քաղձայ. և զմիւսն՝ ի գազանացն յափշտակութենէ ըզտէր իւր յապահովացուցանելոյն սակս։ Այս կամ որպէս առ նոսին իսկ՝ զորոց քանս, հատուածաշարժութիւն և մեծարգի եղեալ՝ կերակուր իւրեանց զկերակրոցն ասպականիչս առնելոյ աղագաւ։ Այլ ամփսրշտագոյն գիր զասացեալսս՝ այս էր հեթանոսական. նացն. կինքն անձին իւրում երկրպագու և պաշտօնատար լեալ. զի որ առ ընկերսն միմեանս մարդիկն՝ ստուածութեան կարծեաք, կինքն իւր կնքեան խոնարհեալ՝ երկրպագէ կիմանրաբար։ Այլ համեմատութիւն գալով առ միմեանս մարդիկն՝ որով իւիք նուազեալ գտանիցին առ ընկերն, նորին պատճառաւ յարքունեան աստիճանի զգերազանցեալն հանեալ դնեը. և խեղաթարեալ՝ զինքն արարած խոստովանիւր լինել։ Այսմ օրինակի Աղգեացոյն տեսեալ զՅիսուսեանէանն զայն վիճախարի և աշխոյժ՝ վաճանականգնեան դոլով ըստ երկայնութեան հասակին, իսկ լայնութեամբն վեցաքանակս ունելով կանգունս. վասն որոյ զգերամբարձեալն մարմնոյն տրամադրութեամբ՝ աստուածօրէն իմն պատուով պատուեցին։ Այս սորա խաւար չարապաշտութեանն զբոլոր տիեզերս ընդ իւրև կալեալ՝ կուրացոյց,

ըստ իւրաքանչիւր լեզուաց այլայլեալով ըզ-
նորա զանուն. Ի՛ուշացիք Ի՛եբրովք կոչե-
լով, Ի՛աբելացիք՝ Ի՛հլ, Փղշտացիք՝ Ի՛ա-
հաղ, Ի՛լլենացիք՝ Ի՛փոս, Պարսիկք՝ Ի՛մզդ,
Ի՛յսք՝ Ի՛ըսմայզդ։ Ի՛ւ զտօրինակ յորա
ընդ բարձրութիւն հասակին հիացեալք խա-
բեցան, վասն այլոյ այլով իւիք քաջահա-
չութեանցն պատահմանց՝ ի զարմացումն ե-
կեալք՝ Ի՛ստուածս անուանեցին. զԻ՛ուռնոս՝
վասն յոխորտաբար առ կուսարարութիւնս
յարձակելոյ, զԻ՛ըես՝ վասն արիւն գոլոյ,
զԻ՛երմէս՝ վասն քաջախօսնակ ճոռոմաբա-
նութեանն, զՕ՛ւս՝ վասն անընդդիմամարտ
ներհակացն զուգախառնութեան։ Ո՛յլս վասն
այլ իրիք քաջաբաստիկ ըղնակնան ունելոյ
որակութիւնս. յորոց անուն և զկուռս պատ-
կերակերպս քանդակեալս՝ Ի՛ստուածս ան-
ուանեցին։ Ի՛ւ վասն զի յաղծապղծից անուն
և՝ ի վատթարագործաց կուռքն կանգնեալ
լինէին՝ դևն չարասէր և ՀՀմարտատեաց՝ ի
ներքս մտեալ դարանէր, և զկռապաշտիցն
ընդ ձեռն երևելի անդրեացն առ ինքն ձը-
գեալ՝ ընդունէր զերկրպագութիւն։ Յոր-
մէ դատանէին՝ եղեալ դիցն երկրպագութ,
ոչ միայն տարրապաշտք, այլև դիւապաշտք։
առնլով՝ ինոցանէ դիւացն պաշտօն, և տա-
լով զինքեանս փոխարէն ընդ ծառայու-
թեանն։ Ո՛ան որոյ դիւաբնակք և դիւա-
շունչք կոչին լինէին սպասաւորք, այլ և
Ո՛իւցազունք անուանեալ՝ գնդր՝ ի վերոյ
մատդկայնոյս համբառնային քնութեան։
Ա՛սա ընդդէմ Պաւղիկեանց։

Ինացեալ եմ մեծապէս՝ զնորանշանդ ի քեզ տեսանելոյ ձեւացութիւն. զի այլք յա հեկանացն զմի ի ինչ ի սատանայական ուս մանցն բարձեալ տապրան շահս. իսկ դու յոյժ ազահելով և ոչ զմի ոք անտուստ ի կողմա նէ թողլով՝ տենչացար. մինչ թէ զնոյն զի արգարեին առ քեզ բարբառել՝ իրաւա ցի է. Զմբարձ զաչս քո յուղղութիւն, և տես՝ ուր ոչ թաթաւեցար ի ձանապարհս քո, և որ ի կարգին. առ ամենեսեան ա նամնթեալդ՝ և ի խոստովանականս, և ի կարգս, և ի կրօնս. առանց ամենեցուն հո լանեալ, և զամենեցուն ի տեղի արարեալ լցեր զհայհոյութեանն չափ: Ոչ հնար թուել զխիձս հեղեղատի, և զաւազ ծո վու, և զչիթս անձրևի, և ոչ զստեղծեալն առ ի քէն նորոգիւտ բանս և իրս: Զնդ հակառակս ելանել Զստուածայնոյն խոր հեցար դրոյ. Զցի՛ ասէ, երկիր գիտու թեամբ Տեառն լցցի զջուրս բազումս՝ որ ծածկեն զծովս. այսմանակ և դու հրապու րողականդ քո բանիւք ծովացուցեր. ամե նայն օր, և ժամ, և ասիս՝ քեզ նորաձևու թեան: Ա՛ստ ընդդէմ Աղեքսանդրացոց էր. 70:

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ZACHARIAS PATRIARCH.

in the ninth Century.

Վերագրէ սրբազան և երջանիկն Ղու կաս ի հրամանէ սուրբ Հոգւոյն. և եղև՝ ասէ, ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ եր հրա

մանն յԱՀեղոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս։ Յառաջագոյն քան զծնանելն ի Բեթղեհէմ՝ տայ զերկրաւոր պետութիւնս ի Հռովմայեցիս, որ չորրորդ գազանն անուանեալ ի Դանիէլէ մարգարէէ. քանզի ի Հռովմ հանդերձեալ էր կարգել զաթոռն Պետրոսի և Պաւղոսի. և զգլխաւորութիւն սրբոյ Եկեղեցւոյ. և զՀռովմայեցւոց թագաւորութիւնն կոչելոց էր ի հաւատս՝ լինել գաւազան Քրիստոսական դաւանութեանն ի վերայ դիմամարտիցն խաչին Քրիստոսի։

Ա՛ստ ճննդեան Յիսուսի։

Ակնանք և արուեստք հրաշափառ և գեղազանցք ներգործեալ՝ զարհուրեցուցանեն զմարդիկ։ Քանզի լինի և այլազգ նշանք՝ որպէս ի Դախարդաց, սուտք, և խաբեբայ, պատիրք, ի դիւաց կեղծաւորութենէ՝ ոչինչ ուժգք յօգուտ գործեն. որպէս Յանէսին և Յամբրէսին յայնժամ՝ որ զՀարուաճծան Մովսէսի երկրորդէին, այլ փարատել ոչ կարէին։ Նոյնպէս և ամենայն Քահարդք առաջի Թերահաւատիցն նշանս կատարեն. նաև Քիմն կախարդն ոչխար լինէր, և գայլ. և զկիճն հեղեղատին իբրև զշուն կերպարանեալ՝ հաջեցուցանէր. և պատկերաց դիցն խօսել տայր, և զլերինս փոփոխել երևեցուցանէր. և այն ոչ ուժգք ի մարդկանէ օգուտ լինէր։ Քարւ և մուծն Մովսէս նշանս և արուեստս հրամանաւն Աստուծոյ՝ Իսրայէլի ի փրկութիւն, և ի դատապարտութիւն Եգիպտոսի։ Քարւ և

Ադեա նշանս ՚ի Կարմելոս լերինն՝ ՚ի հաստատութիւն հաւատոյ, և ՚ի կործանումն Նահաղոս, և ամենայն Արգարէիցն։ Նոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աստուածահրաշ և սքանչելի հրաշքն՝ գերահրաշ և սքանչելագործ, և ՚ի վեր քան զմարդոյ ներգործութիւն. որ միայն աստուածային և ամենակալ զօրութեանն վայել էր. որ ոչ ումեք ՚ի մարդկանէ ՚ի կորուստ, կամ ՚ի հնաս, կամ ՚ի դատապարտութիւն ներգործեցան, այլ՝ ամենայն մարդոյ յօգուտ և ՚ի փրկութիւն կատարեցան։ Ա՛ոո գալոփեան Վրէնէի յԱրուսաղէմ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, JOHN PATRIARCH.

in the tenth Century.

Ա՛մենեքեան սոքա զբոլոր աշխարհայ գիւտս ծննդոց՝ յերից որդւոց Նոյի ասեն սերեալք, և աճեցեալք, և գոյացեալք, և ցան և ցիր սփռեալք ընդ երեսս երկրի. զի թէ և զանուանս չարցն Ա՛ստուածինքն տարորոշ ՚ի մէնջ տան՝ որպէս Վ՚սիւսիւթրոս զՆոյ անուանեցով, և Վ՚սերքսէս զԱ՚եմ, սակայն պայազատութեան զբոյցս ՚ի մի տարեալ բովանդակեն. և այսպէս երկաքանչիւր սոքա աւանդեն մեզ կարգ քանի, թէ ՚ի գալ, հանդիպեալ, ժամանեալ գտրուն երկրորդի՝ հեղեղեալ, ողողեալ, ներսուղեալ ջնջեաց Տէր՝ սպառատպուռ մնքբելով զերեսս երկրի ՚ի մոլեցոյն, և յամպարշտեցոյն, և

յանօրինելոյն, և ՚ի վայրապ շամբշեալ շաղ-
ղակերաց, և ՚ի կռամոլ մարդոց չարագու-
նից. մինչ ոչ ևս ինալ ՚ի բոլոր քանակա-
նացս, կամ անբանից. բայց միայն ՚ի տոհ-
մից արդարոցն՝ (որք) հնազանդեալք եղեն
՚ի գործ արկղակերտի Նոյեան Տապանին:
ՊաՊմագր:

Այսեր Մօրկայ ձեռնեբիցուԹեամբ իմն
փուխոխուԹիւն արարեալ անուան աշխարհայն
այնոցիկ՝ որ ՚ի մերոյն Ազգամայ կարգաւ ե-
դեալ էր: Նա նախ զԱրմենին զայն՝ որ
Ադաջին Հայք անուանիւբ, Ընկերոդ Հայք
զնա Մօրիկ կոչեաց. յորում մայրաքաղաք
է Ալեաստիայ: Իսկ զԱպատովկիայ՝ յորում
մայրաքաղաք է Կեսարիայ, և Ընկերոդ
Հայք նախ անուանիւբ՝ կոչէ զնա Ընդրոդ
Հայք. և առնէ զնա Նպարքի: Իսկ զՄե-
լիտինէ՝ որ ունի զհամանուն իւր գաւառս,
է և Ընդրոդ Հայք՝ կոչէ զնա Ադաջին
Հայք: Իսկ զՊոնտոս՝ յորում մայրաքաղաք
է Տրապիզոն՝ կոչէ զնա մանն Մեծ Հայոց:
Նա զՕդրոդրդն կոչեալ Հայք՝ յորում մայ-
րաքաղաք Մարտիրոսացպոլիս, այսինքն՝
Նիկերտ. Յուստինանու նիստ: Պարձեալ՝
զաշխարհն Արնայ՝ յորում մայրաքաղաք է
Մելոտասուպոլիս, անուանէ զնա մեծ մանն
մեծ Հայոց: Եւ և ՚ի մեծն Հայոց մտանն
մինչ մնացեալ էր ՚ի ձեռս Հռովմայեցւոց՝
կողմանց անտի Ասորեստանի, Մեծ Հայք զնա կո-
չէ: Իսկ զկողմանս Տայոց ստհմանօք իւրովք
հանդերձ՝ Խորագոյն Հայք անուանէ: Ն-

զկողմն Ասիոյ քաղաքին՝ ներքսագոյն Հայք։ Այսպէս ամենեցուն սուրբ փոխոխումն առբառեալ Աւրկայ՝ գրե՛ի Ասիանա արքունի ։ Ասդ ։

Յաջորդէ զաթոռն սուրբ՝ Աճ Ասմաստասերն Յովհաննէս. որ հմուտ և տեղեակ գոլով քրիստոնական շարագծաց մանաւանդ քանի՛, և մանաւանդ այլև վարժից սեռից, և որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք՝ մինչև ցանհատ վայրն, և տարբերութեանցն ևս հանգամանացն, և պատահմանց անջատից և անանջատից. դարձեալ՝ և կրթական վարժից թեոնականաց՝ որ զարուեստին ծառոյ պտուղս առոգանապէս ներագրէ յարուեստասերն. յաւէտ լիով հմտագոյնս գրով դրոշմեալ՝ տայ եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց՝ գեղեցիկ լինի յօրինուածով Հոխացուցեալ, և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս ՚ի մխիթարութիւն գղերց եկեղեցւոյ. այլև Հառս ևս լինքնասաս քանաստեղծս յարդարեալ՝ զղջացուցիչս չարագործաց, և յորդորականս՝ ՚ի պէտս ապաշխարողականս սակի։ Վա ամենայն առաքինի քաջողջութեան զանձն տուեալ աշխատասիրաբար՝ կրթական ջանիւ զինքն զիներ յերգս Հոգևորս, պահօք և աղօթիւք, և ամենագիշեր տքնութեամբ։ Դա ՚ի ներքոյ՝ ոչ յօդեաց ասր, այլ յայծեաց ցիսիս գժոխ ըմբերս զգեստաւորեր. իսկ զարտաքոյսն ՚ի պատուական երանգէ նիւթոյ զգեստաս-

ւորեալ պաճնապաշխդիր . և ոսկի մանր խար-
տիւ աղացեալ, և խղովք անուշիւք յայն
ընդխառնեալ՝ փչեր ընդ ծաղկեալ աչեօք
մօրուան՝ որ ինքաներ մինչև ցգրապանս ըզ-
գեստու նորա : Եւ այնպէս ապա առեալն
կազմեալ՝ զի տեսողացն բարեխորհաց բարի
պատճառք խրախուճեան լինի , և ջսրացն
խակաց ընդոստուցանող պակուցումն ՚ի չա-
րէն ՚ի բարի : Եւ վասն զի ոչ այնպէս յան-
երևութից ոմանց ահից զօրութիւն ընդոս-
տուցանող մարդկան բերոյի ՚ի վատթարէն
առ լաւն , որպէս յերևելեացս գերազանն
զարդուց խստաղանք . և վասն սորին իսկ այ-
սորիկ կալաւ սովորութիւն գեղեցիկ զար-
դուք պճնազգեստեալ զանշունչ քարինս և
կեղեցւոյ . ապա ոչ յայտ առաւել մարդ քան
զքարինս բերել ՚ի զարմացումն զտեսողն :
Սակայն այսոքիկ ոչ ամենեցուն , այլ նոցա
միայն՝ որոց դատողական ·հաւատացեալ է
գործ : Եւ վասն զի տեսեալ էր զայրն Ա-
ստուծոյ Մատիկան անն Տայոց Ալ իլթ անուն,
և եղև նմա գնալ առ Ա.միրապետն, և պատ-
մեր նմա զվայելչութիւնն Յովհաննու : Ոսկ
նորա զնա տեսանել ըղձացեալ՝ վաղվաղա-
կի զմի ՚ի ծառայից իւրոց առաքեր , առ
նմանէն զայրն Ա.ստուծոյ ածել : Ոչ ըստ ածաւ
բազում պատուով յարքունական քաղաքն ,
պատգամ առնու Ա.միրապետն յղեր՝ զի ըստ
սովորականին զարդու զինքն զգեստաւո-
րեալ՝ այնպէս զնա տեսցէ : Ոսկ նորա զա-
ւարտահասակ դիտակն իւր Լև առաւել փայ-
լուն և պաղպաջուն զգեստիւք պճնաւո-

ըեալ, և զաղեբեկ ծաղկեալ մօրուան ոսկե-
փունջ կազմեալ, և զոսկևանկար գաւազանն
որ 'ի փայտից ոսպնիազից, 'ի ձեռն առեալ՝
այնպէս ասլա գունեան այրն և թիկնաւէտ՝
առ Ա՛միրապետն մնանէը։ Օ՛որ տեսեալ՝
հիացեալ զարմացեալ ընդ գեղեցկութիւն
նորա բարեհամբոյր հասակին, շքեղաշուք
դիտակին, ասլա եդաւ աթոռ՝ նստել նմա։
Եւ սկսաւ հարցանել ցնա Ա՛միրապետն.
Ո՛նդէր՝ ասէ, այդպէս պձնապաճոյճ լինիս.
վասն զի Ա՛րքիստոս ձեր զպարկեշտ և ընչին
զգեստ պատուեաց, և զնոյն արարին աշա-
կերտք նորա։ Նակ նորա պատասխանեալ՝
ասէ. Ա՛նպատեա Ա՛րքիստոսի Ա՛ստուծոյ մե-
ծոյ առ 'ի մէնջ առեալ մարմնոյն զԱ՛ստուա-
ծական փառսն ծածկեալ լինէր իբրև վա-
րագուրաւ, սակայն Ա՛ստուածային զօրու-
թեան սքանչելիք նշանայն ո՛չ ծածկեցաւ,
այլ յամենեսին հեղաւ. զնոյն ընորհ նշա-
նացն և արուեստից տալով 'ի ձեռս աշակեր-
տաց իւրոց՝ որ բաւական բերէր զմիտս մարդ-
կան զարթուցանել յերկիւղն Ա՛ստուծոյ.
և ո՛չինչ սիրտոյացան զգեստուց ահագոլաց։
Նակ արդ՝ վասն զի փակեալ է 'ի մէնջ բա-
զում նշանաց նոցա ընորհ, վասն այսորիկ
ահարկու զգեստիւք լիմն հնարիմք զսլարզա-
միտ խակութիւն մարդկան ընդ ոստուցանել
յերկիւղն Ա՛ստուծոյ։ Օ՛այս ասլա և 'ի
մնրմնաւոր Ա՛ռաքաւորսդ 'ի ձեզ է տեսա-
նել. ծիրանեփառ և ոսկեձամուկ զգեստիւք,
և գեղեցիկ զարդուք և զինուք առ 'ի յահ-
արկութիւն բազմաց թերիւ. զի թէ խա-

ըստնապգեաց զձեզ՝ի մարդկանէ ոք տեսա-
նիցէ, և գծուծս և խոշորս՝ ոչ ոք պակու-
ցեալ զարհուրեսցի՝ի փառացդ ձերոց, որ
ոչն երևի: Այլ եթէ զբովանդակն զիմ
գտանել խուզես, հրամայեսցէ Տէրութիւնդ-
քո՝ արտաքս սակաւիկ մի գնալ արանցդ:
Այն ասա՝ի միայնանալն՝ մերկացաւ առ՝ի
զգեստուէն արտաքնոյ, ցուցանելով նմա
զցփսիան այծկայս՝ ասելով. Երկութեան
անդամոցս այս է զգեստ, իսկ արտաքոյդ
միայն են՝ի տեսիլ արտաքնոց: Այս իբրև
զձեռն՝ի ցփսիան սրկեալ լինէր Սմիրա-
պեան, դժգմեալ խոժոռեալ՝ քստմնելով
ասէր. Ո՞ւրդ արդեօք կարէ մարմին մար-
դոյ տևել ժուժկալել այսպիսի դժոխըմբեր-
բելի քրձի, եթէ ոչ յԱստուծոյ տուեալ
լինի նմա համբերութիւն: Այս ապա քաջմա-
հարկի պատուով զնա մեծարեալ, և եօթն
անգամ զնա պաճնաւորեալ գեղեցիկ ինն և
արքունական զգեստիւք, և գանձս ևս ոսկ-
ւոյ և արծաթոյ նմա պարգևեալ՝ յուզարկէ
յիւրական աշխարհն: Որոյ եկեալ, և կե-
ցեալ ամն սակաւ՝ վախճանի, կացեալ յա-
թոռ Հայրապետութեան ամն մեռասան:
Ամէն:

Մաշտաւորք աստուածասէրք և բարեպաշ-
տօնք, իշխանք, և պէտք, և հրամանատարք
Հայոց, եղբարք մեր, և առաքեա՛լք եկե-
ղեցւոյ, և փառք Քրիստոսի: Ընդերս առա-
ջի մատուցանեմ ձեզ զպիտառուԹիւն զայս
բանի, զի իբրև ցուցող Հայելի՝ի միտս ան-
բասիրս սոված զձեզ հրաւիրեալ, և զան-

դուքն և զանկարդ Համարտակելն արտա-
հալած արարեալ՝ անպատուհաս ես մնացից
յահեղ մըրկէ աստի, և յահագին ալեացս
փրփրեցելոց, և դիղացելոց, և կուտակե-
լոց, և դիմելոց ՚ի վերայ Ա՛քանաղեանս
գրոհի։ Արտափեալ զուիացեալ դողացաւ
սիրտ իմ, զի տիգօք աչաց խաղաց Տէր ՚ի
վերայ մեր՝ սակս անօրէնութեանց մերոց։
Եւ վասն զի ցարդ ևս յարակցեալ յու-
մինք անդնդասպառ չարեացն յորդութիւնք
խորութեանցն՝ և ոչ հանդարտեաց, վասն
այսորիկ ես բռնադատեցայ գալ յայս, և
առնել տալ տագնապեալ զպատմութիւնս.
նախ ՚ի կրից աստի զիս փութացեալ՝ որ
շուրջ պատեալ պաշարեաց զմեզ. և ապա ՚ի
հրամանէ Ա՛տաւորաց ՚ի վերայ հասեալոց՝
որ զիմն ձնձեալ բախեաց զիմաստիցս գոր-
ծարան, և հաւանեցոյց ոչ ինչ գոլ ինձ յայս-
միկ գանդաղելի։ Սակայն ոչ գրաւորական
անձայն տառիւք միայն՝ որ ՚ի վեր քան զիս
է ձկտումն իրի՝ զմտաւ ինչ ածեալ, այլ բո-
լորձայն հնչմամբ հագագաստիւռ ձայնիւ
դարուց ՚ի դարս զայս ձեզ աւանդեալ ուղ-
ղախոհ իմացուածիւ. զի մի՛ անհասութիւն
ծերունեացն զբուացայ՝ այլոց ոմանց վէպս
ինչ խարեալ խղճի մտաց կարօտ ձեզ կա-
ցուսցէ. այլ զի զաչս արձակեալ յարտա-
դրութիւն քանիս մաքրական մտաց՝ անքա-
ղցասպիս ՚ի մանուածոյ աստղեղոց աստի տես-
ցի զկնի եկելոց իւրաքանչիւրոցն անցնու-
րոյն զբուացայ աստուգութիւն՝ ըստ ընթեր-
ցանութեան հանդիսի քանիս։ Եւ այս՝ ցայս

վայր հերիքասցի ։ Այլ ես այսուհետև ՚ի
մաղթանս առաջի ձեզ ընթերցողացդ մա-
տուցից , մի՛ քեզիլ ձեզ և վերատին յայս
տեղի տանջանաց , յորս և այժմ առ հասա-
րակ թմբրեցաք ՚ի ծուխ մեղսատրաց ։ այլ՝
ախորժաբար լսող լինել աղերսալի խմոյս
բանից , և բաղձայնութեան խրատու ։ Ի-
նել ձեզ զաւակ լաւագունի պատարագեցե-
ղոյն Աբելայ , և զրկիլ յորդիս Աստուծոյ ։
այլ՝ ո՛չ խառն ընդ անիծեալ եղբայրազրաւն
Կայենի զարմից կապիլ՚ի կնատ , և ՚ի մեղ-
մեխ , և ՚ի վայրաքարշ դատերս մարդկան ։
Այ՛ ՚ի ՚ի չար ուղևից Յանդարամետին զրա-
հեղեղ սատակմամբ ողողեսջիք , որպէս յայն-
ժամ երկնասահան և երկրահոսան ջրահեղ-
ձոյց մարդիկք Նոյեան դարուն ։ այլ՝ աւե-
տարանական ուռկանաւ արկեալ ՚ի ծով՝
զուսպ և ամիծոփ վախուք ժողովեալ կարթիւք
յարքունական կայանն ։ Այ՛ ի անկանուն կրօ-
նիւք ամբարձջիք ՚ի տան Նանրութեան , և
հրացայտ ցոլացութեան ծծմբոյ դիւաշունչ
հողմոյ զձեզ պտուտեալ՝ տոչորիցէ կորստեան
կիզմանքն ։ այլ՝ երեալք ՚ի Սոդոմայ , այլև
՚ի Սեդովմայ՝ ևս յիմանալի բարձրութիւնն
սքանչելապէս լերանցն յաւիտենից թևա-
կոխեսջիք ։ ուր պայծառապէս իսկ բորբոքի
ջահ սրբութեան զգուշացեալոցն յարքնու-
թեան ։ Այ՛ խոտորեսջիք յարքունական ՚ի
կուռ պողոտայէն յաջ կամ յահեակ՝ թողա-
ցուցեալ զկամն ձեր զկնի պատրանաց պատ-
րողին ։ վասն զի յերկոցունց կողմանց դա-
րանակալ է աւազակաց բազմութիւն , և

մահ եթ բաժին անկելոցն ի ձեռս նոցա։ Այլ մեղիցէ ձեզ կարծեցեալ արեգակն տուընջենեային, և կամ լուսին գիշերոյ դիւամբ լար խռովութեամբ. որ մերոյին քննութեանս կրկնք խաբեացն զմեզ, և խաբէ. այլ՝ զանց արարեալք զփաղաքշական խորհրդովք ախտից յողդողդելոցն. զի ձշմարիտ արեգակն արդարութեան ծագեսցի ի սիրտս ձեր սիրոմբ Աստուածայնով։ Այլ քրիստոսաւոր վարուց չարութեամբք նաւաքեկեալք՝ ապաշաւեսջիք զուղիղ և զձշմարիտ զձեր վարս, և կոխան դառնայց եղիջիք երբև զաղն անհամեալ. այլ՝ ողջ ամբողջ և անխախտուտ մնասջիք ի պարսաւագիտէն դժրողէ, խնդութեամբ ժամանեալ ի նաւահանգիստն կեանց։ Այլ զպարծանս չարչն առաքինութեանց ձեզ բաւական վարկեալ, և ի նոյն ապաստանեալ՝ պղերգութեամբ անձանց ի վինս խորափիտս ընկղմեսջիք. զի թէ հօր հմնաբար տեղեկութեամբ ղեկավարել զինչ օգուտ յայնմանէ որդւոց բերցի, եթէ ի նաւաքեկութեան կորնչիցի. վասն զի ոչինչ շահ ղհօրն հմնութիւն կարծեմ լինել որդւոց նաւաքեկութեան։ Այլ օտարացեալք եղիջիք ի Աօրէ՝ որ վերստին զձեզ ծնաւ նորոգատուր քանիւն կենդանականաւ ի կեանն կենդանի։ Այլ խաբիցիք չարգանդէ լուսատուր և փրկական զգեստիւն՝ որով վայելչապէս զգեստաւորեցոյց չարգանդէ Աւազանին։ Այլ խօսիցիք ստութիւն՝ զառեալն երբև զչառեալ նանրապէս համարեալ, և ժխտող լինել որդւոյն սիրելւոյ

Աստուածական պատգամացն լեռնացելոց, այլ՝ եռանդնասէր սրտի ջերմութեամբ հեռանալ յայնմանէ՝ որ ինչ մեսասակար և հաւկառակ է հոգւոյ. և՝ ի բաց զտխրութիւն տարերայս անոտեաց մերկանալ մնքուր միօք։ Յոպէս Թերևս և Պրովքեականացն և այ երբեակ դասու խորին խորհուրդս թևակոխեալ և դուք, և վեցթևեան երագաշարժ գործեօք իմն զօրհնաբանականն ըստ պիտոյս բաժանեալք. ոմանք խուճապելով զսպիլ՝ ոչ և այ արժանի ըստ որում վարկեալ. իսկ այլովք ոմանք վերշարժիլ՝ ի միանգենական փառատրութիւնս՝ ըստ պատահելոցն պա րագայութեանց՝ ի պաշտօն Աստուածայնոյ փառացն։ Պա հանդիսապէս արժանի զըտ ջիք յետ այսմ ժամադրութեան կենաց՝ մտանել յամպ խմանալի Պինեական լերինն. ոչ՝ ի փորձ հրոյ՝ ի վայր բերեալ ըստ պայմանի խառնոյ յաւուրն ընտրութեան, այլ՝ ամբաստ թևօք սլացեալ՝ ի վերին Պիոն՝ ի հայցել զտեսութիւն Աստուծոյ. ոչ վիմով ծեծոյն զեղջել, և զչետոյն միայն տեսանել, այլ՝ զբովանդակ նկարագիրն փառացն Տեառն դէմ յանդիման նկատել. և զայժմու փոքր՝ ի շատե խեղամտութեամբս զանց արարեալ՝ ծանօթք եղիջիք պատրաստական վայելչութեանն. և յայնժամ գիտասջիք՝ եթէ որպէս նայն ծանեաւ զձեզ։ Աբր՝ այսքան բան ձեզ խրատու բաւականասցի։

Պ էջևէան։

ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ, THOMAS ARZERUNENSIS.

in the tenth Century.

Ստամնօր սակաւուք բացայայտեցից զորպիսուԹիւն բնակչաց լերինն (որ կոչի ԽոյԹ) Թէ զնայրդ, կամ որպիսի ոք են, և որպէս հնարաւորեալ յապրուստ անձանց՝ վճարեն զկարևոր պետս իւրեանց՝ լի աշխատուԹեամբ, և սաստիկ տառապանօք: Այս բնակուԹիւն նոցա ՚ի խորաձորս, և ՚ի փապարս լերանց, և ՚ի պրակս մայրեաց, ՚ի գագաԹունս լերանց: Այս բնակեն առանձին ըստ տունս ազգաց. և այնչափ ՚ի բացեայ են ՚ի միմեանց, մինչ ԹԷ ոք յարանց զօրաւորաց ՚ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ, հազիւ ԹԷ ուրեք կարիցէ առնուլ զբոմ բիւն ձայնին՝ իբրև ՚ի վիմաց ինչ արձագանգ լինելոյ կարծիս բերելով: Այս կէաքն վրիպեալք ՚ի բնական հայրենի լեզուէն յաղագս հեռաբնակն լինելոյ, և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք. և այնքան խրԹնի անծանօԹք պատահեն առ միմեանս, մինչև Թարգմանաց անգամ կարօտանան: Այս զպետս կերակրոցն վճարեն ՚ի սերմանց ինչ, առաւել ՚ի որեակ կոչեցեալ սերմանէն՝ զոր ոմանք ՚ի սուվ ժամանակի հայ անուանեն. և զնոյն ոռոգեալ ոտիւք ՚ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատուվք սերմանեալ: Այս է զբեստ նո-

ցա ասուիս ՚ի ծածկյալ մերկութեանն. և օդ ոտիցն հնարաւորեն զձև կօշկաց ՚ի մոր-
թոց այծից կազմեալ. և միով կերակրով, և միով հանդերձիւ բաւականան զամառն և
զձմեռն: Եւ են առացեալ զինս աշտեայս՝ հանապազ կրելով ընդ ինքեանս ՚ի պատրաս-
տութիւն գազանացն՝ որք ՚ի լերինն քնա-
կեն: Իսկ ՚ի ժամանակս հասելոց թշնա-
մեաց յերկրին իւրեանց՝ գան միաբան լեռ-
նայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տի-
բասերք: Իսկ վասն ձեանն անկայուն զօ-
րութեանն՝ որ այն ինչ յամպոյն ՚ի վերայ
գեղեաւ լինին, հնարաւորեալ իւրեանց
փայտս իբրև զանուրս չուանօք պարունա-
կեալ շուրջ զոտամբն՝ դիւրաւ ընթանան ՚ի
վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: Եւ
են գազանաբարոյք, արիւնարբուք՝ առ ոչ-
ինչ համարելով զսպանումն եղջերուցն հարա-
զատաց, նաև զանձանց և: Եւ կոչին տո-
քա մեկնակազինք սուրհանդակք քնակեալք
՚ի լերինն՝ որ բաժանէ ընդ Ղէնիս, և ընդ
Տարօն. և յաղագս խրթնեի և անհետազօ-
տելի խօսիցն, և բարուցն՝ կոչին Խուե-
րոց անուն և լեառն Խոյթ անուանի: Եւ
գիտեն զԱզամոն զհին թագաւորն Ա-
րդամազեստացն Հայոց. զոր հանապազ ՚ի բե-
րան ունին: Ասքա են գոհեհաք Ղսորոց՝ ուր
լուիցին, զհնի Ղդրամելեքայ և Ասանասարայ
որդւոյ Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ղ-
սորեստանի և Ղինուէի. յորոց անուն ին-
քեանք Ասանասեայք զինքեանս անուանեն.
և են հիւրասէրք, օտարընկալք, պատուա-

Այլ երանելիս այս Վէորգ՝ մինչ կայր ընդդէմ սրոյն, և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ. և ոչ փոքր մի գիծ կարաց ցեալ հարկանել՝ի մարմին սրբոյն զկոցումն սրոյն՝ դարձաւ՝ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէր ոչ հատանիցէ սուսերն։ Այլ առեալ՝ի ձեռաւ նէ նորա զսուսերն՝ շողացուցեալ հայեցաւ յայսկոյս յայնկոյս, և ասէ. Այլ անարի վատ արանց, և կանացի այր, թշուառական զինաւոր, շուն անպիտան Տեառն իւրոյ. և հարեալ զպարանոց դահճին՝ ի քաց առ զգլուխ նորա։ Այլ զարմանք կալան զամենայն բազմութիւնն՝ի վերայ պնդութեան սրտին, և զօրութեան ուժոյն, և քաջութեան նահատակութեան՝ զոր գործեաց երանելին Վէորգ։ Այնպէ։

Իբրև ձմեռն փոքրացաւ, և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ, և օդն մտաւախղաձև միգախառն յատակեցաւ, և հարաւային ջերմագոյն օդն հնչեաց՝ի խոբազոյն դաշտն քաղաքին Վէնեաց, և ընդարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զգօրութիւն, և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեան իւրեանց, և աշխատասէր մշակքն պատրաստեցան՝ի գործ երկրասէր վաստակոյն, և որսորդքն զիւրեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւն, և հովիւքն տաւաղելով զգաւիսն քշէին՝ի դալարաբեր

հուլիան, և ամենայն ոք լուտ ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն՝ մի զմիով եւանելով։ Լ։Նդ։

Եւ արդ՝ մեր բաղձալի սիրով քեռն հաւրեալ զգեղեցիկ պատմութեանց՝ զբազմօք զանց արարաք զրուցատրութեամբք, մնաւանդ որ անհուն շատաբանութեամբք էցեն լի՝ անօգուտ մեզ առ ի պատմել, և անշահ լսողաց առ ի լսել. ուստի և յայսցանէ ի քայ որոշելով զմեր միտս՝ յօգտակարն մեր փութասցուք պատմութեանցն հանդէս. և անվրէպ յայտարարութեամբք որ ինչ ի սկզբանց անտի շինուածեան աշխարհիս Հայոց ի Հայկայ աղեղնաւորէ, և ի նորուն զարմից. և ցկաթոտ և վաւաշոտ Շ ամիրամն տիկնին Լ։որեստանեայց, և ի նմանէ յայլս. և յայլոց ևս յաւէտ ձեռակերտք և շինուածք յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում եղեն. մեր առ ամենայն անձամբ հասեալ, և աչօք տեսեալ. ձկտեալ և ի հեռաւոր աշխարհս՝ մինչև ցԿղարջս, և Շ ուշերթացիս, և առ լեռամբն Կաւկասայ, և յԼ։հիզ մինչև ի մուտսն ի Կազպէ, և ընդ Տայաստան, և ընդ ամենայն Հիւսիսականս, և ընդ Լ։րևելս՝ ի հետիոտս գնալով տեսաք զգործ քաջաց և նախնեացն մերոց՝ զմերս դրաւեաց զմիտս և զտեսութիւն հրաշակերտս, և քան զբազումն նորանշանն և զարմանալին Լ։զթամիսր։ Որ թէպէտ և յառաջ քան զայսոսիկ ի Կաւթայ Կահառունւոյ, և ի Կազաւիրաւ հայ ասի առեալ շինութիւն՝ որ զԿաղես տինացւոց աշխարհն հանդերձ Հիւրկիա-

նեաւ քահանայիւ գերեալ ած զնակեցոյց յերկիրս մերում, սակայն ամենեքեան սոքա իբրև ի տաղտուարի, և կամ որպէս ի հիւղս մրգապահաց բնակեցան յերևելի յայնմիկ կղզւոջ կոչեցեալն Աղթամար, մինչև յաւուրս մեծի արքային Հայոց Վաղկայ։ Որ քաջակորով գիտութեամբ նայեցեալ ի տեղւոյն զբօսանս, և ծանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց՝ ձեռնարկէ հիմնարկել զնա ահեղ լիմն և զարմանալի հիացմամբ. հրամանն տուեալ բազում արուեստաւորաց, և անթիւ մարդկան ըզհատեալ վէմս ծանուննս և դժուարակիրս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարինն խորութեան. և ժամանակաւ ևիչ այսպէս ջան յանձին կալեալ մեծի Արքային՝ և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայատակն ամբարտակ կանգուն հինգ ի վերայ բարձրացեալ մկանանց ծովուն։ Որ մնացն աչօք իբրև ի ցամաքի շարայարեալ տողադրէ զհաստակաւոյցն վիմաց կարգս. յորոյ վերայ լար եդեալ՝ ձգէ զպարիսպն շուրջանակի իբր ձիսրշաւանօք հինգ։ Եւ պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբաձիրձ՝ լայնանիստ բրգամբք, և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ. անկիւնաւոր խորանանմանն. տախտակաձև յինքեան ունելով դահոյք զբօսանաց. յորում՝ հանդերձ որդւովք, և աղատակոյտ զօրօք միշտ ուրախ նստայր Արքայ։ Նոյնպէս և զգլուխս պարսպին ածեալ՝ ի կիրճս դժուարածս քարանձաւին՝ ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ։ Ի շըր-

թունս խորայատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահաւորեաս, հաստահեղոյս, բևեռասլինդս. որով և զմասն լինչ ծովուն ՚ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս ինն ներքոծեաց. բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանդիստ՝ բարձրադոյն հրաշակերտեաց քան զՔեքսանդրիոն ՚ի Աակեդոնին քաղաքի: Եւ որպէս լինձ թուի, զանցոյց զարմանալեօք զՔ ամիրամեան փորուածոյ սենեկօքն, և զամբարտակաւ գետոյն՝ որ առ ստորոտաւ լերինն Աարագայ: Օ ի նորայն գնենա ՚ի ցամաքի, նակ սա ՚ի մեծ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս, և զգործս իմաստնոցն առ՚ի քան զինքն եղելոց: Եւ այնու հետև ժողովեալ ՚ի դուռնն Քրքայի՝ իշխասնաց, և տերանց, աղատաց, և ռամկաց, Եպիսկոպոսաց, և Վրօնաւորաց, զի ամենեքեան ճն անդր փութապէս շինուածս և ձեռակերտս հաստատեսցեն. հրամայ տալ՝ զի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից ՚ի թշնամեաց եկելոց: Եւ Աագաւորն գԹագեալ՝ ՚ի արգելու զինդրեալ պարգևան: Եւ զինի հնգից ամաց՝ յորմէ հետէ սկսան շինել, պայծառացեալ բարձրացաւ շինուածքն քաղաքին առաւել քան զառաւել: Այնժամ և իւր իսկ Քրքայի ամենիմաստ հաստողութեամբն հանդերձ բազմաւրուեստաւորօք զլար Ճարտարութեան ՚ի ձեռն առեալ՝ գծել միանգամայն և գծագրել նշանակել առ ստորոտաւ լերինն՝ որ է պագաթն կղզւոյն, զտեղիս զբօսանացուցա-

նողս վայելչաւորս ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան՝ ձգելով պարապուն, յարդարելով զիողոցս, և դարս դարաստանաց, և գահս ըստ գահից տերու-թեանց, և քուրաստանս, և պարտէզս քուրաստանաց և ծաղկոցաց՝ որոշեալ հովիտս. զորս վաղվաղակի ածեալ՝ի կատարումն հասուցանէ զամենայնն. և ս և ծառատունկ բազում՝ զոր ոռոգեալ արբուցանեն՝ի բարեհամ անապատ աղբերէն, որ ակնարկելովն խնամողին Աստուծոյ կայ՝ի մէջ քաղաքին: Եւ քանզի էին՝ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք՝ արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց երկրէ, որք ո՛չ վըրիպէին առնել զոր խորհէր Աքքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր կատարումն: Ալեմին՝ի նոցանէ ձարտարապետի առն խմաստնոյ և հանճարեղի՝ հրամայէ Ռատաւորն շինել տաճար մի քառանկիւն՝ քառասուն կանգնաւորեալ զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և՝ի բարձրութիւն: Որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածն, գունդ անապակ կրոց և քարի իբրև ղհալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ: Եւ շինուած տաճարին՝ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին՝ի թռիչս կազմեալ, առանց սեանց ունի զհաստատութիւն. և է որ (որ և է) արդարև արժանի զարմանալոյ՝ի վեր քան զմիտս: Ալեմն և խորանն համարակիցս, և անկիւնս, և շրջապատս գե-

պապաձոյձն՝ անթիւ մտաց, և անընդելի ա-
չաց։ Անդի և գումբեթս երկնահարթս, ոս-
կեզարդս, և լուսաձաձանչս. յոր թէ նայել
ոք կամիցի, իբր թափաւորի ինն պատիւ առ-
նելով՝ նախ՝ի բաց առցէ զնոյր գլխոյն, և
ապա տանջեալ զպարանոցն՝ հազիւ թէ նըշ-
մարել կարիցէ զլանաձան դէղոցն կերպա-
գրութիւնս։ Այս է կարգ շինուածոյ տաճա-
րին ահեղ ինն և զարմանալի. և այնքան
բարձրագոյն և անհաս է մտաց՝ զորօրինակ
թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորա-
նի մինչ զբազումն ժամս նայեսցի, արտաքս
ելեալ՝ ոչինչ յոլոց նայեցեալն պատմել ու-
մեք կարասցէ։ Այսան զի էն՝ի նմա ոսկե-
զարդ գահոյք՝ յորս բազմեալ երևի Այրքայ
նաձելի ձոխութեամբ, շուրջ զիւրեաւ ու-
նելով պատանեակս լուսատեսակս՝ սպասա-
ւորս ուրախութեան. ընդ նմին և դասս
կուսանաց, և խաղս աղջկանց զարմանալոյ
արժանիս. անդէն և սուսերամերկաց հոյլք,
և ըմբշամարտուկաց պատերազմունք. անդ և
դասք առիւծուց, և այլոց գազանաց. և
անդ երամք հաւուց զարդարեալք՝ի պէս-
պէս պաճուճանս։ Որ եթէ զամենայնն՝
որ՝ի նմա գործք, ի թիւ ոք կամիցի ար-
կանել, քազում աշխատութեան պէտք էն
անձինն, և լռոյց։ Այս է փառք տաճարին
ահեղ ինն և զարմանալի. եղեալ էն՝ի նա
դրունք հատուածոյք մանր յօրինուածովք,
և հրաշալի գեղեցկմամբ՝ի բանսն իւր-
եանց. երկբացիկք էն, օդաբեղք, զովա-
ցուցիչք. իսկ հուպ առ միմեանս գոլով եր-

ևին երբև զմի պատկեր : Պատուաց մեզ և հաւատարիմ Աստիկան մի ՚ի գործավարաց քաղաքին , եթէ եմուտ ՚ի վինուաճ տաձարին երկաթ լտերս երբև երկերիւր հազար . և հաւաստապէս ձշմարտութեամբ նուաղեաց զասելն , քան թէ առատութեամբն յաւելեաց ՚ի բազումս : Այլ և նիստ փառաց տաձարին յամենայն կողմանց գաւառին ՚ի մէջ քաղաքին երևի երբև զմեծ մի բլուր՝ ոչինչ կուաղեալ բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կղզւոյն : Պարսպէ անմերձենալի ամրութեամբ և զծայրս ամրոցին . և շինեալ ՚ի նմա շուքմարանս մեծամեծս , և համքարանոցս , միանգամայն և տունս գանձուց , և աստղակնաց անհուն բազմութեանց : Այլ եթէ զամենայն զարդ վինուաճոյն , զոսկեզարդ փողոցսն , և զգումբեթաղկապ խորանայարկսն , և զզանազան տեղիս գահոյիցն՝ որք առաւել այլակերպութեամբ մի քան զմի գերահրաշապէս փայլեն , և ըստ արժանեացն մանրամասնաբար գուսանել որք կամիցի , կարծեմ թէ յանհաստու ձկտեալ ուստանի , որ և հասանելոյ չէ կարողութիւն : Այլ մեր զդիպողն և զպատշաձուորն՝ որքան է կարողութիւն , ՚ի լրումն ընծայեցաք գեղեցիկ քոյոզ ախորժակաց՝ ոմն քաջագործ և տան մեծի արքայական Աստուծ : Այնք

Այս քանզի նախածանօթ և յառաջգիտութեամբ Աստուծոյ զիտելով զնա (զԱգիւկ արքայ) թէ այնպէս լինելոց է՝ անդստին յորովայնէ մօր իւրոյ ելից զնա խմաստու-

թեամբ հոգւոյն. վասն որոյ և ընդհեաց նմա պատկեր լուսազարդ, և հաստակ փառաց անհամեմատ ի մէջ ամենայն մեղեաց բառնական ազգի. հարթ և ուղիղ հաստակաւ. վայելուչ և պայծառ երեսօք. հեր գլխոյ նորա թխակերպ՝ գանգուրագեղ գիսաւորութեամբ, ուղեբեկ ջոկացեալ ի վերոյ ասետափառ ձակատուն յոյժ խուռնախիտ թանձրութեամբ. մրազարդ կամարաձև կրցուածք յունիցն (յօնիցն), և բիբք, և արտևանունք հանդերձ պաղովք վկայեալք իբրև զշուշան ի հովիտս ծաղկեալ ծաւալին հրաշազարդ յօրինմամբ. ունէք երկայնագոյնք, և վայելուչք. լսելիք դիւրալսելք, և դիւրահասանք ի բարիս. և պայծառք լուսահրաշ նմանեալ գունով չքնաւունք նորա՝ իբրև վէմ կարմիր. առումունք նորա հուսկ առ միմեանս՝ զտեսլեք յաղտոյ. տեգք մուրուաց նորա զօրէն մանուշակի ծաղկեալք ի վերոյ գունագեղ այտից՝ ի կերպս զբաղթնոց տեսողացն զնա ցուցաներ։ Ա՛նդ։

ԽՈՍՐՈՎ, CHOSROES.

in the tenth Century.

Չկէք ինչ ընդհ՝ զոր առանց Ա՛ռաքնորդաց տայ Ա՛ստուած։ Ա՛յլ՝ վերստին ծնընդեանն՝ որ ի Հոգւոյն, և կենարար մարմնոյ և արեան Տեառն քաշխատմն, թողութիւն մեղաց դարձելոցն ի խոստովանութիւն ապաշխարութեան, ամուսնութիւն

ղուգուԹեան , ընծայից , և նուիրաց , և պարգևաց մատուցումն , և հոգւոցն հանգուցելոց առ Քրիստոս յուզարկումն , և մարմնոց նոցա ընդ ամենապատիւ Յաստուծոյ աւանս բանալ , և որ այլ ևս կարգք են Քրիստոնէականք , և օրհնուԹիւն եկեղեցեաց Յաստուծոյ , և սպասուց նոցա , կամ նշանի խաչին , կամ Յիւռոնին գերագունի , կամ երկրի , կամ ջուրց , տնկոց , սերմանց , պըտղոց , անասնոց , ախտից քուժելոյ աստուածատուր պարգևի մինչորդք՝ Յոգւոյնորդք եկեղեցւոյ լինին : Ա՛ե՛ն . ծամախոփ . էջ . 44-45 :

Ա՛ր զինչ է Կաթուղիկէն : Տիեզերական . զի ամենայն եկեղեցիք Հղղափառաց՝ որ ընդ տիեզերս են , մի են : Ա՛ի Քրիստոս յամենայն եկեղեցիս է՝ որ ըստ Յոգեբէնն հաւատոյ լինի , զոր և Յոգեբէական կոչեմք : Որ զի Թէ և բաժանին ըստ տեղեաց , այլ ոչ երԹեք ըստ ժողովրդոց : Ո՛չ ի՛ ծագս մինչև ի՛ ծագս երկրի՝ ուր և հաւանիցէ Հշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս Հղղափառաց , իւր եկեղեցի է . և ոչ որոշէ զնա՝ ոչ աշխարհն , և ոչ լեզուին օտարուԹիւնն . այլ ընդունի որպէս մայր ի գերկս սաստիկ սիրով : Ա՛ե այսպէս ամենայն ուրեք Տիեզերական կոչի՝ վասն տիեզերաց հաւատացելոց զգրուանս քանալոյ , և զգիրկս սիրեալոյ : Նրբե . 134 :

Ա՛նդրեասդուք մինաւանդ զլոյս իմանալի ընորհացն ծագել ի՛ սիրտս մեր , և ՀառաջայԹարձակ փայլմամբ զամենայն զգայա-

ըանս մեր լուսաւորել։ Զ ի յարևելից մտաց մերոց մինչև ի մուտս արևու թանձրագոյն մարմնոյս՝ մի գտցի ինչ նսեմացեալ։ Եւ առաքինութեամբ հոգւոյն սրբոյ ձանաչ պարհուրդեսցուք միշտ յերկիր աւետեաց. ուր ունելով զկնի խմորեալ ինչ՝ որ ե քացախ խառն վարք չարութեան, և ծանրացուցիչ պատաղումն վայրաքարշ կենցաղոյս, և ուռուցիկ փքացումն թեթևամտութեան՝ առնել յամենայն տեսակս չարութեան։ Եւ ովսիանաքար զսպեալ ունելով ի մաղղի մտաց մերոց զոսկերն Յովսեփայ՝ որ ե նշխար պատուիրանաց փրկչին մերոյ Յիսուսի։ Եւ մեծաւ հոգւաբարձութեամբ ընթացուք զառապար կենցաղոյս, զի մի ծանրաւով տոչորման մեղացն կիպեսցուք՝ զբերեալք ի կենդանի ջրոյ աստուածայինն պատուիրանացն. լեզի և դառն ունելով ջուր՝ զջար ուսումն առայօդ պատմութեանց, զոր չէ կարելի աստուածատես միտք ըմպել։ Եւ անաւանդ թե խաւարելոցն մտօք, և զբերելոցն ի չհմարտութենէ՝ դառն թուի քաստուածային օրինադրութիւն, և անախորժ ձաշակ։ Եւ ինչև խաչին ընդհիւ մակարդեալ՝ մաքրեսցին ձաշակելիք մտացն յաղտից, և խմասցէ զքաղցրութիւն պատուիրանացն Աստուծոյ։ Եւ այն որոյ կօշկօք առաքինութեան, և հաւատոյ ամրութեամբ զոտս մտաց մերոց պնդեսցուք, զի մի ի խարամանեաց օձին վնասիցեմք։ Եւ ի բարձրութիւն քերմի ձողակերտ խաչին սեղանոյ միշտ ակնակառոյց եղեալ յառեսցուք, որով զՅիսուս

տեսեալ՝ վրկիմք ակրապէս, և կենդանա-
նամք զանմահ կենդանութիւնն: Այբե. 253-254:

Պրեալ է, թէ՝ յարտաքնոցն Հմաստասէր
ոմն տուն շինեաց, և դեղագործ ոմն ասաց
ցնա. Ետիւ զտուն քո, զի էկեալ գեղեց-
կացուցից զնա զանազան նկարուք պատկե-
րաց, և անգուածոց յօրինուածովք: Այս
ասէ Հմաստասէրն. Այո, յառաջ նկարեա,
և ապա՛ ի վերայ ծեփեցից. զի զգարշելիսն
ծածկեսցեն ի բարւոք՝ քան թէ յայտնել:
Այս մեծ Յովհան գրեալ է բերանն ոսկի,
թէ՝ զոմն Հմաստասէր՛ ի հայկերոյթ կոչե-
ցին. և նա իբրև եմուտ՛ ի տուն, և բազ-
մեցաւ, նայեցեալ՛ ի վեր, և՛ ի վայր, և՛ ի
չորեսին կողմունս տանն՝ ետես զանազան
գունովք զարդարեալ, և ազգի ազգի երան-
գովք պայծառացուցեալ. և լցեալ զբերանն
խոտով՝ եթուք յերեսս տանուտեառն: Այս
իբրև հարցեալ եղև, թէ՝ ընդէր արարեր
զայդ, պատասխանեալ ասէ. Այս զի՞նչ ճշա-
արարքի. զոր դուք պատուեալ էիք, և ես
պատուեցի. և զոր դուք ո՛չ էիք պատուեալ,
և ես ո՛չ պատուեցի: Նայեցայ յամենայն
տունս, և տեսի զարդարեալ ամենեքումբք,
և ո՛չ կարացի Թքանել՝ զի պատուած էր.
և զերեսս տանուտեառն՝ տեսի անպատիւ,
զի ո՛չ էր զարդարեալ առաքինութեամբ ըզ-
ներքինն մարդն, և անդ Թքի: Այբե. 405:

ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ,

SAMUEL CAMERTCHATZORENSIS.

in the tenth Century.

Ասեմք ասացին, թէ Արտն ոչ էր սերմն առեալ, ոչ էր նմա փոյթ վասն սրբութեան աւուրցն։ Արդ էհ և էհ իսկ այսպէս իմանալ։ Արեւնէ զայս բերանն ոսկի Յովհան. Օր թէպէտև ոչ էր՝ ասէ, սերմն առեալ հոգւոյն, այլ անհնար էր զօրինօքն անցանել. այլ կաց մնաց զաւուրս քառասուն, և ապա գնաց Երուսաղէմ՝ի տաճարն ըստ Ասուածոյ Աւետարանին։ Օր որպէս թէպետ տեղեաւ, նոյնպէս և կուսիւ մարքն սրբութիւն պահեաց։ Իսկ՝ի քառասուն աւուր լինել սրբութեանն՝ որք զարուսն ծնանէին, և ութսուն՝ որք պէգսն, այս է պատճառ։ Ասանկի արուն յորովայնի մօրն՝ի քառասուն աւուրն կենդանանայր, իսկ էգն յութսուն. և արուն յառաջակողմն ըստ լերդին ջերմութեան յառաջ՝ի քառասուն օրն կենդանանայ, իսկ էգն՝ի ձախակողմն փայծաղանն կենդանանայ յութսուն աւուր։ Եւ օրէնքն պիւղծ համարէին զայն՝ որ՝ի մեռեալ մեքենայր. վասն այնորիկ՝ որչափ յորովայնի մօրն մեռեալ կայր արուն, կամ էգն, պիւղծ համարեալ լինէր մայրն։ Եւ՝ի ծնանելն՝ ըստ չափու աւուրցն զմեռեալն կրելոյ՝ սրբութիւն պարտ էր պահել։ Եւ

այս է ասել աւետարանին, թէ՝ իբրև լցան աւուրք սրբութեան նորա: Յաղագս պսակից Տէրունականաց:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, GREGORY NARECENSIS.

in the tenth Century.

Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարադրեցից ՚ի կատակ մեղաց. նաց մատենի այսր ողբերգութեան՝ ո՛վ անձն իմ թշուառ ամենապատկառ, և առ սպառսպասիս բանից անքարբառ. անպիտանդ ստուածոյ, և սրբոյն մանանակցութեան: Օ՛ի եթէ զլիճ մի ծովուց ՚ի յորակութիւն գեղոյ յեղեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ ՚ի տարածումն լայնութեան քարտէնի չափեցից, և զսուրակս յոքունց անտառաց չամիչից եղեգանց ՚ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից՝ և ո՛չ զթիւ մի ՚ի բարեբերոյն անօրինութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել: Այս զի՝ թէ զմայրս Իթանանու ՚ի մի լուծ կշռոց զօգեցից, և կամ զլեառն Պարատեան ՚ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից՝ ո՛չ հաւասարէ այնր հարթութեամբ համալուծակից լինի: Եսայ. Ե. 1:

Այն զի ծո՛վ է լինձ ծփանաց կենցաղոյս քերմունք՝ յոյժ նմանապոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ հոգիս ՚ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուա-

ծով լիբը ի նաւակի։ Որ Աստիաս մար-
գարէ զյանկարծադէպ կատարածն՝ որ ի
Պարսկականն հինից, Երուսաղէմի և Ա-
մարիայ կործանմանն՝ նմանութեամբ այսր
օրինակի կերպաւորեցոյց· որ և առ իմն
հոգևորական խորտակումն զուգաձայնել ինչ
ե սխալական։ Զանզի մինչդեռ չուէի ես
յանհոգութեան անտարակոյս վտահու-
թեամբ՝ դոյզն կասկած արկածից ի միտ
բերելով առ խտրոց փոքր միջոցին՝ որ ի
մէջ հանգստեան և աշխատութեանն, լիբ
այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի
բքաթեր հողմով ժամանեալ երեքալեանն
դիմակցութեամբ՝ ամբոխեաց զհանգարտու-
թիւնն։ Աստ նաւն ի բախմանէ վայրենի
ալեացն խորտակեցաւ, թևոցն ձեռնարկու-
թիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման ի
կայից իւրոց խլեցաւ; առաջաստին թուջա-
բան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ,
շինուածոյն շուք անզարդեցաւ, առաստանք
ձգողականացն խզեցաւ, տեսարան գլխոյն
դիտակի խոնարհեցաւ, սպասանդակին պա-
բան կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին
լուծաւ, լուծք ատուարք ամրոցին կցորդու-
թեան բաժանեցան, սամիք ուղղացոյն հե-
տոց գալարեցան, լաստ հնմանն հաստարար
նի ընկղմեցաւ, ղեկացոյն կառուցմունք ան-
դէն սուզան, չըուոյն յարմարութիւն պա-
կասեցան, ողնափայտին պատսպարան խա-
կոյն բեկաւ, կապարանք ղըստին հաստուած
ծոյ յօշատեցաւ, փոգք ամիսոխման ծոցոյն
կազմածոյ անարգեցան, խնդք շրթանցն ե-

զերաց խախտեալ ոստեաւ, պաղպաջունք քաղմականացն անկեալ բարձաւ, վանդակաւ պատին վայելչութիւն յատակեցաւ, գահաւորակին հանգստարանն շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք՝ ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղոյնք սնդմանբևեռացն քարշեցան։ Արգասիք իրին յիշատակարան ողբոց լինձ նմանեցաւ։ Սաւուղիկն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն՝ ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Հմարք սակաւ մնացուածոցն՝ ի ծայրից ծփմանց աղդելոյ ծովուն՝ լքեր խողխոջեալ բանաւոր, ողորմագին թախծանօք հնծէ։ Ո՞ան զի թէ զբարի նաւասիեան երկնասուրօքն զօրօք յաշխարհիս ծովու առ՝ ի զհորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս՝ առցէ աշխարել բանիս յարմարութիւն, ոչինչ վրիպեսցէ՝ ի ստուգութենէ։ Հանգի արդարև եւայ բարեգութն Տէր՝ յառակ մարդկութեանս՝ զթաղեալ աղգակիցն. եւայ առ նմին և զհրաստղեմ մոլեալ, և զիուդաս մոլեգնեալ. յորոց երկուցն կորեաւ վատահութիւն յօրինակ նմանութեան սղաւորեալ նաւի. իսկ միւսն հաւեալ յատակս անդնդոց՝ առաւսան յուսոյն ձեռամբ ունողին յանքոյթն արտաբերեաց խաղաղութիւն։ Հան. էճ. 2։

Հանգի և որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ բարուք թռուեցաւ, չար ասել ըզմանէ՝ առ չիմանալոյն պատճառի, և ես վըկայեմ իմով բանիւ. քանզի լքեր զանգգայ պատճառս անաանոց մեռանիմք՝ և ոչ զարհու-

լիմք · կորնչիմք՝ և ոչ հիանամք · թաղե-
ցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք · տարա-
գրիմք՝ և ոչ տագնապիմք · եղծանիմք՝ և
ոչ զղջանամք · մաշիմք՝ և ոչ մնատեմք ·
պակասիմք՝ և ոչ պատրաստիմք · գնամք՝ և
ոչ զգուշանամք · գերիմք՝ և ոչ ևս զգամք ։
Ոսկ հանգիստ ասել երջանկին Յովհաւ ըզ-
վախճան մնըդոյ, և ես խոստովանիմ զայն
ընդ Աբբոյն, եթէ ոչ ունի զբեռն աշ-
խատութեանն մահացու գործոց ըստանձ-
նեալ ։ Ա՝նասանդ զի՝ որոգայթն գաղտնի,
և հնարագիրն աներևակի · տարը ժամա-
նակիս յանկից, անցեալն անյայտ, և ապառ-
նին կարծողական · ես անհամբեր, և քնու-
թիւն թերահաւատ · ոսք անհաստատ, և
միտք ցնդեալք · կիրք հարկաւորք, և բարք
անժուժկալք · մարմին մեղսամակարդ, և
յօժարութիւն երկրասէր · դիմամարտու-
թիւն անկակից, և խառնուածիւն ներհա-
կական · քնակութիւն կաւեղէն, և անձ-
նիք ուժգնակիք · կարիք անթուելիք, և
պատահարք սաստկագնաց · միտք չարախոր-
համբ, և տենչմունք բարիատեացք · կեանք
առօրեայք, և զմեաղք սակաւաւորք · խաթ-
մունք յիմարութեան, և խաղալիք տղայա-
կանք · աշխատութիւնք ընդունայնք, և վայ-
ելմունք երազականք · համբարք ոչնչից, և
պահեստ հողմոյ · նմանութիւնք սուտե-
րայ, և կերպարանք ծխագելիք ։ Ա՝նգիւ
իբրև եկին եհաս պատուիրանն, ըստ Պաւղո-
սեան բանին, անպատրաստ գտեալ զիս ին-
քեան, մեղքն կենդանացան յանդիմանեալ

յարդարութեանցն, և ես մնհայցայ կե-
նայն, և կենդանացայ կորստեանն: Կո՛ղա-
ցան օտարք չարին գումարք՝ զստացուածս
սրտիս խմասոից, ըստ գրոյն կանխաբանու-
թեան: Կոո. ծե. 3-4:

Կ՚ստ հոլովման ընթացից ամանակաց յա-
ռաջ շարժութեան, որ ըստ լրատպատարն
նշուլագետն արտիաձաձանչ՝ լուսակիրն օրա-
կշիռն մղտափարատն ակնապարար՝ ականն
արևու՝ ստեղծականն արուսեկի, որ համ-
բարխ հոլովի կուտէ ամաց յոլովութիւն ՚ի
չափս դարուց՝ ընչասպառ և կենդանանո-
րոգ առուղեկան յաւիտենիս, ՚ի յաւար-
տումն կատարման լիներութեակ Յոբելինին,
՚ի սկիզբն պսակելոյ մոի տանեկին՝ Յաբե-
թականն տոհմիս տումարի. յետ երից ամաց
անցելոց՝ որ զկնի գալստեան ՚ի կայս և ՚ի
կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արևելից՝
յաղթող և մեծ Կայսերն Հռոմոց Կասլի,
յորժամ ընդարձակ և մակագաւթի կանո-
նաւ սիրտ տարածէր՝ լիասահման և անխըտ-
րոց ՚ի ստուարակարկառ կոթողս կարծր ար-
ձանաց՝ ՚ի ձգումն ձեռին՝ և յանխղճելի լարս
պարանոց երկարագունից՝ անթարթափ ՚ի
նոյն վերասլացեալ ՚ի յաջ և յահեակ՝ սեպ-
հականել յաւելուլ բաժինս մասանց վիճա-
կաց՝ խմբից աշխարհաց ՚ի ծոց իւր: Կ՚ըդ-
՚ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում
եղերեալ ընդոստնեցաւ թշնամիք Կկեղեց-
ւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգե-
ցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բար-
դեցի, կացուցի, ցուցի, հաստատեալով ՚ի

հրաշակերտութիւն միագոյ իրի՝ զբազմա-
սահմնեան նուագս դրութեան այսմ սուիերի
արգասաւորի, եւ Կրիգոր կրօնասուր քա-
հանայ, յետին Կանահիւսաց, և կրտսեր
Արժապետաց, գործակցութեամբ եղբօր
իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ Կա-
րնեցւոյ մեծափառ և բարձրապատիւ ուխտի
Անականի. որք իբրև զմի մարմնի բանա-
կան՝ ի յերկուց առ մի կերպարան շինելոյ
դիմաց կենցաղավարելով, ուշ միայն հարա-
զատք, այլ և միաշունչք միակրօնք համա
պատիւք զուգահաւանք, ի քառից աչաց՝
առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:
Որդ՝ հայցեմք ի Քրիստոսէ հայցամ սե-
զանոյ յոքնօրէն և անխորժահամ հանդեր-
ձելոյ՝ յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս
և ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սի-
րով ի միտս բարիս. որով և դուք եղիջիք
դրեալ ի մատեանս կենաց վերին դպրու-
թեան: Յիշատակարան Ապենիս դրութեան:

Այսպիսացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ
ի կանայս: Որ դժուարընտել դաստիարա-
կաւ խաչին վարժեալ կրթեցար, որդւոյ քոյ
կցորդակցութեամբ՝ միաւեւակն ժուժկա-
լութեամբ՝ կրելով զերաշխեպ վշտաց ծնն-
ցելոյդ ի քէն Տեառն, մշտաչարչարն մե-
ռելութեամբ անձնատուրդ տօթով խարու-
կեալ: Որբև զորոջ անարատ քահանայական
նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մա-
տեար՝ սաբաթոյս և ստեւագ իսակ գեղինա-
բարձ՝ մանբուր պատարագ: Ի ձգնաւորա-
կան վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ

հանդէս խոզխոզեալ։ Ա՛ման այսօրիկ ՚ի նըւէր քոյ զենման՝ հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ Ա՛ռաքելոցն գումար դասակցեալ՝ զմիայն արժանիդ պատուեալ դովելին սուրբ Ա՛ստուածածնին ։ ՚Ի Ներբող Կոսին ։

Ձրամանք ե աստուածասէր Թագաւորութեանդ, ոմ Տէր արքայ, բուռն և աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր, մեկնել զԱ՛րգ երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ Սողոմմնին ե հոգւով։ Ո՛չ եթէ Ա՛լիսացին Ա՛րիգոր, որ կատարեալ վարդապետ էր և հոգիաբնակ, ՚ի բուն կատարմանէ մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտաւնի, որչափ և առաւել ես, որ ամենայնիւ տգէտ եմ, և ունայն ՚ի հոգւոյն ընտրհաց՝ ոչ կարացից հետևել մտացն ասացելոց ՚ի Սողոմմնեան հոգւոյն ։ Ա՛նաւանդ զի չէ փոքր դատապարտութիւն և պատիժ՝ զբանս սրբոց գրոց օտար մեկնութեամբք աղաւաղեալ՝ վասն ոչ տգէտ երևելոյ, և փառամոլ հպարտութեամբ՝ զոչեն իբրև զՀնմանի ինտ ցուցանել ։ Այլ զի հրաման ունիմք հնազանդ լինել Թագաւորաց հրամանաց, յանդգնիմ ասել զիմ տկար մտացս ՚Հասողութիւնն. յուսացեալ ՚ի Ո՛գին սուրբ՝ զնորայն կատարելով հրաման, որ ասաց, Թե հպատակ կացէք Թագաւորաց ։ Ա՛րդ՝ նախ առաջին՝ խնդացն ընդ այս, որ այսպէս միտս երևեցուցեր առ ՚ի քննել զգիրս, և հոգ տանել ուսմանց, որ ե գուշակ երկիւղի Տեառն, և օտարանալոյ ՚ի սիրէ հոգւոց, և ՚ի վայրապար քննութեանց, և ՚ի մեղ-

սասէր բարուց : Ա՛ենոէնէան Արփոյ էրփոյն :

Օ՛ի որպէս յարեգակն սկիզբն՝ պակասումն ընձեռէ աչաց հայեցողին, նոյնպէս և աւելի քան զչափին յառել՛ի խորս գիտութեան Աստուծոյ՝ շլացումն մնաց աչացն բերէ. վասն զի որչափ էն Աստուած տեսութեամբ, և ըմբռնութեամբ, և պարզութեամբ, որ ո՛չ կարէ ոք հասանել. որ և Հրեշտակաց անհասանելի է, թո՛ղ թէ մարդկան : Արեւ. 131:

ԱՍՈՂԻԿ, ASOLICK.

in the tenth Century.

Ա՛յսպէս և բանիւ պատուեալ բանակութիւնք զինի գալստեան Յանկին մարմնով յաշխարհս՝ գրական տաւիղք պատմագրեցին զամուսնս և զժամանակս Թագաւորաց, և զամենայն գործեալսն՛ի ժամանակին արժանի յիշատակի : Որպէս և Ձէմարիտ Թուողն ժամանակաց Լուսեբի Պամիխիլիա՝ սկսեալ՛ի մարդն առաջին՝ յորժամ ելնա արտաքս՛ի վայրկէն վայելչութեան, աւարտաբանէ՛ի քսանեմեակն Յոսաննդիսնոսի մեծի Թագաւորի : Այս զինի նորա Մովրաթէս : Ա՛սաւ այլեւ անթիւք են՛ի մէջ Ցունաց պատմագիրք : Ապայ սոքա երկուքս՝ որպէս զլուսաւորեալ մեծամեծ, քան զաստեղս առաւելուն պայծառութեամբ : Ուստ ըստ Հայումն՝ նախ առաջին քաջն Աղաթանգեղոս, որ նորաքանչ հրաշից և չարչարանաց արբոյն Կրի-

գործի, և աստուածածանօթութեանս մերոյ
է պատմիչ: Այս գիրքս մեծն Մովսէս՝ հան-
գոյն Աւետեաց, որ Վերծողայն անուանի
հայր: Այս ասպա Աղիշէ վարդապետ՝ որ վասն
Ս. արդանաց, և սուրբ Վահանայիկին չար-
չարանաց և կատարման: Այս գիրքս Ղ. աղա-
րսու փարպեցոյ Հարստասանի պատմութիւն:
Այս Փաստոս, որ և Բիւզանդ: Այս պատ-
մութիւն Հերակլի՝ որ ի Սեբէոսէ Այսիս-
կոպոսէ ասացեալ: Այս պատմութիւն Ղ. Ե-
ւոնդ Արիցոյ՝ որ ինչ վասն Տաճկաց ելիցն,
և անցից Հայոց ի նոցին քառնութենէ:
Նուսկ յետոյ ի վերջին աւուրս պատմու-
թիւն Ե. ապհոյ Կաթողիկոսի, և Տեառն
Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի, որք առ
ժամանակօքն Հռոմոյ և Միպատոյ առաջին
թագաւորաց Հագրատունեաց: Արդ՝ յա-
մենեցունց ի սոցանէ՝ իբր ի լայնալիր մար-
գաց, և ի հովտային լերանց հաւաքեալ
ծաղիկս հրաշալի աչաց հայելոյ՝ գեղեցկա-
գոյն գունովքն, և անուշահամ հոտովքն՝
բերեալ ընծայ մատուցանեմ աստուածասէր
անձին, և հարցասիրական խորհրդոց քոց.
ի հարկեցուցանող հրամանէ քո ստիպելով,
ամենիմաստդ յիմաստունս՝ աստուածազարդ
և առաքինազարդ վայելչութեամբ գերա-
պատուեալ քան զբնաւս՝ Տէր Սարգիս: Արդ
սկիզբն արասցուք սկզբանն՝ յորում նախա
հայրն մեր եւ արտաքս ի դրախտէն: Պաշտ-
գեր. ա:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, GREGORY MAGISTER.

in the eleventh Century.

Այլ լուայ, եթէ Աստուծոյ փոխանդ մեր՝ առեալ է զեզ Քրիստոսէ, կամիմք թէ առաքէք զդա մեզ։ Ոչ անգի նախ պարտ է զԱբրահամեանսն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և զկնի այսր զՀռետորականն երիւք հանդիսիւքն անսղալ տրոհութեամբ, և ապա զԱհմանացն պարտունակել՝ և Պղատոնական և Քրիստոսելական։ Այլ դարձեալ Պիւթագորական կարգակնակերտութեանն քացորոշմանց և դատողութեանց։ Այսոսիկ քան զայսոսիկ կրթեցեալք՝ ներկուսս վերծանութեամբ զհին և զնոր Կտակարանս։ Այլ Առաջելավարժութիւնս ՚ի քազում և զանազան տեղիս զեղեալ, զոր քննութեամբ արտայայտել հաւանիմք։ Այլ ՚ի խոյզ ելանել Ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հաստուածոց Հոմերական և Պղատոնական նախասահմանին, և այլոցն քոլոր արհեստիցն և մատենից։ զի յամենայնի Աստուածերն խոստովան լիցի զգիտութիւն, և ուրացեալ զանգիտութիւն։ Մանաւանդ ըստ կարողութեան քառիցն արհեստից՝ Թուական, Երաժշտական, Երկրաչափական, Աստեղաբաշխական։ Այսոսիկ հետեւել քաւական է այս իսկ, եթէ Քրիստոսե-

լի հաւաքմունքդ այն է՝ որ ասացեալն է յա-
ղագս երկնային մարմնոյն, և գնդատեսու-
թեան երկրի, կամ յաղագս օրինադրութեան
կենցաղոյս. յորս յիշատակէ և զորակու-
թեանցն քակտումն, և զախտիցն բաժան-
մունսն՝ զոր անուանեն խորհրդական։ Ա-
ռաքեա՛ այդր զգա։ Ապա եթէ միայն պոր-
փիւռի առաստութիւնքն իցէ, քացորոշեալ
՚ի խնդրոց Վռիսաւորին՝ հնգից ստորոգու-
թեանցն, որք են այսոքիկ. Սեռ, Տեսակ,
Տարբերութիւն, Յատուկ, և Պատահումն.
կամ եթէ ուրիշն, որք են՝ Պիտաւորու-
թեանն, Պիտանացուն, Պատճառս մնակա-
պրութեան, Կարգն, Ի արդասպետական ե-
ղանակն, թէ սո՛ւ ինչ մնաց տարբերումն։
Կամ զիւրն Յոտգիրացոյն՝ Պօյացութիւն,
Որակ, Վանակ, Ընդինչ, Ուր, Երբ, Կալ,
Ունել, Ընդունել, Կրել։ Այսոքիկ ոչ են մեզ
ըղձալի՚ի հեռաստանէ զսոսա խնդրել, քան-
զի տրամադրութիւնքս այս վաղ ուրեմն պա-
տահեսցէ մեզ, միանչ տակաւին պատանեակ
եղելոյ։ Նակ եթէ ուրջսի՛ քան եղեալ՝ ոչ
խոնջանս վարկանել տակս տուփելոյն յաւէտ
այսպիսի ժողովմանց՝ որոց տեղեակ կաք զուք
՚ի Պարսկականէ աւուր, և յԱմայէլացւոցն,
և այժմ Յունաց անդանդաղ քառիցն ար-
հեստից հետևաբար մասին ինչ տեղեակ լի-
նել։ Վանզի յայսոսիկ կրթեալ զմեզ՝ վե-
հոգոյն վարկանելի անկողոպտելի և անծա-
րագոյն ըստանձնել քան զամենայն ինչ՝ որ
՚ի կենցաղումս ազնուագոյն։ Նակ եթէ զայ-
սոսիկ խոկացեա՝ միանչ տակաւին առոյգա-

ցեալ ես, և զնեռոս տրամիքս խոկաս կակղա-
յուցանել, յարիս այս օգտեսցիս պատուա-
սիրեալ, ի քարեաց զբաղեալ, հեզատեսակ
և առաքինագոյն մակացութեամբք զերծեալ
յեռամանակ տապոյ՝ անաշխատաբար այսո-
քիկ լինիս քեզ։ Վանզի և յսկզբանն իսկ
ամենագեղագոյն և տեսչալի տեսական փաս-
տականին իւրոյ յորդորմանէ յայսոսիկ վա-
րեցելոյ գեղեցիկ լինն մտածութիւն և ողջա-
խոհ մտածութիւն, գրէ և նախ քան զայ-
սոսիկ միով մատամբ Ձաշակելոցն այսու,
պատահեալ ի ամենայն կենցաղականացս
բարեաւ մնա ասացեալքն։ Նակ եթէ կըր-
թեալ էր քո յայսմ ստադին մրցանակի, և
վերծանեալ զյոգնախտութիւն հոյլս հանդիսա-
ցելոցն զայսոսիկ, և զպարկեշտութիւն նո-
ցա, և զառաքինատեսակ և ընտրագոյն քա-
նաստեղծութիւնն, և զկատարմունն, ոչ
միայն ըղձալի լինէր քեզ, այլև զբոլորս ախ-
տական և յածողական խնդրոյն արտաքոյ
մղեալ զքեզ՝ զկնի իւր ձգէ. զի ամենևին
անաշխատաբար ախտիցն ի արտալածիչ։ Ի
ընդունն աս- աղաչերպան ես՝ Նարսէղ ի Նդեսէ։

Համարձակութիւնք միշտ, սովորեալ յառաս-
ձիր պարգևս՝ զկարևորսն և զպիտանացուսն
յարտևական բաշխելով քեզ՝ որ ոչդ երբեք
դանգաղիս, զբիրս Նանանիայի Շ իրակայն-
ոյ, որ բազում աշխատութեամբ և յածա-
չու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և
յոքնաբեղուն մատենից։ Յորում և ենթա-
կայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք,
այլ բոլոր հակացն խոկմունս. որ են այժմ

’ի տան տէրունեան · զոր նախ քան զքեզ՝ խրճնացեալ և թափէ , ընդ գրուանաւ ծածկեին : Օ՜ որ և ինքն իսկ որ մատենագրեաց զայդոսիկ , յառաջնում խրոյ տրամաբանութեանն քաջում տարակուսանաս և կեղեր. քական սակս մերոյ աղգին անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս : Որում մի երեալք են տոգորք աստուածային , և ենթակայացեալ ամենայն արհեստք մակացութեան : Նա նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն՝ որք են ’ի տարորոշ քանակէ տարակացեալք : Նոսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեն՝ որք են ’ի շարունակ քանակէ : Նա զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք , և մակացութիւնք , մատենագրութիւնք · և գրէ եթէ ամենայն բոլոր վարժուն հռետորական : Նախ և մանաւանդ զիմաստասէրն զոր. ծէն գործասէր մեղուի ամբարեաց ’ի մեղուանոցի այդը ’ի բազմալեզ մատենագրաց Պաղեստացւոց և Յունաց և ամենայն ազգաց , առ ’ի ծանօթ լինելոյ որ նախ քան զայսոսիկ հաւաքեալն մատեանս , մակացութեղեալ իմաստասիրութեան : Պանզի որք ոչ նախասաւ կրթեալք են բոլորովին , ոչ պղտ հնար թեւակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս , քանզի պարտ է նախ ’ի բնականն յուսումնականն ամբառնալ , և անտուաստ յաստուածաբանականն : Պանզի որ այլազգ խորհեսցի , քաստ ասացելումն տրամախորհիլ ’ի վերայ Աղոմպիոսի դնել զՅետոս , և յայնը յարաբարդել զտեբևաշարժն

Ռիղոն, որպէս զի երկինն ձեմարան լիցի նո-
ցա. քանզի յոյժ տարախորհիցն և անտիական
մտածութեանցն է քաղձումն այս: Ոյան
որոյ և Պղատոն իսկ զդուշացուցանէ այս-
պէս յիւրումն Ստուածաբանութեանն՝
Ընդերկրաչափ ոք մի ներամտեսցէ. զայսո-
սիկ ասելով՝ զի մի ոք անկատար՝ ի քառիցն
էնթակայէ, մտոյէ՝ ի լսարանն: Վանզի բը-
նաւորեաւ էր հրաշալին այն, միայն աստ-
ուածաբանութեանն պարապել, և յայնոսիկ
զկրթեալսն հաստատել. ըստ օրէնն հիւսանց՝
որք արհեստին են մանկացուք. ոչ նախուստ
յանտառս կամ՝ ի մայրս ձեպեն հատանել
փայտս. քանզի այլ ոք են պարապեալ այ-
նոցիկ, և այլ ոք հարթեն և սղոցեն: և ա-
պա ծայրագոյնքն ձախարակօք և այլով գոր-
ծարանօք գերասանք զնոսա յարդարեն,
գահաւորակս, և աթոռս, և այլ ինչ գործա-
րանս: Յայսպէս և որք ոսկւոյն են պարա-
պեալք, և երկաթոյ, և պղնձոյ: Յետ արդ՝
քանզի սակս մատենին Նանիայի եղև յի-
շատակ իմաստասիրելոյս մերոյ, քէր, ոչինչ
խրթին և անյայտաբար կամիմք զհայցուածս
մեր ծանուցանել Ձերոյ Ուսաւորչիդ: Ի
քազմաց անփոյթ եղելոյ՝ այսպիսի գործա-
նութիւնք և հանդէսք, որք ոչ երբեք՝ ի
ստադին վարժելոյ գրամարտկոսաց և քեր-
թողաց հնացեալ՝ ի մուռացումն այսպիսւոյ
մատենի ոչ միայն եղև անկանել, այլև քաղ-
մաց. որպէս՝ ի մերոյն Ոսկեփոխ ուսեալ
գտաք, և յայդմ մատենի մանկագրութեան
վերծանեաք: Վանզի Նրաւեան սերի հը-

պարտուԹիւն, և անամօք քնուԹիւն, և խրա-
տապարանոց բարս՝ ոչ ստորակայի յայտնիկ
կրԹուԹիւնս յարատևական հաւանել։ Կամ
եԹէ ոչ փոյԹ՝ որք պետականին հասին բաղ-
դի, մեծարու լինել, և խուզել զնոհեմա-
կան արհեստս ՚ի զարդ քարգոնոսական ա-
պարանին՝ որպէս մեծն Պտղոմէոսն այն, և
որք այլք այդպիսիք։ Եւ զի բազում աշ-
խատուԹեամբ խոնջեալ, և տալնապեալ՝
մինչ տակաւին յիմնումն անտիականն եղեալ
տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ,
սուղ ինչ ետկացն հասեալ՝ ըստ որում են
Ա՚ղաբաքացւոց, և Ա՚ղաղէսացւոց, և Յու-
նաց, ոչ դանդաղեցայց քննուԹեամբ զփորձ
առնուլ։ Եւ խնդրեմք ՚ի քումմէ Ղուսա-
փայլուԹենէդ՝ զնորագոյնն մատեան Հնոր-
հել մեզ. զի այժմ մերձ ՚ի ծերուԹիւն հա-
սեալ եմք, և դիւրին վերծանեալ՝ հասցուք
ըստ կարողուԹեան. զի մի յերկոցունց կող-
մանցն ունկնդիմք մնրատակցուԹիւնս՝ տեսու-
Թեան, և մտածուԹեան. քանզի լուսով քով
տեսանելմք զլոյս։ Այսպա եԹէ՝ ոչ այսոքիկ
Հաձոյ Թուեսցին քումդ Ա՚ստուածպետա-
կան իշխանուԹեանդ՝ զկր և կամեսցիս, այն
իսկ յաստուածուստ պարգև համարեալ կ
մեզ։ ՚Ի նուաղնի սա Տէր Պետրոս Կաթողիկոս։

Ա՚ման զի ոչ եմք երբեք դադարեալ ՚ի
ԹարգմանուԹենէ և բազում մատեանս՝
զորս ոչ եմք գտեալ ՚ի մեր լեզուս։ Ո՚եր-
կուս մատեանսն Պղատոնի՝ զՏիմէոսի տրա-
մաբանուԹիւնն, և զՊեդոնէն. յորս քոլոր
Հաւան նախադիտականին այն պարփակեալ

կայ. և զայլս բազումն յիմաստասիրացն։ Ի-
րաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան
զտարեւոր տօնականս։ Կայց և գտեալ մեր
իսկ ՚ի Նայ լեզու գրեալ Աստուածմանչացն
զգիր Աղոմպիոդորոսի՝ զոր Պաւէթ յիշա-
տակէ. կարի յոյժ սքանչելի և հրաշալի
բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր ի-
մաստասիրական բանից։ Պտեալ եմ և զկա-
լիմաքոսի, և զՆդրոնիկեացն ՚ի Նայ լե-
զուս։ Կայց և զերկրաչափականն զՆւկլի-
դոսին սկսայ թարգմանել։ Եւ եթէ տա-
կաւին կամացի Ձեր երկարանալ մեզ ՚ի
կենցաղումս, բազում հոգս յանձին կա-
լեալ՝ զմնացեալսն բոլոր Յունաց և Յասո-
ւոց թարգմանել ոչ դանդաղեցայց։ Եւ
կարօտիմք քեզ մերձելոյ մեզ օգնականու-
թեամբ այսպիսումք իրողութեանց. ապա
թէ ոչ՝ աղօթիւք օգնեացես մեզ։ ՚Ի նուաղն
աս Ալբիոպեան Այրգիս։

Լուաք թէ եկն՝ պատճն պաղակ,
Ալ արգանասար՝ ըն պիսակ.
Պհիլերաքուն՝ Բոլզարաց,
Պսիտակաիսա՝ ըն գեօտրաս։
Ընյրարաղեան՝ ըն գագաթն,
Եւ Կոնդրայկն՝ ըն կատար.
Պատագրոս՝ ըն Պրակսիս,
Շէք գիշերեան՝ ըն Ձեմուղ։
Ընաւր առող՝ աւերող,
Ալ ատահամբաւ՝ Կիկողայ.
Ընդէ գինեաւ՝ գինուորեա,
Պսատագինեաւ՝ դուռ վառեա։

Ընթաքար՝ դուռ մըցեա,
Ի հանդիսի՝ ըզգատին.
Անեամարտիկ՝ ըն վառիս,
Որ մերկանդամ՝ մարտընչէը։
Փիղ՝ս արժանի՝ անկառի,
Կռեզ ի դիմի՝ հարկանի.
Ընդ անտառի՝ շիկորակ,
Կռեզ մարտընչէլ՝ հանդիպի։
Ընդ մի լարեա՝ դուռ պընդեա,
Օ լայնալիճ՝ հայրենին.
Օ երեքթևեան՝ ըն մըխեա,
Յառաջ մատիր՝ և քաղեա։
Ո՛հա քեզ Նելայն՝ հաս հանդէս,
Նա Ոդոգոմեան՝ ըն Հայկայ.
Ընձեռաբեա՝ և փուԹա,
Օ՛ի ես Կադմեան՝ ըզամեան։
Ընձ՝ Տրոսակը՝ ամեցին,
Ընձ հասին՝ քեզ Կաղդեայք.
Ընդ դու Տերամբ՝ ղօրացիր,
Նա Յիսուսիս՝ պարծեցիր։

Ընդ ամս ընԹերցիր զարհեստ Պատանեւորացդ։ Պիւցազնական է տաղդ՝ քաջ ողբեալ, և տաղ պղպղուն, օղուն, և գեղուն, եռակի վանգօք շարակայեալ. զի հոյծ, կատարուն, շարժուն։ Ընչ վիժեալ գծի, ոչ նուազեալ յօդի, ոչ փոփոխեալ տառին. կարեկցաբար ստ իս ձգելով զձայնակիցսն ստուգաբանութեամբ. և շարակացուցեալ շրԹելով՝ կամ ձողոպրելով։ Պի ընդղնա ան ան։

Օ՛ի՛րդ զմինչ ոմանք կասկածեն յիմաստ

նոց ձերոց, իբրու թէ թարգմանեալք ի
ձէնջ. զիարդ հզօրագոյն եւրոյ քան զմեզ։
Նմանք առ այնոսիկ, թէ այսոքիկ ոչ իրա-
ւացի տարակուսանս զտեղւոյն կացցի առաջի
մեր։ Վասնզի թարգմանեալք ի Պտղոմէո-
սէ՝ ոչ ի Յոյնս գտեալ էր զամենայն։ Որ-
պէս և Յոյնք Հայբրայեցւոց, և ի Վաղ-
դէացւոց, և Հայթովպացւոց։ Վասնզի առ
Յոյնս յուսումնականքն միայն յատուկ ե-
րաժշտականն քնաւորեցաւ, և զայլսն յայլ-
մէ թարգմանեալ և ժողովեալ։ Նոքա մերոյն
արիականն արանց, և առաքինասէրն իմաստ-
նոյն՝ Թուխ ինձ, եթէ յոյժ յաղթողք ե-
ղեալք աւենայն արհեստից և մակացու-
թեանց. որ վէհ ինձ նոցա հաւանիմ ելով
քան զյոդունայն շփոթաբանութեան ձերոյ
Նլենական կարծեցեալոցն։ Եւս այժմ յու-
յանէ ի նոցունց զպրութենէ մերս փանա-
զութիւնս առ ձերն վեհագոյն՝ որ այժմ եմ
(թերևս են) կարծեցեալք։ Ու Վերջոյ
Յոյն պոէր։

Նրեան ի հեթանոսքն, և խորտակեն զմեհեանին.
Ըզկուռց արմատ բառնան, ի յարմատոյ Աբաեմիդին.
Եւ զայլս Աբամազդայ, զԱիրոդիտային և զՀերակլին.
Զհերմէս և զԱպոլոն, և ըզկռօնոս կլեալ զորդին.
ԶԱմոն զեղիպտացին, և զԻհամեռ Աթենացին.
ԶԱրէս մարդախոշոշ, և զԱքելաս Հոմերոսին.
Զհեփեստոս գըտակն հրոյ, զեւր խեղ զանդամն ի
(դարբնոցին.
Եւ այլ բազումք են յանուանէ, չար սլաշտօնեայք
(կըռամոլին.
Կամ զծնունդքն Սեմեայ, ըզչանթօքըն ցանկացողին.
Ոմանց հուրըն բագին, աշակերտաց Զրադաշտին.

Ա՝յլոցն աստեղանի, Սաբէական քաղդէացին.
եւ այլքն հմայելով, հաւակնացաւ սև երամին.
Մկան երկրպագեալ, զագիան առեալ եդին բագին.
Կաղնի ծառ պաշտէին, կաղամախի ծուռնր ածէին.
Սօսոյ նուիրէին, և կենդանի անդ ղոհէին.
Ա՝յսոիսի մոլորէին, և խաւարեալ ալքամղձին.
Աբդ ղայս հանեալ քեցին, և Շչնաբիտ լոյս ծագեցին:

Յոհաննու:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ,

ARISTACES LASTIVERTENSIS.

in the eleventh Century.

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հռոմոյ՝ պատրաստեալ հուր նաւթիւ ծծըմբով, և արկեալ յամանն ապակեղէն, և նըստեալ ի վերայ ազնիւ երիվարի՝ քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն զթիկունս ամրացուցեալ, և ելեալ ընդ դուռն քաղաքին, մտանէ ի բանակն այլազգեացն՝ Պարսից աւտար ձայնելով զինքն. և երթեալ մինչև ի բաբանն, շուրջ անցեալ զնովաւ, և յանկարծակի ի վեր առեալ զչիչն՝ եհեղ ի վերայ բաբանացն. և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի ի դուրս ելանէր. և ինքն դաւնայր փութապէս: Պապ. գլ. ժդ:

Աբդ՝ վասն զի Յարանց (Ա՝րաց) ամոյ ի հանդիպեցաւ դնել զգիր Հաւատոյն Նահապետ Հրաւիրեաց ի տաճարդրդի սմի աթոռակալութեան Տեառն Յովհաննէսի Հայոց Կաթո-

ղնկոսի, որ էին. Թիւ էր Հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ, և ի նմ. ամի Յուստինոսի կայսեր ի հինգերկուքհարիւրմեծի եկեղեցւոյն սուրբ Սոփեայ, և ի նմ. ամի Կոստրոմոյ Պարսից արքային: Ընդ յայսմ տարւոջ յորում զմուսականն եդին ընկէզ ամ էր Ա. դամայ մինչև ի Հայ մուսականն. և ի ծննդենէն Քրիստի մինչև ի սրբոյն Գրիգորի են ի վերապէն ամք ՈՀԳ. որ լինի ի ծննդենէն Քրիստի մինչև ի Հայ մուսականն ամք ՇԾԹ: Յովհաննէս Սարկաւագ:

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՐՀԱՑԵՑԻ,

MATTHEUS URHAENSIS.

in the twelfth Century.

Ա՛յս յայնժամ եւեթ Պագրիկ յերեսաց Թագաւորին, և մեծաւ փառաւորութեամբ դնացին յաշխարհն Իւրեանց: Ա՛յս գայր խաղայր Պագրիկ շահն, և գայր հասանէր մինչև ի Կեսարիա քաղաք Կամրոյ. և որպէս էր յառաջագոյն զայրացեալ ընդ Յունաց, և արձակեցաւ ի վերայ Կեսրապօլտին կեսարու մեծաւ սրտմտութեամբ. որում ա՛նուն ասէին Սարկոս. վասն զի էր յոյժ հերձուածող և հայհոյիչ Քրիստոսի. Սարկոս Սարկոս. և այնչափ լրբեալ եղև անօրէնն Սարկոս, մինչև զիւր շանն անունն Քրիստն կոչէր: Ա՛յս յառաջ ժամանակաց գայս ամենայն լուեալ էր Պագրիկ արքայ Հայոց,

և էր յոյժ զայրացեալ յոյժ ցասմամբ. բայց
'ի մէջ Հռոմոց էր, ոչինչ կարէր առնել:
Այս էր Երուսաղէմն անուանի և մեծ և
ահարկու ամենայն տանն Հրէից, բայց
հայհոյիչ էր յոյժ ազգիս Հայոց, և ամենայն
շան Քրմին կոչէր. նաև այլ անպատմելի
սուգ էած Հայոց՝ յորժամ լուաւ, եթէ կա-
մի Թագաւորն զօրգիք Թագաւորացն Հո-
ռոմ կնքել: Այս ընդ որ գնայր Վաղիկ՝
ամենայն իջևանսն հրամայեաց ամենայն զօ-
րացն Հայոց խայտառակել զփառաւոր կա-
նայսն Հռոմոց. և այնիւ նախատեաց զնո-
սա: Զայն զի խորհեցաւ այլ ոչ մտանել
քնաւ 'ի Կոստանդնուպոլիս, այլ խորհեցաւ
գնալ առ Ջասլան Ուլտանն Պարսից, և
տիրանալ աթոռոյ Թագաւորութեան տանն
Հայոց. զի բազում անգամ կոչէր զՎաղիկ
Ուլտանն, և նա յաղագս քրիստոսական հա-
ւատոյ արգելեալ լինէր: Ոմն Վաղիկ յոր-
ժամ մերձ եղև առ Երուսաղէմն՝ կամե-
ցաւ զիջևանս առ նա առնել: Այս գնացին
Հուրիապետքն, և ասեն ընդ Երիսիկոսն
Յարկոս, եթէ Վաղիկ արքայ Հայոց առ
քեզ կամի իջևանել այսօր: Այս լուեալ Կիւռ
Յարկոս՝ և եղև ուրախ. և հրամայեաց
զարդարել զամենայն տունն իւր, և 'ի կա-
մայ և ոչ կամայ ելանէր ընդդէմ Վաղկայ
հանդերձ քահանայիւք, և մեծաւ փառաւո-
րութեամբ բերեալ իջեվանէր զնա 'ի տունն
իւր. և արար Յարկոպ ուրախութիւն մեծ:
Այց Վաղիկ կայր յոյժ զայրացեալ առ-
նայն զօրօքն. և երբև սկսաւ ուրախանալ

ընդ գինեաւն , յայնժամ սկսաւ ասել Պա-
դիկ ցԿիւռ Ա՝արկոսն , Եթէ լուեալ է իմ,
Եթէ քո շունն զօրաւոր կայ , և կամիմք տե-
սանել զնա : Նա գխոստացեալ Ա՝արկոսն, Թէ
կամի ուղել զնա իւր , և զանց արար զբա-
նիւն : Նա յորժամ կրկնեաց զբանն Պադիկ,
կոչեցին զշունն . և նա ոչ գայր . քանզի զա-
նուն ոչ համարձակեցան ձայնել զԱ՝րմէնն :
Նա ասէ Պադիկ . զիւր անուն ձայնեցէք
որ գայ : Նա յայնժամ Ա՝արկոս յաղթահա-
րեալ 'ի գինւոյն , և ձայն տուեալ շանն՝ ա-
սէր . Ա՝րմէն Ա՝րմէն : Նա եկեալ շունն
նմանեալ առիւծու , և տեսեալ Պադիկ՝ ա-
սէ . Ա՝րմէն կոչէ շունս այս . և ամաչեալ
յոյժ Ա՝արկոս ասէ . Ա՝նուն է , վասն այնր
ասեմք իւր Ա՝րմէն : Նա ասէր Պադիկ ,
այժմ տեսանեմք Թէ ո՛վ է մանուկ՝ Ա՝րմէն
Թէ Հռոմն : Նա մեծ քուրձ մի պատրաս-
տական ունէին , և ակնարկեաց Պադիկ ,
և յայնժամ հետևակքն պատեցին , և մե-
ծաւ աշխատութեամբ արկանէին զնա 'ի
քուրձն : Նա տեսեալ Կիւռ Ա՝արկոս, և գի-
տացեալ Եթէ զշունն կամին զհետ իւրեանց
տանիլ , սկսաւ բարկանալ և մեծամտել 'ի
վերայ պաշտօնէիցն : Նա ժպտեալ Պադիկ ,
և ձեռամբն արարեալ ապաստաւորացն , և
յայնժամ ընդ չորից կողմանցն պատեցին
զանօրէնն Ա՝արկոս . և պաշարեալ զնա , մեծ
բռնութեամբ և չարչարանօք արկանէին զնա
'ի քուրձն առ Ա՝րմէն կոչեցեալ շունն : Նա
յայնժամ ասէր Պադիկ . տեսանեմք Թէ
ո՛վ է զօրաւոր , մանուկն Թէ Հռոմ Ա՝եա-

ըսպօլևան : Եւ հրամայեաց Պագիկ սաստ-
կապէս ուժգին հարկանել զշուն : Եւ նո-
ցա զայրացեալ արձակէր ի վերայ Պարկո-
սի , և լափէր զնա առատապէս . և զմեծ մասն
աւուրն այնպէս հարկանէին շանն . և բար-
կութեամբ հեղոյր զարիւնն պիղծ՝ հերետի-
կոսին Պարկոսի . և ձայն ուժգին , և աղա-
ղակ բազում ելանէր ի Պարկոսէն : Եւ
այսպիսի օրինակաւս պատերազմ ահաւոր
կայր յատակ քրձին , և կրձտումն ատամանց
և հառաչումն սրտին ելանէր ի խորոց քըր-
ձէն : Եւ այսպէս չարեաւ սատակեցաւ չար
և պիղծ հայհոյիչն , և եղև կերակուր շանց :
Պապոլևան :

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԷՑ , SAMUEL PRIEST .

in the twelfth Century .

Յադամայ մինչև ցՔրհեղէղն գումարին
ամք բիւրք . ի Քրհեղէղէն յաշտարակն՝
ամք չիե . և անտի ցԱբրահամ՝ ամք ՆՀ .
և ի Քրհեղէղէն ցԱբրահամու ծնունդն՝ ամք
Ջխբ . և ի Աբրահամէ մինչև ի Մովսէս
յելան Այգիպտոսէ՝ ամք չե . և յելիցն մին-
չև ցԱաղոմին , և ցառաջին շինուածն տաճա-
րին՝ ամք ՆՃ . և յառաջին շինուածոյ տաճա-
րին յերկրորդ շինուածն՝ ամք չժա . և ան-
տի ի ծնունդն Քրիստի ամք՝ չՀը : Ամս շա-
բաթական լինի ամք բՃղը : Ի ծննդե-
նէն Քրիստոսի մինչև ի սուրբ Գրիգոր

ամք յԺբ. և անտի ՚ի Ա֊ուսականն ամք մին։ Պապոսէին։

Ա֊ստանօր լցեալ լինին ամք ՚ի ծննդենէն ՚Ի֊ռի շԾգ. յորում և բռնադակեցան կանոնք ի եկին Ա֊նդրէասայ. զորոյ զկնի կարգեցաւ Ա֊ուսականս Հայոց այսպիսի պատճառաւ։ ՚Ի լսման ի եկին լրուն Օ֊ատիկն ՚ի Ա֊արտ իբ էր, և յակղեանն Ա֊պրիլի ը. և վասն դի ոչ ՚ի սկիզբն կարացին գնալ, զի յետ իննն Ա֊արտին ժՁ էր Ա֊պրիլ, և Թ լսմունք ՚ի մէջ, և այնր աղագաւ սկսան շրջիլ տօնք ամենայն, և արհեստք իրողութեան՝ որպէս ասացաւ։ Ա֊պա խմաստուհք ժամանակին (Ա֊ռ Ա֊ովսէս կաթողիկոսիւ) ՚ի միասին եկեալ կարգեցին Ա֊ուսական Հայոց; որով ուղղեցին զՕ֊ատիկն Տեառն այլովքն հանդերձ. բայց ոչ կարացեալ ՚ի չշմարտութեան կալ անսղալ զամն Քի։ Ասկ ՚ի Ա֊ենդրոդ Թուականին Հայս անուն խմաստուն մնոք՝ ժողովեաց առ ինքն արս կորովամիտս և հանճարեղս, և կարգեցին զանտարակուսելի օրինակն՝ որ Ըեակն կոչի։ Ա֊յս է պատճառ Ա֊ուականին Հայոց. զոր ՚ի կարգ կանոնացս յարմարեսցուք վասն դիւրահասութեան ժամանակաց։ Ա֊ինչև ցդէմ Ա֊ուականս մնոյ ուղղեալ էր սուրբ վարդապետին խոյ Ա֊ենորգայ ըստ Ա֊լրոնիկոնին գնահանջն, և ասէ. Տեսի ՚ի Ըեկին զդէմ Ա֊ուականին առաջինն այն նահանջ. ոչ դիտեցուք զղխարդն, Թողուլ աստի և յառաջ ըստ գրեալն։

Ա֊կզ։

ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ, NIERSES CLAENSIS.

in the twelfth Century.

Ա՛յդ ըզբնութեամբ՝ զո հայր յերկին,
Օ՛ր մեզ ետուր՝ ընդհիւ զոյին,
Տո՛ւր ինձ կարդալ զոլորովին,
Ի սուրբ սրբոյն՝ զանուն նորին։
Ա՛ղաչութիւն՝ Տիրականին,
Պա՛տչէ տիրել՝ իմում անձին։
Եւ յերկրաւորս՝ առ իս լըցցին
Ամբք նորա՝ որպէս յերկին։
Օ՛ հաց առօրեայ՝ և զիշատ եղին,
Օ՛ մարմնոյս դարմանն՝ և ըզգաւնին,
Տացէ առատ՝ կարօտս անձին,
Օ՛ իմանալին՝ և զըզգալին։
Թո՛ղցէ զյանցանս՝ իմում պարտին,
Որպէս և եա՝ պարտապանին.
Ամ մանաւանդ՝ զի եղբկոսին,
Թո՛ղուլ տացէ՝ զի ինձ Թողցին։
Եւ մի՛ տացէ՝ Թոյլ փորձողին,
Փորձել ըզծոյլս՝ որպէս զարին.
Ա՛յլ պահեսցէ՝ ի սրոյ նորին,
Ինձ մարտիցէ՝ ընդդէմ չարին։
Ի Յ՚ որդէ։
Եւ որք ի բանս՝ Աստուածային,
Օ՛ր ընդհեցեր՝ յիմարս անձին,
Ի յընթեռնուլն՝ աշխատեսցին,
Եւ յաղօթել՝ ըն տաժանին,
Ընդհեա նոցա՝ զաղօթելին,
Ձատո ըզվարձս՝ աշխատողին։

Ես այս տուր աչացն՝ որ նայիցին,
Արաբեա զլեզուս՝ որք վերծանին։
Ձեռամբ՝ մնակագրողին,
Եւ ուղղապէս՝ փոխարկողին։
Եւ զիւր գոյիւք՝ ըստացողին,
Ասունք բարեաց՝ ի քէն առցին։

Նոր։

Ցանկանձելի՝ մարդկան լինիս,
Ոչ զվերոգրեալսդ՝ ի միտ ունիս։
Ո՛վ քեր Անուկ՝ զունկըն քո յիս,
Ուր և անսա՝ իմում բանիս.
Թաքուն լինիմ՝ բըլամամբ սըրտիս,
Ասուցանել՝ քեզ ըզբարիս։
Վերեա զուսումն՝ որով պատուիս,
Ի յերկնայնոցն՝ և ի յերկրիս.
Ընդանելի՝ և մեծ լինիս,
Ընթէ զերկեղ՝ Տեառն ուսանիս։
Որոյ ի բաց՝ չեր աշխարհիս,
Եւ յԱստուծոյ՝ սէրըն վառիս։
Ունձ լուր ուրեակ՝ հօր ի խրատիս,
Եւ յուսմանէ՝ մի ծուլասցիս։
Ընթէ ի յայս՝ սէր քորքոջիս,
Ընանց կենաց՝ ժառանգ լինիս։

Նոյպես Ասուածահաճոյ։

Եւ դու Հրոմ՝ Այր քաղաքաց,
Վերապայծառ՝ և պատուելի.
Եղծին աթոռ՝ ըզ Պետրոսի,
Ոդաքելոց՝ Ըրկեասուրի։
Ակնեղեցիդ՝ անշարժելի,
Ի Վեփայեան՝ շինեալ վիմի.
Ըրաց դժոխոց՝ անյաղթելի,
Եւ հինիք երկնից՝ ընդ քացողի։

Որթ վայելուչ՝ քաղմնաստեղեան ,
Նոր հաստարմատ՝ տունկ Պաւղոսի .
Ընդոգելով՝ արեամբ նորին ,
Որպէս ըզդրախտն՝ որ յԱդենի :
Ասին հասեալ՝ ըդ Պուհայի ,
Ստուածայինն՝ Յատենագրի .
Հա՛ առ քեզ՝ բանըս խօսիմ,
Ի լձակ ու աթոռ՝ ըս Յովաղէի :

Ընդ ի ստորին՝ կողմ աշխարհի ,
Որ խօսեցաք՝ ըս շատացի .
Նայց բանըս մեր՝ փոփոխեսցի ,
Յելս արևու՝ վերադարձցի :
Ընդ մեծըն Հայք՝ տուն Յովրգոմի ,
Ընդ և ծընունդ՝ ըն Յաբեթի .
Ընդ ուր աթոռ՝ Պարթևաստանց ,
Յաղաւորաց՝ Որշակունի :
Յորում էին՝ ի սահմանի ,
Յառաջագոյն՝ որպէս ասի .
Ի Վէդարէ՝ Թագաւորէ ,
Հոգունց չինեալ՝ ես լինելի .
Նաև նըմանն՝ գոլ վիճակի ,
Ընդաքելոյն՝ Յովաղէոսի .
Յորմէ բըխեալ՝ ծաղիկ քաղի ,
Նոր շառաւիղ՝ գաւազանի :
Գրիգորիոս՝ Պարթևազին ,
Լուսաւորիչն՝ այնմ աշխարհի .
Լուսաւորիչն՝ ըն Վրիստոսի ,
Նոր Մարտիրոս՝ ըն կենդանի .
Նոր արդ առքեզ՝ բանիս բերիմ,
Հայաստանեայցդ՝ եկեղեցի .

Յորում կաթեաց՝ շողն երկնային,
Ընդաղն հալեաց՝ ըզհիւսիսի։
Յոյն անըստուեր՝ ծաւալեցաւ,
Նէ ձառագայթն՝ անձառեալի.
Աստիկ եհար՝ ուռամբն ոսկի,
Զայնք հնչեցին՝ ստորինս երկրի.
Ընդ հրեշտակաց՝ ըն քաջմուխիւնք,
Յերկնից հեղան՝ ըստ հիւղեի.
Նէ մարդկային՝ ազգ երկրածին,
Ալ երասլացան՝ յեթերն երկնի։
Որ անապատն՝ էիր վայրի,
Նղեր նըմանն՝ փթթեաւ ծաղկի.
Նէ հուսական՝ արեամբ նեռկեալ,
Պայծառացար՝ 'ի գոյն վարդի։
Որդիս ծնար՝ յաւազանի,
Որ քան զաւազ՝ շատ է զծովի.
Դիեցուցեր կաթն՝ 'ի ստեներ,
Անուշեր արեամբ՝ ըն կենդանի։
Դաստիարակ՝ մանկանց քարւոյ,
Տալով զօրէնս՝ ըն Աստիսի.
Նէ կերակուր՝ կատարելոց,
Օաւետարան՝ ըն Քրիստոսի։
Յայնժամ էիր՝ երանելի,
Ընդ յոյս քնաւից՝ դու ցանկալի.
Երկնաւորացն՝ և երկրայնոց,
Նէ կենդանեաց՝ բոլոր սեռի։ — Ընդ։

Աղդ որ ծնանէք՝ խաչիս հանդէս՝ Քրիստոսական,
'Ի Գողգոթա՝ տեսէք ըզձէզ՝ 'ի պաշտամանն.
Ընդ ուր չիրիմն՝ էր Վախահօր՝ ըն հանգստեան,
Որ 'կանդնեցաւ՝ առեալ զխաչս՝ իւր գաւազան.
Քանզի փայտիւ՝ վիրաւորեալ՝ հինն այն Ադամ,
Անկեալ գնէր՝ 'ի յայն խշտին՝ տարտամութեան։

Ամէն. Բարյէր.

Ի՛մ եղական՝ գոլով բնութիւն՝ և սկզբնական,
Ճանեղէն՝ ձգեալ կամար՝ անզուգական.
Աղբեակեամ՝ զջուրսն վերին՝ և ներքնական,
Որպէս պատմէ՝ զնէն Մովսէս՝ Աստուածաբան։
Եւ եմ միջոց՝ ընդ անմարմինն՝ և մարմնական,
Ունիմ առնս՝ յերկուց բնութեանց՝ ըն յատկական.
Ըստ անմարմնոց՝ զոչ՛ի ձեռաց՝ շօշափական,
Եւ ըստ մարմնոց՝ գոլով աչաց՝ տեսողական։
Միտասարեր՝ եմ միւգդին՝ համանման,
Հինգերորդ՝ ծածկոյթ քառից՝ որոց ծնան.
Անքանակ եմ՝ և չափից՝ անչափական,
Այլ և թզաւ՝ միով չափիմ՝ թէ ոչ մարդկան։
Պարունող եմ՝ անըզդայնոց՝ և զգայական,
Պարունակիմ՝ յայլմէ Վէհէ անտեսական.
Բոլորակ եմ՝ կիսագունդ՝ որպէս խորան,
Բնութեամբ կայուն՝ անձամբ շարժուն՝ անկայական։
Հինն և աւարտ՝ եմ գոյութեանց՝ այս նիւթական,
Անդունդք՛ի խոր, բարձունք՛ի վեր՝ միմչ վերանամ.
Ո՛չ ոճն անդունդք՝ ոմրն բարձունք՝ անիմոխական,
Զի չեմ կայուն՝ և միշտ՛ի նոյն՝ այլ շրջական։
Այլ որ անդունդք՝ նոյն և բարձունք՝ են վերնական,
Եւ որ բարձունք՝ նոյն և անդունդք՝ են ստորնական.
Շարժիմ յաւէտ՝ թուչիմ արագ՝ անսահական,
՛ի շարժմանէ՝ թարթել ակամբ՝ մի չկայանամ։

՛ե Տաղն Երկնից։

Ա՛յլ՛ի բնութիւն՝ անտանելի,
Եւ ոչ աղօտ՝ միտըք ձգտի.
Ո՛չ մարդկային՝ մաքրագունից,
Ո՛չ երկնայնոց՝ սեռին վեհից։
Օ՛ի եթէ կ՛՝ գոլ հաւատամք,
Ո՛այց թէ զի՛նչ է՝ անգիտանամք.
՛ի յառաջինն՝ իմաստ փութամք,
Ո՛չ յերկրորդէն՝ յոյժ վերջանամք։

Որք յառաւել՝ ըն նկրտին,
Ա՛ւ ի նուազ՝ ըն տկարանան.
Նա որք չափով՝ վերսաբերին,
Զեր քան ըզչափ՝ ըն վերանան։

Խոսրով։

Օ՛ի հրահանգից՝ ալ արժարանի,
Ցեմ տակաւին՝ նեղկուռ լանի.
Յաղեճնական՝ ըն քաղաքի,
Օ՛ անձն իմաստիւք՝ ոչ կրթեցի։
Ուր Ի սարան՝ պղատոնի,
Նա չափ ոտիք՝ Հոմերոսնի.
Ուր ստորոգողն՝ Արիստոտէլ,
Տասըն քանիւ՝ գրողն էի։
Ուր հոյլք ամէն՝ Էլեատորի,
Յողովարան՝ Պարտասանի.
Ներհմտութիւն՝ վերականի,
Հայի քերթուամ՝ ըն վերծողի։
Օ՛որըս գիտէ՝ նախ պատշաճի,
Նա աստ ասպա՝ ձեռնարկելի։

Յոհաննէս. ալ Իպասան. նախնեաց։

Ա՛րեգահին արդար՝ զհուր սիրոյ ծագեալ,
զանհաւատութեան՝ տառըն մեղաց հալեալ։
Նանաւար ծառոյ՝ երևեցան ծաղիկք, երփնազարդ գունով՝ անուշահոտ բուրմամբ։
Պարուն հաւատոյ՝ դալարացոյց զհոգիս, զօսացեալ տնկոյ՝ կանաչացան տաղարթք։
Պրախտին Ա՛դինայ՝ ծառք բազմացան յերկիր, ի տանն Ա՛ստուծոյ՝ արմաւենիք տըն-կեալք։
Նրկինց լուսաւորքն՝ իջեալ շրջին ընդ մեզ, և աստեղք ալոյծառք՝ համաբնակիցք մարդկան։

Օ օրք անմարմնականք՝ զուարճացեալ տօ-
նեն, մարմնաւոր զօրաց՝ համադասեալ նո-
ցունց։ Տաղ ամենայն Սբոց։

Ամենաձարեղ՝ ընտրեալ է,
Յարքայից՝ հրեղօրաց՝ զարմ է.
Ի՛եղ պարգև՝ ի տանէն՝ Յ աստինէ,
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Ահաւորդ՝ ուղևոր՝ երկնընթաց,
Որինաց՝ Երկնայնոյն՝ խորազգեաց.
Լուացեալ՝ զանձն և զփառս՝ Այրենեաց,
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Մաստուն՝ սուրբ Կուսան՝ գերյարգոյ,
Ընդ Կանին՝ ի յերկիր՝ արկելոյ,
Ո՛ առեցեր՝ ըզլապտեր՝ Ադաստոյ.
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Թեսային՝ Քրիստոսի՝ մարմնացեալ,
Ընդ նասակ՝ կուսութեամբ՝ հարմնացեալ,
Յառագաստ՝ անմահտոյց՝ բազմեցեալ.
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Ակրամնուհք՝ Ակրամարգ՝ սքանչելի,
Երբաթիայլ՝ ոսկեթել՝ տարփալի,
Ադասասակ՝ խաղագլուխ՝ ցանկալի.
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Ասկաձեմ՝ Ազաւնի՝ օդասպար,
Որ Նոյեան՝ տապանն է՝ քոյդ դաղար.
Ձասպան՝ Ադրագիլ՝ դու արդար.
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։
Տաւուր՝ Արտերոս՝ մըրցական,
Ասկան՝ Կանին՝ Ադր՝ զօրութեան,
Խակոխ՝ քաջութեամբ՝ ըզհրձան.
Ընդ ելիսեմ՝ հրաշագեղ՝ Ադիփսիմ։

Լ՝ պունեղ՝ թաթաւեալ՝ ՚ի քոսոր,
Պաղարթուն՝ կարմրորակ՝ իբր խընձոր,
Յարան աչիւ՝ դու արեամբ քոզաւոր.
Ընդրեշտակ՝ հրաշագեղ՝ Յովիսիմէ։
Տաղ Յոհէփեմեայ։

Յանիւք դուզնաքեայ լինի խօսելով ՚ի լսելիս խոհեմագունիդ և աստուածասիրի անձին՝ յաղագս մերոյ հաւատոյ, և կարգաց եկեղեցւոյ՝ հարցմանցն որ ՚ի ձէնջ, տալով պատասխանի։ Լ՚ւ քանզի խօսեցեալն իմաստք շրթամբք՝ ոչ է քնաւորեալ ՚ի շտեմարանս յիշողականին մնալ անծախապէս՝ զմուտացուածիւնն ունելով հակառակ, վասն որոյ խնդրեք գրով արձանացուցանել զնոյնն յաղագս անաղօտ մնալոյ առ ձեզ յիշատակ բանիցն՝ որ ՚ի մէնջ։ Օ՚ր և տացուք սիրողաբար՝ սիրողիդ դիմաստուԹիւն՝ ըստ տիմար գիտուԹեան մերոյ, և տկարուԹեան, և ժամուս փուԹոյ՝ համառօտ և յայտնի բանիւ. տակայն զբովանդակն պարագրելով հաւատոյ մեր ճշմարտուԹիւն, և զեկեղեցւոյ մեր կարգաւորուԹիւն՝ ՚ի Տարցն սրբոց աւանդից ընկալեալ։ Ա՚ւղ ա՚ա Լ՚ղէա՚ կայսը։

Ա՚յ մերդ իմաստուԹեան ստեանց ընկալաք զցօղ կաԹին՝ տղայական մտաց մեր յարբուսին՝ փոքր բանիւ, և մեծագոյն իմաստուԹեամբ պարունակեալ ընդ գրով։ Օ՚ր արբեալ՝ զմայլեցաք ուրախուԹեամբ, որպէս և գինեաւ Տոգւոյն ՚ի վերնատունն. և յիշելով դուզնաքեայ այսու ճաշակմամբ զերբեմն մայրենի դրկացդ գգուանսն սիրոյ, և զիսիկուԹեան կերակուրս իմաստից Տոգ-

ւոց իւղոյ և մեղու՝ զոր բղխեր աւետեաց երկիրդ՝ վերին աշխարհին տիպ, խանդա-
ղատեցաւ որ ի մեզ տիրականիս մնան՝ յիւ-
շողական զօրութիւն, զնոյն առ ի յագուն
դարձեալ փափագելով ստանալ ձնշակ ըղ-
ւարթութեան, և քաղցրութեան. որպէս
երբեմն յայսոսիկ իրս լինելով Մաւթի՝ ա-
սէր առ Աստուած. Ինչեցի ես զաւուրսն
զառաջինն. յայտ է՝ զի զԱստուածատուն
Հրախտին զվայելս, և զանտիրական ոգ-
ւոց փափկութիւնսն: Նմին մեր ըստ նմին յի-
շելով զտուեալն յԱստուծոյ խաղաղութիւն
Նկեղեցւոյ յաւուրս Խարյն մերոց սրբոց՝
ըղձանամք զնոյն վերստին տեսանել և կրել.
մինչ մի հոգի հեղեալ էր յամենեսին ի վե-
րուստ, և ոչ յայլևայլս քաժանեալ յօտա-
րոտի հոգւոց մնլորութեանց. ոմն ասելով
Պաւղոսի, և ոմն Պետրոսի, կամ Ապիայի,
կամ այլ ուրուք ի պաշտօնէից. այլ Քրիս-
տոսի ամենեքեան: Այսոսիկ ողջախոհու-
թեան զոց՝ որ ի մեզ փոքու նշուլիւք վա-
ռումն, բորբոքեաց աստուածային քանից
ձեր հովւորական հոգի՝ որպէս դարբնա-
կան փքովք զկայծակունս արծարծանելով՝
ի գործ պատրաստեն ենթակային իրի լի-
նել պիտանացու: Ուրուք և մերս կամք և
յօժարութիւն՝ ոչ խիստ և անգործ, և ոչ
առ ի յոյժ տաժանումն հնարագիտաց ար-
հեստին, այլ դիւրալուր և հաւանական ձըշ-
մարտութեանն քանի ի ձեմարտասիրաց.
ըստ կուսին երկրորդի ունկնդրութեան քա-
ւոյն՝ յորմէ կեանք, և ոչ ըստ կուսին ա-

ռաջնոյ հաւանութեան չարին՝ որով մահ։ Վասնզի սիրելի էր մեր այս խաղաղութիւն՝ի մանկութենէ. որոյ և հասանել ըղձանայաք, մանաւանդ՝ յորժամ տեսանէաք, ՚ի պատահել միմեանց ձեր և մերս իմաստնոց՝ ոչ արտաքոյ ուղղափառաց Աստուածպետացն խօսելով երկաքանչիւր կողմանցն զբանան. որոց պիտանացու էր միայն զօդ կատարմանն, սէրն՝ մայրն խաղաղութեան. այլ ոչ ձարտարութիւն բանից՝ ունայնացուցիչ խաչին Քրիստոսի՝ ըստ Պաւղեայ։ Այլ զայս մեծագոյն էր, և Աստուածային գործ՝ ամբարեալ պահէր յատաջատեսութիւնն Աստուծոյ ձերում արժանաւոր Պօղութեանդ։ Որ և ծանոյց իսկ գրաւորական ձեր բան՝ բազմապատիկս ունելով գովեստ խաղաղութեան յաստուածայնոցն բանից։ Որոյ և բացեալ առ լսողութիւն Քումդ ձարտարի զականջս սրտից՝ ընկալաք յոգիս, ՚ի նոյն իսկ գործարանի Քագուցեալ զբանս ձեր՝ յոր և Պաւղէթ զԱստուածայինն։ Վանզի գիտեմք ես իմաստնոց՝ զի ՀՀմարիտ խաղաղութեանն ոչինչ ես զուգահաւասար յերից բարեաց։ Պասն որոյ և աւանդեաւն եկեղեցւոյ պատուիրան՝ զվերինն քարոզել միշտ հայցել յԱստուծոյ, տալ զխաղաղութիւն երկնային։ Որ սոյն յայտ առնէ և Տէրունական՝ որ յաղագս աղօթից բան, գալ Արքայութեանն Աստուծոյ ՚ի մեզ. որ ես տիրապէս խաղաղութիւն. և լինել հաճութեան կամաց նորա յերկրաւորքս՝ որպէս և յերկնայինսն. յորս ես քնաւորեալ ընդ

քիւրուց քարեացն ունակութեանց՝ և սիրոյ և խաղաղութեան պտուղ, որ ե յաւէտ և անփոփոխելի։ Ողորմի աստուած Պարթևաց Յունաց։

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, NIERSES LAMPRONENSIS.

in the twelfth Century.

Եւ զայս խանդակաթ սիրովն ընդ մեռանիս ի Ճանապարհին՝ հասին մերձ ի Կեթանիա։ Յայնժամ համբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա. և անդէն փութապէս մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս։ Նակ նոքա սրտաթափ յուսակտուր խոնարհեալ, զերկիրը համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնութեանն, յարուցեալ փութապէս, և երագ պշուցեալ՝ նայէին ընդ երկինս ի յերթալն նորա։ Եւ ձայնէին առ միմեանս. զինչ էր պատահմունս, ոչպէս ընդ յայտնեն զորպիսութիւն փառաց իւրոց՝ գտաւ փախաքելին ի մինչ վերացեալ։ Քրև զմի օր համարեալ է մեզ ժամանակին՝ յորս տգէտ տութեամբ շրջեցաք ընդ նմա. ահա եկն օրն՝ յորս ցանկամք տեսանել մի յաւուրց քոց, ով որդի Աստուծոյ և մարդոյ, և ոչ տեսանեմք թշուառականս աշակերտաքս։ Եւ ապա յիշեալ ոմն զգեղոյն վայելչութիւն՝ յոգւոց ելանէր։ Եւ յոմն զանհիցն քաղցրութիւն, և լինքն ընդ անձին իւրում ոգորէր։ Իւան զչարչարանսն՝ զոր կրեաց անմարտ, և ի յիշատակ նորին հեծեծէր։ Ոմն

զչուեիլն ընդ երկինս՝ աղօտ ակնարկեալ՝ ձեռամբ մատուցեալ ընկերին իւրում ցուցանէր ։ Եւ որչափ նա բարձրացեալ՝ ի քացեայ ի ստորնայնոցս լինէր, սոցա յաձկիւռս եղեալ ի նկատեն՝ աղետ սիրոյն տոչորէր ։ Եւ զի երբ փափաքանացն ընդ մարդկային հնարս արտաքս ելանէր, միայն զանթարթափ պչնուչն աչաց՝ իւրաքանչիւր ոք սփոփանս անձին համարէր ։ Նոքա մնան լքեալ քանէր ի տեսութենէն, յորժամ ընկերն վերատին զնոյն նմա նշանակեալ ցուցանէր, որպէս յանմահութիւն ուրախութեամբն փոխէր ։ Ոմն այլ ոք ձկտեալ կորովի բբօք ընդ չուեալ նորա նշմարէր, ամենեցուն աչք ընդ նմին յուսով յուղերձէր ։ Վասղոր էր նոցա պչնուչն ընդ երկինս ընդ երկար ժամանակ, քանզ ոչ ամպն ի ստորև մնացեալ՝ զգերը ի վերոյ ելեալն ծածկէր ։ Ի Շուտն Չամբաջեան ։

Օ ի որք երկիւ և այսօր արք Վաղխեացիք զուեհիկք և չինականք՝ ահա ասեն, իբրև զնմանատուն Հելլենացիս Հարտարաբանեն. և այլք ի Վարձևահան տարաշխարհիկ բարբառս նոցա պատասխանեն ։ Վետրոս՝ որ ի Կափառնաում մնեալ, լսեմք՝ զի ընդ Հռոմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ ։ Եւ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդա Վաղխեացւոց, Բրաբացւոց բարբառովն զիաօսս իւր յօդէ ։ Յովհաննէս՝ որ ի Կազարէթ մնեալ, զհայրդ Կիլիկեցւոց ձայնիւն զմեզ հարցանէ ։ Եւ Յովմասու սոքա լսեն՝ որ Անթովպացւոց լեզու զբանս Կարգարէից

յիշեցուցանէ : Ովադէոսն այն տխմար՝ տեսէք , ո՛րքան վայելուչ Աստծոյ Հայոց բառիւքն զբանս նուր յօդէ : Եւ Նարդողիմէոս մնանուկ՝ իբր թէ ՚ի Նարս ծնեալ, զնոյնն խօսեն հնչեցուցանէ : Ա՛վ սքանչելեացս . ՚ի զանազան դաւառս ծնաք , և աշխատու- թեամբ ՚ի բարբառս նոցին վարժեցաք , և սկա՛յ սոքին՝ որք ոչ տեսին զայն քաղաքս , անաշխատ զնոցին ձայնս հնչեն : Աստծ է ասեն՝ արուեստ սքանչելեացս . և թէ առ- ինչ ունի աւարտել , ոչ կարեմք նկատել : ՚Ի Նա՛ռն Հոգեգալստեան :

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ, SERGIUS DOCTOR,

in the twelfth Century.

Եւ այսպիսիքս ոչ միայն ՚ի գրոցն զըր- կեալ գտանին ՚ի դիտութենէ , այլև այլոց ՚ի նոյն պարապելոց դառն դատաւորք և հա- ւաստի քննիչ բանից և բառից լինին , ոչ յօ- դուտն հայելով, այլ զկարգ բանիցն դիտե- լով : Որք եթէ սղագունիցն հանդիպիցին բանից , զերկայնն և զբազմաբանն ՚ի գո- վութիւն առնուն . և թէ երկայնագունիցն լինին լսող , և որ օրինակօքն է լցեալ , ըզ- նուազն բարւոք վարկանին և զօրաւոր : Ա՚յսմանապէս յորժամ պարզ բառից հանդի- պին , և ձկնորսացն խօսից , զնուրբն և ըզ- մնանուածոյն և զբազմաբանդակին գովեն : Եւ դարձեալ ընդդէմ նմին՝ զդիւրալուրն

և զառանց խորը բառիցն յարդեն և մեծա-
բեն ։ Ի Ներսէսեան Ընդոց Ալեքսանդրեայց ։

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ, IGNACE DOCTOR.

in the twelfth Century.

Ինուլ զայս իմաստ Աստուածային քո
ըզձից պարտ համարեցայ՝ ոմն Վրիպորիոս,
քահանայապետական գլուխ, և սիւն հաս-
տատութեան Եկեղեցւոյ ։ — Վասն՝ ու-
նիմք առ այս և զհակառակորդացն զբանս,
որ ոչ սակաւս տան ամբոխումն խորհրդոցն՝
որ ի մեզ, շարժման ։ Վանզի և նոցա առ
ամենայն բան զնեբհակն մերձ դնել ։ Եթէ
երկայնագունիկ հանդիպին բանից, գովեն
իրօրս հաստանել և անցանել ։ Եթէ սուղ
ինչ բանն, իբրու ոչ պարունակող զնմաստս,
և ոչ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսա-
ւեալ լինի ։ Ընդաձեալ առ այս՝ եթէ նրբա-
գոյնս ինչ ունիցի, զպարզն առաջի դնեն իբ-
րև դիւրահասս, վասն այնորիկ և օգտա-
կարս ։ Ապա եթէ պարզագոյն ինչ, գովե-
լի և նոցա իմաստասիրացն եղանակ բանից
իբրև զօրաւորս և արուեստականս ։ Ըստ՝
այսչափ և նոցա դատեն. ոչ վասն առաջի-
կայ իրին, այլ միայն՝ զի ընտրողս և ձանա-
չողս ցուցեալ լինիցին ։ Վակ մեզ զի լինի
զանձինս անըմբռնելի ունել ի նոցա կար-
ծեացն, որքան ունիմք ուղղել՝ զմիջինն այ-
սոցիկ տեսութեանց ընտրեսցուք զբանն. ոչ
յոյժ ամիոփել, և ոչ կարի երկայնել ։

Կարձեալ՝ մի՛ ի ծածկելն փութալ, սակայն ի գեղջկացն հեռագոյնս դնել նուաստ բանից: Եւ յաղագս այսոցիկ այսչափ: Ի վերինոսն Եւթպրանին Ոսկասու:

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, GREGORY DOCTOR.

in the twelfth Century.

Եւ ոչ միայն յայսպիսի հրաշազան և զարմանագործ տեսութենէ (արարածոց) իմաստասէր հայեցողքն զՍտուածոյ փառաւորեն, այլև յայնց տեսութեանց՝ որ յոլովից ձեւի թէ պատճառք ջարի են. զի որ ընդմարմնոյ ական՝ և զհոգւոյն աչս քաց ունին, յայնցանէ՝ յորոց կուրացեալքն հոգւով ՚ի նմանին, նոքա մեծամեծ շահին: Այսու նմանութեան բժշկաց, որ բազում անգամ՚ի վնասակարայն՝ զօգտակար դեղն առնուն. որպէս յօձից առնուն զլուծիչս թունից նորա, և յայլ մահացու դեղոց՝ զաւտակչական զօրութիւնս: Եւ եթէ ախորժէք, յեղեզոց ՚ի գրչոց իրաց ստուգեցից զասացեալս: Վանզի սոսնիկ ումն հռչակելի գեղեցկութեամբ Այնտիոք քաղաքի՝ անուն Պեղագիա, որ ոչ միայն ՚ի քաղաքին, այլև յամենայն աշխարհն մերձակայ՝ տարածեալ էր համբաւ գեղոյ նորա. որ և յամենայն կողմանց վաճառոտ երիտասարդք գային առ նա: ՙԱյս յաւուր միւսմ եկեալ ՚ի քաղանեաց՝ և զգեցեալ քեհեզս և ծիրանիս, և զարդարեալ ոսկւով և քարամբք պատուականօք

զդ լուխն և զլանջն և զպարանոց ; և գրե-
լէ զամենայն մասունս մարմնոյն . և սկսու-
լեամբ աչացն , և 'ի սպիտակէ և 'ի կարմ-
րոյ զայտսն . և օծեալ անուշահոտ իւղով՝
պայր անցանէր լկտի կերպարանօք ընդ մէջ
քաղաքին՝ 'ի բազմաց յայնոսիկ հեշտացելոց
սպասաւորեալ : Ասէ Ստեփանոս ոմն՝ Ստեփա-
անուն նստեր եկեղեցականօքն հանդերձ 'ի
սրահ եկեղեցւոյն՝ ընդ որ անցանէր պոռ-
նիկն . յորմէ բազումք յողջախոհ ժառանգ-
աւորացն զարձուցանէին զդէմն 'ի տեսուլ
լենէն : Ասէ սուրբ Ստեփանոսն՝ յայր սկսու-
ցեալ հայհոյել ընդ նա . մինչ զի և բազումք
'ի տեսողացն՝ 'ի միտս իւրեանց բամբասէին
զնա, եթէ ընդ երկար նայի ընդ գեղ պոռն-
կին : Ասէ նա յանկարծակի յարուտասուս ցըն-
դեալ՝ լայր դառնապէս . իսկ մերձակայքն
որք բամբասէին զհայեցուածս նորա՝ մա-
տուցեալ հարցանէին , եթէ զինչ էր պըշ-
նուէն ընդ գեղ պոռնկին , և զինչ ողբումն :
Ասէ նա տակաւին արտասուելով պատաս-
խաներ : Ա՛յ լինձ ո՛րդեակք . վասն զի տեսի
զկինն զայն՝ զի ամենայն հնարիւք , այլապէս
և զանազան զարդուք զարդարեալ էր զինքն՝
որչափ և էր կարողութիւն . և այն վասն
մոլեկան և մեղաւոր երիտասարդացն՝ զի
նոցա հաճոյ երևեսցի , և զախտաւոր ցան-
կութիւնն նոցա շարժեսցէ 'ի տափուն կին-
քեան : Ասէ ես երկնաւոր փեսային Քրիս-
տոսի՝ որ վասն անձառ սիրոյն իւ-
րոյ որ յիս՝ յանբաւ բարձրութենէ գերակայ
փառացն խոնարհեցաւ յիմ գաղշութիւնս ,

և խաչիւ և արեամբ պնեաց ՚ի ծառայու-
թենէ մեղաց ; և սրբաբար աւազանաւն լը-
ւաց , և հոգւովն ընտրհօք զարդարեաց , և
զգեղեցկացուցիչ պատուիրանս իւր ետ և
ուսոյց , եթէ զիա՛րդ նոքօք օրըստօրէ զար-
դարեցից զամենայն մասունս հոգւոյ և մարմ
նոյ իմոյ , որո՛վ անձառելի սիրով նա յիս ըը-
նակեսցէ , և ես ՚ի նմա : Նոկ ես ըստ առա-
կողին՝ ՚ի փսխածն անդրէն դարձայ , և ընդ-
տիղին թաւալեցայ՝ յորմէ լուացայ . և զընտր-
հին զարդարանսն որ ՚ի նմանէ առի , մեղօք
աղտեղացուցի . և ո՛չ փութայայ վերստին
ապաշխարութեան ջրով լուանալ զանձն իմ ,
և պատուիրանին պահպանութեամբ զար-
դարել՝ զի հաճոյ գտայց երկնաւոր փեսայ-
ին , որ սիրեացն զիս , և զանձն իւր ՚ի մահ
մատնեաց վասն իմ . և կամ՝ զի ես ո՛չ այն-
քան ցանկամ հաճոյանալ Աստուծոյ , որ-
քան նա աշխարհի , և կամացն սատանայի :
Նա լուեալ զայս՝ զարմացան ընդ արթնու-
թիւն մտաց նորա , և ընդ անախտութիւն
հոգւոյն , և փառաւորեցին զԱստուած :
Տեսանե՞ս ահա , զի փոյթքն և արթունքն՝
և ՚ի հնաոսկարացն չահին . քայց ծոյլքն և
մեղկքն՝ բաղում անգամ ՚ի նմանին և յօգտա-
կարացն : Նոյն վասն ուղիղ հաւատոյ :

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, MEKITAR GOSH,

in the twelfth Century,

Ի մէջ անկոց խորհուրդ եղև՝ թէ ահա արժան է թագաւորել ի վերայ մեր. և ոմանց ասացեալ զարմանքին՝ թէ քարձր է հասակաւ, և քաղցր է պատուիք: Ասէ որ թոյ հակառակեալ՝ ասէ. Ես եմ ուրախասրտին, ինձ արժան է լինել: Ասէ թզենի՝ թէ ես՝ զի քաղցրաձաշակ եմ: Ասէ դժնիկ՝ թէ ես հարկանող եմ, ինձ ի դէպ է: Եւ առաւելութեամբ իւրաքանչիւր զանձն յարդէր, և անկարօտ ասէր այլոց: Ասէ արմնւենի խոկացեալ դիտաց՝ եթէ ոչ հաւանին նոցա թագաւորել, զի զայլս ընդ իւրեանց ոչ կամէին ձոխանալ, և ասաց՝ թէ յաւէտ ինձ վայել է լինել արքայ. և ամենեքին վըկայեցին և ասեն. քարձր ես հասակաւ, և քաղցր ուղտով. բայց երկու ինչ պակաս է քեզ, զի յաւուրս մեր ոչ տաս պտուղ, և ի շինուած ոչ պատշաձիս. մանաւանդ զի քարձրութեամբ քո՝ անձաշակ բաղմոց լինիս: Եւ նա պատասխանեաց, թէ զձեզ իշխանս կարգելով այնպէս թագաւորեմ. և ի կատարեալ ժամանակացն իմոց՝ և որդւոց ձերոց թագաւորեցից: Եւ յօրինեաց զկարգ թագաւորութեանն՝ յանձն առնելով նոցա զորթ՝ գինեպաե, և զթզենի՝ հինպատոս, զդժնիկ՝ դահձապետ, և զնռնենի՝ բժշկա-

պետ, և զայլսն ի պաղոց ի դարմանս։ Ըղձ-
մնայրսն՝ ի չինուածս, զանտառս՝ յայրուսին,
զմրեհնի՝ ի բանտ, և զիւրաքանչիւր յիւրա-
քանչիւր գործ։ - Յանդիման կացուցանէ
առաքս, թէ ոչ ոք կարէ Հոխանալ առանց
անփառից, և ոչ բարձրանալ առանց անար-
ժից։ Եւ դարձեալ՝ առ ձեռն պարզևօք
ակն ունին անագան յուսոյ բազումք տերանց
իւրեանց։ Ի Պէրս Նոսկոյ։ Է։

Անագաւոր ոմն եռես տեսիլ, զի իբրև
զանձրև իջանէր աղուէս. և քարոզ հրամայ-
եաց կարդալ, եթէ ոք զնմա մեկնեսցէ տե-
սիլ, հազար տաց դահեկան։ Եւ լուեալ
այր ոմն աղքատ, և երթեալ՝ ասէ, եթէ
երիս աւուրս տացես ինձ ներումն, և յայտ-
նեցից քեզ։ Եւ ելեալ յանապատ՝ շրջէր
խոկալով։ Եւ էր անդ վիշապ. և եռես
զայրն տարակուսեալ. ասէ, զինչ ինձ տա-
ցես, եթէ զտեսիլն յայտնեցից քեզ զձա-
գաւորին։ Եւ նա ասէ. զոր ինչ խոստացաւ
Թագաւորն, կէսն քեզ եղիցի։ Ասէ վի-
շապն, երթ և ասա, թէ ժամանակ է այ-
սուհետև, զի մարդիկ նենգաւորք եղիցին
և խաբեբայք՝ իբրև զաղուէս։ Եւ երթեալ
ասաց. և հաճոյ թուեցաւ ասացեալն, զի
նման այնմ էին և մարդիկն։ Եւ եռ գՀա-
զար խոստացեալ դահեկանն. և այրն սր-
տեաց վիշապին, և ոչ դարձաւ անդրէն առ
նա։ Եւ զկնի դարձեալ՝ այլ եռես տեսիլ,
զի իբրև զանձրև իջանէր ոչխար. և Հրա-
մայեաց կոչել զայրն, զի նման աւաջնոյն
մեկնեսցէ։ Եւ նորա զինոյն լանդրեալ նե-

րուսին՝ և ամենչեր իբրև զապերախտ երթալ առ վիշապն։ Եւ գնաց զանձն պարտաւոր բերով՝ ասէ, մեղայ քեզ. յայտնեա զերկրորդս, և տաց քեզ զառաջինն և զերկրորդս։ Եւ մեկնեաց նմա, ոչ յիշելով զյանցուսին. և ասէ. երթ և ասա, թէ ժամանակ գայ, և եկեալ է՝ զի մարդիկ իբրև զոչխարս սպարզամիտք լիցեն։ Եւ երթեալ՝ մեկնեաց. և այնմ հաւանեալ՝ ետ նմա հազար ևս դահեկան։ Եւ առեալ առն՝ տարաւ վիշապին՝ ընդ առաջին և ընդ վերջինն՝ հազար դահեկան։ Ո՛կնի այնորիկ՝ դարձեալ այլ ևս ետես տեսիլ, և ահա իբրև զանձրև ինչ ներ սուսեր. և հրամայեաց դարձեալ զայրն կոչել, զի և զայն ևս մեկնեսցէ։ Եւ առն զնոյն խնդրեալ ժամանակ, և երթեալ առ վիշապն. և նա առժամայն մեկնեալ իբրև բարեկամի՝ ասէ. երթ և ասա, թէ ժամանակ է՝ զի մարդիկ յարիցեն քառնաւորք և սուսերաւորք։ Եւ եկեալ պատմեաց թագաւորին, և էառ զհազար դահեկանն։ Եւ էլ գնաց առ վիշապն. և ասէ 'ի մտի՝ թէ ընդէր այժմ թողից վիշապիս զհազար դահեկանս, և կամ զինչ հարիւր այլ ևս քերից. այլ հարից զվիշապս, և սատակեցից։ Եւ ջանաց հարկանել զվիշապն, և ոչ յաջողեցաւ նմա, զի խոյս ետ նմա վիշապն. Եւ այրն զղջացեալ՝ և խորհէր, թէ չարիս գործեցի. զի թէ այլ ևս հարկ հասանիցէ, ուրպէս եկից առ սա։ Եւ տեսեալ վիշապին զայրն սարջացեալ՝ ասաց նմա. այր գո՛ւ՝ մի՛ տրտմիր, զի ո՛չ յանձնէ ինչ արարեր, այլ

'ի բերման ժամնանակէ. զի ստելն քո՝ 'ի կեղծաւորաց ժամանակն, և ղղջանալն, և տալն զհատար դահեկանն՝ 'ի միամտաց ժամանակն, և հարկանելն զիս՝ 'ի բռնաւորաց ժամանակն: Եւ ահ ձ:

Երեմեան եւ՝ 'ի թագաւորէն կենդանեաց ցամաքայնոց՝ գալ առ նա ամենեցուն. և անյապաղ ամենեցուն ժողովեալ՝ եկին: Եւ ահ քարաձաւէ և մղեզ և խլուրդ՝ եկին և նոքա առնուլ պարգեւս. զի այնորիկ աղաւաւ կոչէր, զի ըստ իւրաքանչիւրոյն պատուիրէ: Եւ ծաղը ամենեքեան առնէին. և մեծարեաց զամենեսեան ըստ կարգի իւրեանց: Եւհարց և զնոսա, եթէ զի՞նչ սպաս լինէ ունիցիք, զի պատիւ լինէն առջիք: Եւ արսեթաւէ և մղեզ առեն. քարամուտեմք, 'ի բերդս թշնամեաց Ցեառնդ մերոյ մտանեմք, թէ յաղթել ոչ կարեմք՝ զօրս անդ հանեմք. իսկ խլուրդ ասաց, թէ 'ի քաղաքս մտանեմք՝ ականն հատանելով: Եւ այսմ հաւանեալ՝ պատուեաց և զնոսա զքաւմահեալսն 'ի բազմաց: Եւ ահ ձթ:

Օձոյն մրջեան՝ արջ փորկր, և լեզուաւ ժողովէր և ուտէր: Եւ հնարի մրջինն ստւտակել զնա. երթեալ առ պիծակ, և գոռեխ, և մեխ, և շանաձանձ, և բրիտ, և առ նմանք սոցին՝ և աղաչէ օգնել իւր աղգայինք: Յաւակցեն. հարկանեն զաչս և զլսեվիս արջուն: Եւ հարկանէ գլուխս գքաւրի, և նեխի, և որդունք ևս ծնանին. և՝ի սաստկութենէ ցաւոց զբերան քացեալ՝ գոչէր: Եւ նոցա մնալ յորովայնն՝ խոցոտին

զալևան. և նեղեալ՝ գիմէ ՚ի Հոսանս ջրոյ. և անչափ ՚ի ներքս մտեալ՝ հեղձանի։ Ասակ ՃԾԲ։

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, VARDANUS DOCTOR.

in the thirteenth Century.

Ասուրքն Աեսրոպ յօրիներ զպարսկերէն Հայերէն։ Պատանեերկու գիր առ Պատնիէլի Ասորոյ գտեալ ՚ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն Յոյն, և Ասորի, և Պարսիկ գրով շատացեալք։ Եւ Աեսրոպ ոչ կարեր նոքօք փոխել զԱստուածաշունչ գիրս ՚ի Հայ բարբառն. վասն որոյ աղօթից տուեալ զանձն՝ գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած չորեքտասան գիրս՝ աջով իւրով գրոշմեալ առաքի նորա, որպէս և մեծին Մովսէսի ՚ի լեառն Սինայ, և սմա ՚ի լեառն Գալուսայ. որպէս տակաւին ցուցանի գրոշմն Աստուածապիծ վիմին, և նկարք գրերուն. և պատուի տեղին խնկովք և ջահիւք միշտ ՚ի Տաճկաց, և ՚ի Քրիստոնէից քանակեալց տեղւոյն։ Եւ զի լեալ է գիր հին Հայկազեանց Հայերէն, ՚ի ժամանակս Լևոնի արքայի զի գտաւ գրամ՚ի Կիլիկիա Հայերէն գրով գրոշմեալ զանուանն կառավարչաց Թադաւորաց Հայկազանց։ Որոց զԹերութիւնն էվից նորս մեր Ագրաս՝ ասաց

ուածախառն ընդհօք լցեալ, նորոգիչ նո-
րոյս Իսրայելի, և կարգաւորիչ: Պատմո-
ղին Հայոց:

ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԻ, JOHN ERZENGANSIS.

in the fourteenth Century.

Պերապատիւ և դերահռչակ Հայրն մեր
ըստ հոգւոյ, և երկրորդ Ուսաւորիչ տուբք
Այկեղեցւոյ, ի զարմէ և ի ընտրեն սրբոյն
Գրիգորի փայլեալ՝ կորովամիտ և համեղա-
բան Աթոռակիսն Հայոց՝ Տէր Յերսէս
Ալայեցի, աշխատեալ վերլուծութեամբ ի
սկիզբն սրբոյ Աւետարանիս՝ գեղեցիկ և
հանճարեղ բանիւ, և դադարեալ վարդա-
պետութիւն նորա ի մուտս վարդապետու-
թեան Գրիգորի Հայոց վայրի. ոչ գիտեմ՝
եթէ այր աղագաւ եղև խափանեալ: Ա-
սեն որոյ՝ Հոյժ ի վարանս մտեալ տագնապիմ:
Ո՛վ թէ նա ի խնդրոյ եղբօր իւրոյ՝ Գրի-
գորի վերադիտողի Հայրապետական աթո-
ռոյն, գրեաց զմեկնութիւնն՝ որպէս պատ-
մի ի սկիզբն նախերգութեան նորին, և
ինքն իսկ յետոյ յաջորդեաց զաթոռ Աթո-
ղիկոսութեան սմա եօթն, ապա ընդդէմ ե-
ղև Գերի մնացեալ Աստուածայինն գործոյս
այսորիկ գործառնութիւն: Ո՛ւ Հոյժ հե-
տաքրքիր եղեալ՝ ի ստոյգ պատճառէ հաս-
մանն վերապեցի: Ո՛անզի ոմանք զմիտն ա-
սացին խափանումն. և այլք զհոգ Հայրա-
պետական աթոռոյն. և ակն եթէ՝ գրեաց,

և չէ ՚ի միջի : Այլ զոքա ինձ ոչ եղեն հա-
ւանելի : Այլ թէպէտ ոմանք նախ քան զմեզ
ձեռնարկեցին գրեալ ՚ի վերայ շարադրու-
թեան նորին , սակայն ոչ էր կարգաւոր՝ որ-
պէս Աբգոյն . այլ՝ հատակոտոր արարեալ
զբանս առաջինն Եկնչաց . նաև զննաբա-
նութիւն Աւետարանին արտաքս մերժեալ .
ուստի ո՛չ գայր դիւրաւ յիմացումն ընթեր-
ցողացն : Յաղագս որոյ ես նուաստս ՚ի
Վրկիատոս , և յետինս յորդիս Սիոնի՝ ապի-
կար ոգիս Յովհան Երզնկացի՝ սպասաւոր
բանի , բնակեալ ՚ի վիճակ սուրբ Առաքե-
լոյն Թադէոսի՝ ՚ի վանս Նործորու կոչե-
ցեալ , ընդ հովանեաւ սուրբ Աստուածած-
նիս . այլև ժողովեալ առ մեզ բանասէր ան-
ձինք ՚ի յուսումն կրթութեան Աստուածա-
շունչ տառից լսելութեան . յորոց յորդոր-
մանէ , և ՚ի փափաքելի ինդրոյ՝ եդեալ ՚ի
մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբ-
բոյ Աւետարանին Մատթէի՝ ընդոլով զթե-
րի նորին ըստ կարողութեան իմում , շա-
հեալ և օգտեալ յառաջինն Աբգոյն : Այլ ի՛
զի՝ ՚ի ծագմանէ նշուլից ընորհաց վերոա-
սացեալ առնն Աստուծոյ ՚ի միտս ունէր , դի-
տութք տեսութիւնս սիրատածութս յանցնիւր
տեղի . խառնելով զնսեմամտեսակ բանիցս
ազգութիւն՝ ընդ չքնաղագիտ և լուսա-
տեսակ իմաստից պայծառութիւն : Այս ա-
ւանդեցաք Մեր մերոյ Սիոնի փարթամու-
թիւն , և որդւոցն նորին անխոնջ վաստա-
կասիրաց՝ ՚ի հրճուանս հոգևոր խրատնու-
թեան , միանդամայն և յառաւոտութիւն մը-

տաց և բանի. յաւելուած վարկանելով զգ-
տաժանութիւն կաթի քրտանցս մերոց՝ առ ըն-
դարձակութիւն անդնդական խորոց լսմնու-
թեան. գիտելով՝ եթէ Պաւղոսի ընդհկ
վարձս ըստ անկելոյն, և Պետրոսի ըստ ո-
ւղելոյն: Մաս որոյ աղաչեմ զՔրստուա-
ծաբան ընթերցողդ, և զկայելողդ այս
փոքրատեսիլ և ընչին նուիրաց ընծայի՝ որ
ի սուրբ Նկեղեցի. վստահութեանս մե-
րում՝ ներողս լինել. և զսխալանս մեր՝ որ
աստ, ի բառս և ի տեսութիւնս, հարա-
զատ սիրով ուղղել: Ոչանգի քնաւորեալ կ
սէր զբազմութիւն եղբօր յանցանաց ծածկել. և զաշխատանս երկանց մերոց՝ ձեր օգ-
տելոյն քաւել. և զմեզ հանդերձ մերովքն
ծնողօք հոգևորօք և մարմնաւորօք՝ ի Ջե-
րուսէի բարիսն յիշատակել: Եւ արդ՝ եղև
գրութիւն սորա ի թիւ Մարդեղութեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հա-
զար երեք հարիւր և վեշտասան. որոյ զօ-
րութեամբն քաւեն հարցուք զբանիս: Յո-
ւոյաբան Մէին. Մոռնէ:

INDEX

	Page.
Grammar	1.
Alphabet	2.
Syllable	4.
Familiar Abbreviations	5.
Word	6.
Noun	6.
Declension	12.
Adjective	23.
Middle Nouns	24.
Pronoun	30.
Verb	47.
Participle	52.
Conjugations of the Verbs	57.
Conjugations of the Irregular Verbs	79.
Verbs Impersonal	95.
Preposition	97.
Adverb	102.
Conjunction	112.
Interjection	114.
Syntax	115.
Accents	136.
Punctuation	137.
The letters usud as the Numbers	138.
A Collection of Substantives	139.
A Collection of Verbs	165.
Exercises in the Armenian Language	175.
Select Pieces from the Armenian Writers	213.

		ERRATA,	CORRECTA.
Page.	*Line.*		
5.	9.	in stead	instead
9.	13.	an Abbes	an Abbess
10.	2.	percieved	perceived
44.	25.	‘ן־מקוץ	‘ן־מקוֹ .
81.	4.	thou putst	thou put'st
203.	23.	the royal of	the royal city of

Due Date

8 SEP. 1961

Digitized with financial assistance from the
Government of Maharashtra
on 21 October, 2015